

«Հայաստանի Հանրապետության և Վրաստանի
Հանրապետության սահմանային անցակետերով
անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի
հիմնախնդիրների վերլուծություն»
ծրագրի արդյունքներն

ԱՄՓՈՓՈՂ ԶԵԿՈՒՅՑ

Ծրագրի ղեկավար՝ Արմեն Հարությունի Եսոյան

«Հարկ վճարողների և գործարարների
իրավունքների պաշտպանության»
հասարակական կազմակերպության
նախագահ

ԵՐԵՎԱՆ 2010

**Ծրագիրն իրագործվել է «Հարկ վճարողների և
գործարարների իրավունքների պաշտպանության»
հասարակական կազմակերպության կողմից՝
ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի աջակցությամբ:**

Հետազոտության մեջ ամփոփված տեսակետները, մեկնաբանություններն ու
եզրակացությունները կարող են չհամընկնել ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ Երևանյան
գրասենյակի տեսակետներին:

ISBN 973-92-9235-864-8

Բովանդակություն

Նախաբան. Ծրագրի համառոտ նկարագիր.....	4
Բաժին 1. Սահմանային անցակետով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի իրավական հիմքերը՝ իրավունքը	10
1.1. Սահմանային անցակետերով անձանց, ապրանքների ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ տեղաշարժի հիմնական սկզբունքները.....	10
1.2. Հայկական գործոնը Հայաստանի և Վրաստանի սահմանով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի իրավունքի հիմքում	14
Բաժին 2. Սահմանային անցակետերով անձանց և ապրանքների տեղաշարժի հսկողության և պրակտիկայի վերլուծություն	19
2.1 Հայաստանի և Վրաստանի միջև պետական սահմանը. ազատ տեղաշարժի տեսանկյունից ՀՀ պետական սահմանի կառավարման որոշ դիտարկումներ.....	19
2.2. ՀՀ քաղաքացու անձնագիրը և սահմանային անցակետում անձնագրային հսկողությունը	36
2.3. Սահմանային անցակետերով ապրանքների տեղաշարժի և դրա հետ կապված ընթացակարգերի դիտարկումներ	42
Բաժին 3. Սահմանային անցակետերով անձանց, ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման ժամանակ վեր հանված խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկներն ու ծանապարհները.....	70
3.1. Նկատառումներ սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդիրների վերաբերյալ.....	70
3.2. Եզրահանգումներ և առաջարկություններ	76

Նախաբան

Ի՞նչ է ՀՀ պետական սահմանը, ինչպիսի՞նք հարաբերություններ են առկա Հայաստան-Վրաստան պետական սահմանի գծում, ի՞նչ կարևորություն ունի սահմանը հատելու, ազատորեն տեղաշարժվելու իրավունքը. բազմաթիվ են այս և նմանօրինակ հարցերը, որոնք ծագում են այն ժամանակ, երբ փորձում ենք հասկանալ Հայաստան-Վրաստան սահմանի կառավարման պահպանության հետ կապված հարցերի առանձնահատկությունները: ԽՍՀՄ փլուզումից հետո անցել է շուրջ քսան տարի, և օր օրի տեղի են ունենում սոցիալ-տնտեսական, քաղաքական, իրավական փոփոխություններ, որոնք կարծես թե մի դեպքում տանում են դեպի ազատ ժողովրդավարություն, մեկ այլ դեպքում՝ ավելի են շատանում անձանց իրավունքների սահմանափակումները: Նկատենք, որ աշխարհը մեր օրերում չի հանդուրժում փակ սահմանների և մեկուսացված տնտեսությունների առկայությունը, և անձանց ու ապրանքների՝ հարևան պետություններով տեղաշարժի անհամաչափ սահմանափակումները ժամանակավորեալ են:

Հայաստան և Վրաստան պետությունների դարավոր հարևանությունը հիմնված է եղել երկու երկրների ժողովուրդների բարիդրացիական հարաբերությունների վրա, և այն շարունակվում է մինչ օրս: ՀՀ Սահմանադրությունը հռչակում է, որ ՀՀ արտաքին քաղաքականությունն իրականացվում է բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ հաստատելու նպատակով¹:

Հիշյալ սկզբունքներով ձևավորելով հարաբերություններ նաև Վրաստանի հետ և ղեկավարվելով երկու պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքով՝ անհրաժեշտություն է առաջացել հստակեցնելու երկու պետությունների միջև պետական սահմանը, և միաժամանակ յուրաքանչյուր կողմ իր երկրի ներքին ազգային, տնտեսական անվտանգության սահմաններում տարբեր իրավական կարգավորումներով ամրագրել է սահմանը հատելու՝ անձանց կողմից տեղաշարժի և ապրանքներ տեղափոխելու կարգ, որոնք, կարծում ենք, անձանց իրավունքների իրացման համար երբեմն ստեղծում են խնդիրներ:

Սահմանի կառավարումն իրականացնող պետական մարմինների հիմնական լիազորությունն է ապահովել պատշաճ վերահսկողություն պետական սահմանով անձանց և ապրանքների² տեղաշարժի, սահմանը հատելու և դրանց պահպանության հետ կապված ընթացակարգերի նկատմամբ: Անհրաժեշտ է նկատել,

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 9:

² Չնայած այն հանգամանքին, որ ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի ա/ ենթակետը սահմանում է «ապրանք» հասկացությունը, ըստ որի՝ ապրանքներ են համարվում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող բոլոր տեսակի առարկաներն ու իրերը, այլ գույքը, այդ թվում՝ արժույթը, արժույթային արժեքները, էլեկտրական, ջերմային և այլ տեսակի էներգիան, փոխադրամիջոցները, բացառությամբ նույն հոդվածի բ/ կետով նախատեսված տրանսպորտային միջոցների, իսկ բ/ կետը ամրագրում է տրանսպորտային միջոցի սահմանումը, սակայն մենք սույն աշխատության մեջ «ապրանքներ» հասկացության տակ կներկայացնենք նաև տրանսպորտային միջոցները՝ նկատի ունենալով, որ ազատ տեղաշարժի իրավունքի մասին խոսելիս դրանց տարանջատումը գրեթե գործնական կիրառական նշանակություն չունի: Նույն հոդվածով ամրագրվում է նաև «ՀՀ մաքսային սահմանով ապրանքների տեղափոխում» հասկացությունը, ըստ որի՝ տեղափոխում է համարվում ապրանքների և տրանսպորտային միջոցների ներսերումը ՀՀ մաքսային տարածք կամ դուրսհանումն այդ տարածքից՝ ներառյալ միջազգային փոստային առաքումները, խողովակաշարերով և էլեկտրահաղորդման գծերով փոխադրումները:

որ պետական սահմանով անձանց և ապրանքների տեղաշարժը պետք է կատարվի՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված կարգը:

Անձանց և ապրանքների հայ-վրացական սահմանի հայկական կողմի անցակետերով տեղաշարժվելու հարցերը՝ կարգը, պայմանները, ամրագրված են ՀՀ օրենսդրությամբ, ըստ որի՝ ազատ տեղաշարժի իրավունքի իրացման գործընթացի՝ ընթացակարգի կարևորությունն անհնար է բացառել և կասկածի տակ դնել նրա այժմեական արդիականությունը, մինչդեռ դրա վրա է հիմնված Հայաստան-Վրաստան սահմանը հատելու, սահմանով ապրանքներ տեղափոխելու, պետական և տնտեսական անվտանգությունն ապահովելու ամբողջական ինստիտուտը:

Համաշխարհային և տարածաշրջանային տնտեսական և քաղաքական զարգացումները Հայաստանին գերծ չեն պահում նոր փոփոխություններից, և անհրաժեշտություն է առաջանում ամրագրել պետական սահմանի կառավարման և արտաքին տնտեսական քաղաքականության դիմամիկ համակարգ՝ դրանում տեսնելով անձանց իրավունքների գերակայությունը:

Մեր օրերում բոլոր երկրների տնտեսությունները ձգտում են դառնալ ավելի բաց, մրցակցային, զարգանում են դեպի ազատ տնտեսական հարաբերություններ: Ուստի կարող ենք նշել, որ ազգային տնտեսությունը տարածաշրջանային տնտեսական հարաբերություններում ինտեգրելու համար անհրաժեշտ է առավել մեծ ուղադրություն դարձնել անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդիրներին, որոնց դերի մեծացումը բնութագրվում է նաև ժամանակակից տնտեսական զարգացումներով:

Մինչդեռ նկատենք, որ սահմանային հսկողության, սահմանային անցակետերով անձանց և ապրանքների տեղաշարժի ժամանակ կատարվող վերահսկողության, այդ ընթացքում իրականացվող անձնագրային, մաքսային, ֆիտոսանիտարական և բազմաթիվ այլ հսկողությամբ է պայմանավորված Հայաստանի տնտեսական բարօրությունն ու անվտանգությունը, ինչով էլ պայմանավորված է սույն աշխատության համար նախապայման հադիսացող ծրագրի իրականացումն ու դրա նպատակները:

ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐ

«Հարկ վճարողների և գործարարների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունն իր կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրագործման համար իրականացնում է համալիր ծրագրեր՝ ուղղված անձանց իրավունքների ու օրինական շահերի պաշտպանությանն ու իրավունքների խախտումների պատճառների և դրանց հետ կապված հիմնախնդիրների վերլուծությանը, ինչպիսին է նաև «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդիրների վերլուծություն» ծրագիրը:

Հաշվի առնելով մեր կազմակերպության գործունեության արդյունքում տարբեր անձանց կողմից բարձրացված հարցապնդումները՝ կապված ազատ տեղաշարժի իրավունքի իրացման հետ և այդ տեսանկյունից՝ Հայաստան-Վրաստան սահմանով անձանց, ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղաշարժի մեծ ծավալներն ու դրանց աճողական՝ պրոգրեսիվ բնույթը՝ նկատվեց առկա խնդիրների բազմազանություն, որոնց լուծումը խորապես կնպաստի ազատ տեղաշարժի իրավունքի իրացմանը:

Թերևս նշենք մի պարզ դիտարկում, որը մեզ համար պատկերավոր կդարձնի Հայաստանի և Վրաստանի սահմանով անձանց և ապրանքների տեղաշարժն ու դրանց աճի տեմպերը: Մասնավորապես, եթե դիտարկենք միայն այն փաստական տվյալը, որ Հայաստանի և Վրաստանի միջև 2009 և 2008 թվականներին կատարվել է ընդհանուր առմամբ 607 օդանավի թռիչք-վայրէջք, ապա պարզ է դառնում, որ Հայաստանից Վրաստան կամ հակառակ ուղղությամբ մեկնելու գործընթացում առկա է փոխադրողների ավելի հաճախակի թռիչքների կազմակերպում, ինչն էլ կարևորվում է այդ օդային սահմանային անցակետով թե՛ անձանց և թե՛ ապրանքների տեղաշարժի դինամիկ աճով³: Նման պատկեր նկատվում է նաև հայ-վրացական սահմանը հատող երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտի քանակական վերլուծությամբ՝ 2008 և 2009 թվականներին սահմանը հատել են 810 ուղևորատար և 4594 բեռնատար գնացքներ, իսկ նույն ժամանակահատվածում սահմանը հատել են ընդհանուր առմամբ 273478 տրանսպորտային միջոցներ⁴:

Հայաստան-Վրաստան սահմանը հատելու ճանապարհով իրականացվում է նաև բնական գազի տեղափոխությունը՝ «Կարմիր-կամուրջ-Սևքար-Բերդ» խողովակաշարով, առկա են Հայաստան-Վրաստան միջհամակարգային էլեկտրահաղորդման գծեր⁵, ներկայումս աշխատանքներ են տարվում նոր էլեկտրական գծի կառուցման ուղղությամբ: Այս սահմանով են անցնում նաև էլեկտրոնային հաղորդակցության օպտիկամանրաթելային կապուղիները, որոնց միջոցով իրականացվում է Հայաստանի միջազգային հեռախոսակապի և ինտերնետ ծառայության հասանելիությունը⁶: Նկատի ունենալով այն իրողությունը, որ խողովակաշարերով և էլեկտրասնուցման մալուխներով ապրանքների տեղափոխումը չի կատարվում սահմանային անցակետերի աշխատանքների շրջանակում, նպատակահարմար ենք համարել սույն վերլուծության շրջանակներում չանդրադառնալ այդ հանգամանքներով պայմանավորված խնդիրներին:

Այսպես եզրափակելով տեղաշարժի մեծ կարևորության դիտարկումը՝ նշենք, որ թե՛ անձանց և թե՛ ապրանքների⁷ տեղաշարժը մեծ ծավալների է հասնում Հայաստան-Վրաստան սահմանային անցակետերով, այդ ծավալներով պայմանավորված ի հայտ են գալիս բազմաթիվ խնդիրներ, որոնց վերհանմանն է նպատակաուղղված սույն վերլուծությունը⁸:

Նկատի ունենալով անձանց և ապրանքների նման տեղաշարժը՝ ակտուալ է դառնում հետաքրքրությունը թե՛ սահմանային անվտանգության հարցերի և թե՛ մաքսային գործի զարգացման ու կատարելագործման խնդիրների նկատմամբ:

³ Ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատության գծապատկեր 1-ում:

⁴ Տե՛ս գծապատկեր 2-ում և սույն աշխատության աղյուսակ 2-ում, միաժամանակ նշենք, որ միայն Հայաստան-Վրաստան ուղևորափոխադրումներ կազմակերպելու համար առկա է շուրջ 24 կանոնավոր ուղևորափոխադրումների իրականացման ավտոմոբիլային երթուղիներ, որոնք կազմակերպվում են ավելի քան մեկ տասնյակ տնտեսվարող սուբյեկտների կողմից:

⁵ Տե՛ս սույն աշխատության աղյուսակ 1-ում:

⁶ Տեղեկատվությունը ստացվել է 30.06.2010 թ. ՀՀ Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի թիվ ՍԱ13183 նամակով:

⁷ Ծավալների վերաբերյալ տեղեկատվությունը տե՛ս՝ սույն աշխատության աղյուսակ 3-ում:

⁸ Ծանոթություն. Սույն աշխատության թիվ 1 և 2 գծապատկերներում ու աղյուսակ 1-3-ում զետեղված տեղեկությունները հանդիսանում են ՀՀ պետական կառավարման լիազոր մարմիններից ու պատասխանատու կազմակերպություններից ստացված պաշտոնական տեղեկատվություն՝ մասնավորապես 2010 թ.-ին սույն վերլուծության իրականացման ընթացքում ստացված ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարի թիվ 01/21.1/1615-10, ՀՀ ԿԱ ՊԵԿ թիվ 16902/7-1, ՀՀ ԿԱ ավիացիայի գլխավոր վարչության թիվ 066, «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ գլխավոր տնօրենի թիվ H-754 գրություններով:

Աղյուսակ 1.

Վրաստան-Հայաստան միջհամակարգային էլեկտրահաղորդման գծեր		
	Լարում (ԿՎ)	Թողունակություն (ՄՎԱ)
1.«Ալավերդի»/Ալավերդի-Թբիլիսի ՋԷԿ/	220	245
2. «Լալվար»/Ալավերդի 2-Սադախլո/	110	80
3. «Նինոծմինդա»/ Աշոցք-Նինոծմինդա/	110	80


Աղյուսակ 2.

Հայ-վրացական սահմանը հատած ավտոտրանսպորտային միջոցներ և լրացված մաքսային հայտարարագրեր		
	2008 թ.	2009 թ.
Ավտոտրանսպորտային միջոցներ	124060	149418
Մաքսային հայտարարագրեր	113538	145970

Աղյուսակ 3.


Հայ-վրացական սահմանով տեղափոխված ապրանքների համար գանձված և պետական բյուջե փոխանցված գումարը և ընդհանուր ապրանքաշրջանառության գումարը		
	2008 թ.	2009 թ.
Պետական բյուջե վճարված գումարը	199154,7 մլն դրամ	180247,8 մլն դրամ
Ընդհանուր ապրանքաշրջանառություն	1396,5 մլրդ դրամ	1422,2 մլրդ դրամ
Կոնկրետ Վրաստանի Հանրապետության հետ ընդհանուրից բաժին է ընկնում	267.4 մլրդ դրամ	356.3 մլրդ դրամ

Գծապատկեր 1.



Գծապատկեր 2.

2008-2009 թվականներին հայ-վրացական սահմանը հատած ուղևորատար և բեռնատար գնացքների քանակը



1. ուղևորատար գնացք՝ 390
2. ուղևորատար գնացք՝ 420
3. բեռնատար գնացք՝ 2398
4. բեռնատար գնացք՝ 2196

Նշենք, որ ծրագրի իրականացման համար նպատակադրվեց վեր հանել Հայաստանի և Վրաստանի սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդիրները, կազմել այդ հիմնախնդիրների ուսումնասիրության վրա հիմնված վերլուծություն, փորձել պարզել այդ հիմնախնդիրների առաջացման պատճառները և առաջարկել դրանց լուծումներ: Քանի որ նշված ոլորտում առկա հիմնախնդիրների վերլուծությունը պահանջում էր համալիր մոտեցում, դրա հետազոտման աշխատանքներում ընդգրկվել են առավել լայն հասարակական շրջանակներից անձինք՝ փորձագետներ, հասարակական գործիչներ, պետական ծառայողներ, տուրիզմի, բեռնափոխադրումների, արտերկրից ապրանքներ ներկրող և այլ ոլորտներում գործունեություն ծավալող գործարարների ու տնտեսվարող սուբյեկտների ներկայացուցիչներ, Հայաստան-Վրաստան սահմանը հատող ՀՀ և օտարերկրյա քաղաքացիներ, ինչպես նաև տարբեր հանդիպումների ու կլոր սեղանների աշխատանքներում ներգրավված այլ անձինք, ում մասնակցությամբ անցկացվել են քննարկումներ ծրագրի ընթացքում ի հայտ եկած տարբեր հիմնախնդիրների շուրջ: Կատարվել են այցելություններ Հայաստան-Վրաստան սահմանամերձ բնակավայրեր, սահմանային անցակետեր և «Զվարթնոց» օդանավակայան՝ տեղում ծանոթանալու սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդիրներին ու դրանց առաջացման պատճառներին: Սահմանային անցակետերում անցկացվել են սոցիոլոգիական հարցումներ, կատարվել են դիտարկումներ՝ մոնիթորինգ, որոնց արդյունքներն ավելի հստակ և պարզ են դարձրել առկա հիմնախնդիրները: Այս ամենի արդյունքն էլ ամփոփելով՝ կազմվեց սույն համառոտ վերլուծական աշխատանքը, որը ներառում է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի առավել արդիական հիմնախնդիրների վերլուծությունը:

Վերլուծությունը վերջնական տեսքով ներկայացնում է Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության միջև սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժին վերաբերող հիմնախնդիրները, դրանց առաջացման պատճառները՝ կապված ՀՀ օրենսդրության մեջ առկա որոշ թերությունների և բացերի, գործնական կիրառական խնդիրների հետ, առաջ են քաշվել դրանց լուծման ու հնարավորինս բացառման տարբերակներ, ներկայացվել են առաջարկություններ՝ ոլորտի բարելավման հնարավոր միջոցների ու եղանակների վերաբերյալ:

Բաժին 1.

Սահմանային անցակետով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի իրավական հիմքերը՝ իրավունքը

1.1. Սահմանային անցակետերով անձանց, ապրանքների ազատ տեղաշարժվելու իրավունքը՝ տեղաշարժի հիմնական սկզբունքները

Ազատությունը մարդու բնական իրավունքներից մեկն է, որը պետականորեն միավորված հասարակության մեջ իրացվում է բնական իրավունքների միջոցով, որոնք պետության կողմից ճանաչվելուց և իրավական նորմերում ամրագրվելուց հետո դառնում են նրա սուբյեկտիվ իրավունքը, և որից հետո ազատությունը ձեռք է բերում թույլատրելիության սահմաններ: Յուրաքանչյուր ոք ունի ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու իրավունք: Այս իրավունքը ամրագրված է ՀՀ ներպետական ու միջազգային տարբեր իրավական ակտերերով, ինչպիսիք են, օրինակ, «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիրը, ՀՀ Սահմանադրությունը և այլն: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը» սահմանում է, որ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն տեղից տեղ փոխադրվելու և բնակավայր ընտրելու ցանկացած պետության սահմաններում:

«Ազատությունը» առնչվում է անձի այնպիսի իրավագործությունների հետ, որոնք մատնանշում են նրա ինքնուրույնության ոլորտները: Նշենք, որ անձի ազատ տեղաշարժվելու իրավունքը այն հիմնարար իրավունքներից է, որի խախտման դեպքում ուղղակիորեն վտանգ է առաջանում անձի այլ հիմնարար իրավունքների խախտման համար: Անձի ազատ տեղաշարժվելու իրավունքն ընկած է պետական սահմանադրական կարգի հիմքում և պետության մշտական ուշադրության կենտրոնում է:

Յուրաքանչյուր անձ ունի տեղաշարժվելու և տեղից տեղ փոխադրվելու կարիք: «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի» 13-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի ազատորեն տեղից տեղ փոխադրվելու և բնակավայր ընտրելու ցանկացած պետության սահմաններում⁹: Իսկ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 12-րդ - հոդվածն ամրագրում է, որ պետության տարածքում օրինականորեն գտնվող յուրաքանչյուր ոք ունի այդ տարածքի սահմաններում ազատ տեղաշարժվելու և բնակության վայր ընտրելու ազատություն: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի լքելու ցանկացած երկիր, ներառյալ իր սեփականը և վերադառնալ իր երկիրը: Պետությունները պարտավոր են իրենց քաղաքացիներին իրավունք վերապահել ազատորեն ընտրելու անհրաժեշտ և հարմարավետ բնակավայր, պետության տարածքում ազատորեն տեղաշարժվելու, ապահովել պետությունից դուրս գալու և վերադառնալու հնարավորություն: ՀՀ Սահմանադրության 25-րդ հոդվածի սահմանում է, որ ՀՀ-ում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք ունի ՀՀ տարածքում ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: Յուրաքանչ-

⁹Տե՛ս Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, հոդված 13:

յուր որ ունի ՀՀ-ից դուրս գալու իրավունք: Յուրաքանչյուր քաղաքացի և ՀՀ-ում բնակվելու իրավունք ունեցող յուրաքանչյուր որ ունի ՀՀ վերադառնալու իրավունք¹⁰:

Այս իրավունքների դիտարկումը Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության սահմանային անցակետերով անձանց ազատ տեղաշարժի համատեքստում նույնպես չի բացառում անձանց նման իրավագործությունը և հստակորեն երաշխավորում է հիշյալ իրավանորմերով:

Ազատ տեղաշարժվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն բացառիկ դեպքերում: Պետք է նշել, որ որոշ իրավիճակների հետ կապված՝ ենթադրվում են քաղաքացու ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունքի՝ օրենքով սահմանված կարգով սահմանափակումներ: Օրինակ՝ «Արգելվում է մուտք գործել սահմանամերձ գոտի, փակ զինվորական շրջաններ, բնապահպանական վթարի գոտի (երկրաշարժի, հրդեհի, ջրհեղեղի և այլ դեպքերում), այն տարածքներ, որտեղ հայտարարված է հատուկ դրություն (կապված ռազմական գործողությունների հետ, համաճարակային հիվանդությունների տարածվածության և այլ դեպքերում)»¹¹:

Միաժամանակ բնակության վայրի ազատ ընտրության իրավունքի իրականացումը պահանջում է որոշակի կանոնների պահպանում՝ կապված գորակոչային տարիքի անձանց հաշվառման կամ մշտական բնակության վայրը փոխած ՀՀ քաղաքացու՝ նոր բնակության վայրում մշտական հաշվառման վերցվելու և այլ հարցերի հետ: ՀՀ-ում քաղաքացիներին հաշվառելը և հաշվառումից հանելը իրականացվում է նրանց իրավունքների ու ազատությունների, ինչպես նաև պետության և այլ քաղաքացիների նկատմամբ նրանց պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով: Նման հանգամանքներում չի կարող խոսք լինել անձանց ազատ տեղաշարժվելու իրավունքների սահմանափակման մասին:

ՀՀ Սահմանադրությամբ հստակորեն ամրագրված են նաև քաղաքացիների՝ Հանրապետությունից դուրս գալու և վերադառնալու իրավունքները, ինչը մեր կողմից հետազոտության ենթարկվող հարցերի համար հանդիսանում են հիմնական իրավական հիմքը և երաշխիքը անձանց՝ Հայաստան-Վրաստան սահմանային անցակետերով ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման համար:

ՀՀ օրենսդրությունը նախատեսում է որոշ սահմանափակումներ՝ կապված հանրապետությունից դուրս գալու և վերադառնալու իրավունքի հետ, մասնավորապես՝ եթե քաղաքացին տիրապետում է պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների, անձի նկատմամբ հարուցված է քրեական գործ, ենթակա է զորակոչի՝ բանակում ծառայելու համար, դատապարտված է քրեական հանցագործություն կատարելու համար, հաղորդել է իր մասին կանխամտածված սխալ տվյալներ, խուսափում է դատարանի կողմից իր վրա դրված պարտականությունների կատարումից, դատարանում նրա նկատմամբ ներկայացված է քաղաքացիական հայց և այլն¹²:

Այստեղ պետք է նկատենք, որ անձանց ազատ տեղաշարժի իրավունքը ամեն դեպքում երաշխավորվում է պետության կողմից, սակայն կարող է սահմանափակվել, և սահմանափակման հիմքում կարող են դրվել օրենսդրությամբ սահմանված հստակ սկզբունքներ՝ ազգային և պետական անվտանգության և միջազ-

¹⁰ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն, հոդված 25:

¹¹ Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք, Երևան, 2000:

¹² Տե՛ս ՀՀ սահմանադրական իրավունք, Երևան, 2000:

գային բարիդրացիական հարաբերությունների և խաղաղության պահպանման հարցերի վերաբերյալ:

Ազատ տեղաշարժվելու իրավունքի հիմքում ընկած է նաև այն սկզբունքը, որ ազատորեն երկրից դուրս եկած քաղաքացիներն ազատորեն կարող են վերադառնալ հայրենիք: ՀՀ քաղաքացի հանդիսացող անձանց համար չի պահանջվում մուտքի որևէ արտոնագիր կամ թույլտվություն: Այստեղ պետք է նկատել, որ անձը՝ ՀՀ քաղաքացին, ով որոշակի հանգամանքներում նույնիսկ օրենքի խախտմամբ դուրս է եկել Հայաստանի սահմանից, առանց խոչընդոտի իրավունք ունի վերադառնալու:

Իսկ ի՞նչ հասկանալ ապրանքների ազատ տեղաշարժի հիմքում, և այն ի՞նչ դրսևորում կունենա սահմանային անցակետերով ապրանքներ տեղափոխելիս: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ ապրանքները, ծառայությունները և ֆինանսական միջոցները ՀՀ ամբողջ տարածքում տեղաշարժվում են ազատորեն: Ապրանքների և ծառայությունների տեղաշարժման սահմանափակումներ կարող են մտցվել օրենքին համապատասխան, եթե դրանք անհրաժեշտ են մարդկանց անվտանգության ապահովման, կյանքի և առողջության պաշտպանության, բնության ու մշակութային արժեքների պահպանության համար¹³:

Նկատենք, որ սահմանելով ազատ տեղաշարժի իրավունք ՀՀ տարածքում՝ այն երաշխավորում է նաև ՀՀ տարածքից դուրս ապրանքները արտահանելու և ներմուծելու իրավունքը, ապրանքների տեղաշարժը ՀՀ պետական սահմանով իրականացնելու դեպքում գործում է այն ընդհանուր քաղաքացիաիրավական սկզբունքը, ըստ որի՝ թույլատրվում է այն, ինչ արգելված չէ: Ապրանքների ազատ տեղաշարժի իրավունքի և դրանց սահմանափակումների վերաբերյալ ՀՀ օրենսդրությունը ամրագրում է տարբեր իրավանորմեր, մասնավորապես՝ արգելվում է ՀՀ տարածքից արտահանել մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքները՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից կամ պատկանելությունից¹⁴: Մշակութային այն արժեքները, որոնք գրանցված են կամ ենթակա են գրանցման մշակութային արժեքների պահպանական ցուցակում, ենթակա են արտահանման միայն այն դեպքում, երբ պետությունը մեկանսյա ժամկետում չի օգտվում դրանց գնման մախապատվության իրավունքից: ՀՀ պետական պահոցներում՝ թանգարաններում, արխիվներում, գրադարաններում, մշտապես պահպանվող մշակութային արժեքների արտահանումն արգելվում է, բացառությամբ ժամանակավոր արտահանման դեպքերի: ՀՀ տարածքից ապօրինի արտահանված կամ ներմուծված մշակութային արժեքները ենթակա են վերադարձման¹⁵:

ՀՀ մաքսային օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ անձինք հավասար հիմունքներով իրավունք ունեն ՀՀ ներմուծելու և արտահանելու ապրանքներ և տրանսպորտային միջոցներ՝ ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված կարգով: Այս նորմը ուղղակիորեն ամրագրում է ապրանքները սահմանով տեղաշարժելու իրավահավասար ազատության սկզբունքը¹⁶: Ապրանքները և տրանսպորտա-

¹³ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 3:

¹⁴ Տե՛ս «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդված:

¹⁵ Մշակութային արժեքների՝ ՀՀ պետական սահմանով տեղաշարժի հարցերին ավելի մանրամասն կանոնադրառմանը ավելի ուշ:

¹⁶ Այս սկզբունքի ամրագրումն ապահովում է նաև ՀՀ տարածքում ապրանքների ազատ տեղաշարժի հետ կապված իրավահարաբերությունների ստեղծում՝ երաշխավորելով թե՛ ազատ

յին միջոցները ՀՀ մաքսային սահմանով տեղափոխող անձանց իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով նախատեսված դեպքերում: Ապրանքները և տրանսպորտային միջոցները ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվում են՝ համաձայն վերոհիշյալ օրենսգրքով սահմանված մաքսային ռեժիմների: Անկախ ապրանքների և տրանսպորտային միջոցների բնույթից և քանակից՝ անձն իրավունք ունի ընտրել կամ փոխել մաքսային ռեժիմը, եթե ՀՀ մաքսային օրենսգրքով այլ բան նախատեսված չէ: ՀՀ մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից առանձին ապրանքների և միջազգային փոստային առաքումների միջոցով տեղափոխվող ապրանքների տեղափոխման համար ՀՀ կառավարության կողմից կարող է սահմանվել պարզեցված կարգ:

ՀՀ օրենսդիրը սահմանում է դեպքեր, երբ արգելվում են ապրանքների և տրանսպորտային միջոցների ներմուծումը և արտահանումը: Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 19-րդ հոդվածի՝ ապրանքները և տրանսպորտային միջոցները ՀՀ մաքսային տարածք ներմուծելը արտահանելը կարող են արգելվել մաքսային օրենսգրքով և այլ իրավական ակտերով սահմանված այն դեպքերում, երբ այդ ապրանքները և տրանսպորտային միջոցները վտանգ են ներկայացնում պետական և ազգային անվտանգության, հասարակական կարգի, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի, շրջակա միջավայրի, բնակչության բարոյական արժեքների, պատմական, մշակութային և հնագիտական արժեքների, անձանց սեփականության (այդ թվում՝ մտավոր), իրավունքների և օրինական շահերի համար: Վերոհիշյալ ապրանքները և տրանսպորտային միջոցները համապատասխանաբար ենթակա են անմիջապես ՀՀ տարածքից դուրսհանման կամ տարածք վերադարձման, եթե չի նախատեսվում դրանց առգրավում՝ օրենքով սահմանված կարգով: Նշված ապրանքների՝ ՀՀ տարածքից դուրսհանումը կամ տարածք վերադարձը կատարվում է տեղափոխող կամ փոխադրող անձի կողմից՝ սեփական միջոցների հաշվին:

Այսպիսով՝ ընդհանրացնելով անձանց և ապրանքների՝ ՀՀ սահմանային անցակետերով ազատ տեղաշարժի իրավունքի առկայության, նրա պահպանման անհրաժեշտության նկարագրությունը, պետք է նշել, որ այդ իրավունքը երաշխավորվում է թե՛ միջազգային իրավական փաստաթղթերով¹⁷ և թե՛ ՀՀ ներպետական իրավական ակտերով, այն ունի իր ընդհանրական հիմնախնդիրները ՀՀ բոլոր սահմանային անցակետերով տեղաշարժվելիս, ներառյալ Հայաստան-Վրաստան սահմանային անցակետերով, ընդգծելով այդ հատվածի սոցիալ-քաղաքական, ժողովրդագրական և իրավական առանձնահատկությունները:

Նշենք, որ Հայաստանի և Վրաստանի սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հիմքում պետք է տեսնել տեղաշարժի հետևյալ սկզբունքները.

մրցակցային մթնոլորտի ձևավորման և թե՛ ապրանքներ տեղափոխելիս որևէ կաշկանդվածության հարցի բացառումը:

¹⁷ Ապրանքների ազատ տեղաշարժի կարևորությունը միջազգային ատյաններում ամրագրվել է դեռևս 1975 թ. գոստոսի 1-ին ԵԱՀԽ ավարտական ակտով, որտեղ առավել ուշադրություն է դարձվել պետությունների հումանիտար շփումների իրականացմանը՝ պարզեցնելով մաքսային կանոնները, դրանով ապահովելով տարբեր կողմերի ընտանիքների հանդիպումները, այցելությունները անձական և մասնագիտական նպատակներով, երիտասարդական և զբոսաշրջային այցելությունները, որոնք ուղղակիորեն կստեղծեն անվտանգության և ազատ տեղաշարժի հումանիտար իրավիճակ:

- Անձինք և ապրանքները Հայաստանի և Վրաստանի սահմանային անցակետերով տեղաշարժվում են ազատորեն՝ պահպանելով օրենսդրությամբ սահմանված արգելքի և սահմանափակումների կանոնները:
- Տեղաշարժվում են՝ պահպանելով սահմանային հսկողության և վերահսկողության ընթացակարգերը:
- Սահմանային անցակետով տեղաշարժի ազատության հիմքում դրվում են բոլոր շահագրգիռ կողմերի շահերի պահպանումն ու պաշտպանությունը՝ ազգային և պետության տնտեսական անվտանգությունը, սահմանամերձ բնակավայրերի և տարանցիկ տարբեր վայրերում բնակվող անձանց՝ այդ անցակետերով տեղաշարժվողների, հարևան Վրաստանի Հանրապետության հետ պետական սահմանի և անցակետերի հարցում, բարիդրացիական հարաբերությունների պահպանության շրջանակում շահերի պաշտպանությունը:
- Սահմանային անցակետերով ազատ տեղաշարժվելու հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրության հստակեցումը, կայունությունն ու միատեսակ գործնական կիրառությունը, որոնք միասնական դիրքորոշմամբ հանդես կգան ընդհանուր Հայաստանի սահմանապահ ծառայության առաքելության, մաքսային գործի, ֆիտոսանիտարական, սննդի անվտանգության և անասնաբուժական, համաճարակային, ռադիոազդիւն, անձնագրային և այլ սահմանային հսկողության՝ սահմանային անցակետերում կազմակերպման շրջանակում:
- ՀՀ սահմանային անցակետերի կառավարման կանոնների վերաբերյալ իրազեկության աշխատանքների պարտադիր բնույթի ապահովման ու այլ սկզբունքներ:

1.2. Հայկական գործոնը Հայաստանի և Վրաստանի սահմանով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի իրավունքի հիմքում

Ինչպես գիտենք, հայ-վրացական սահմանի երկարությունը կազմում է մոտ 225 կմ, այն ձևավորվել և ամրագրվել է դեռևս 1921 թվականի նոյեմբերի 6-ին՝ Հայաստանի կողմից՝ Ժողկոմխորհրդի նախագահ Ալեքսանդր Մյասնիկյանի և Վրաստանի կողմից՝ Հեղկոմի նախագահ Մդիվանու՝ Թիֆլիսում ստորագրած պայմանագրով: Երկար տարիներ, այդ թվում՝ հետխորհրդային ժամանակաշրջանում, սահմանի առկայությունը խոչընդոտ չի հանդիսացել երկու պետությունների քաղաքացիների համար, և նրանք ազատ՝ առանց սահմանափակումների, կարողացել են հատել սահմանը: Այսօր իրականացվում է հայ-վրացական սահմանային գծի հստակեցում, և ըստ սահմանամերձ բնակավայրերում ապրող քաղաքացիների՝ խստացվում է սահմանային հսկողությունը, ավարտվում է ազատ ու առանց ստուգումների ելումուտը: Միանշանակ է, որ անձինք պետք է հետևեն այն բոլոր օրենքներին, որոնք սահմանվում են երկու հարևան պետությունների կողմից՝ իրենց պետական տարածք մուտք գործելու համար, և պետք է պահպանեն սահմանը հատելու կանոնները: Հայաստան-Վրաստան սահմանամերձ

շրջանների ազգաբնակչությունը կազմված է հիմնականում հայերից,¹⁸ ու նրանք վերացական են վերաբերվում հայ-վրացական սահմանի գոյությանը: Այստեղի բնակիչները տարիներ շարունակ ազատ տեղաշարժվել են սահմանի այն կետով, որն իրենց ավելի հարմար և ոչ շատ ժամանակատար ու ծախսատար է եղել: Իսկ այսօր հիմնվել են հսկիչ անցակետեր, որոնք որոշ գյուղերից բավականին հեռու են գտնվում: Անցակետում անհրաժեշտ է անցնել սահմանային հսկողություն, որոշ դեպքերում՝ ենթարկվել զննման, որը երբեմն վերածվում է ոչ թե զուտ սահմանային հսկողական աշխատանքի, այլ միջոց է հանդիսանում սահմանափակելու ազատ տեղաշարժը՝ սահմանափակելով նաև տեղափոխվող բեռների տեսակն ու քանակը: Նկատենք, որ թե՛ Հայաստանի կառավարությունը և թե՛ Վրաստանի կառավարությունը օրենքի շրջանակում իրականացնում են սահմանային անցակետերով հսկողություն, որի ուղղակի կիրառության արդյունքում հայ-վրացական սահմանը հատելիս արգելվում է, օրինակ, ֆիզիկական անձանց՝ անհատների կողմից մսամթերքի և կաթնամթերքի տեղափոխումը, բացառությամբ մանկական կերի: Առհասարակ, չի թույլատրվում որևէ սննդատեսակի մեծ քանակության տեղափոխում, այսինքն՝ պետք է ենթարկվել օրենքով սահմանված մաքսային, սանիտարական և այլ հսկողության:

Սահմանային գյուղերի բնակիչների մոտ դեռևս հոգեբանորեն չի ձևավորվել պետական սահմանի գաղափարը՝ իր ռեժիմային միջոցառումներով հանդերձ: հայ-վրացական սահմանի հատման կանոնների խստացումը սահմանամերձ շրջաններում բնակվող գյուղացիների համար բազմաթիվ խնդիրներ կարող է առաջացնել: Սահմանի երկու կողմերում գտնվող հայազգի բնակիչների դժգոհությունների մեծ ալիք կարող է բարձրանալ, եթե նրանց ազատ ելումուտի՝ տեղաշարժի խնդիրը չլուծվի: Նշենք, որ քաղաքացիները դժգոհում են, թե երբեմն չեն հարգվում իրենց իրավունքները սահմանը հատելիս զննություն իրականացնելու դեպքում: Այս դժգոհություններն էլ, ցավոք, իրենց հերթին, հետագայում կարող են ազդել երկու պետությունների բարիդրացիական հարաբերությունների վրա: Արդեն այս սահմանափակումները հանգեցրել են նրան, որ սահմանին մոտ գտնվող հայաբնակ գյուղերի մոտ 10000 (տասը հազար) բնակիչ հայտնվել է ծանր կացության մեջ՝ սահմանը հատելու համար անցնում է երկար ճանապարհ, ու այն ծախսատար է: Պատճառն այն է, որ հայ-վրացական սահմանը հստակեցնող սահմանանշանները դեռևս ոչ բոլոր տեղերում են առկա, բացի այդ՝ որոշ տեղերում, օրինակ, սահմանն անցնում է երկու գյուղերի (Չանախչի և Խոժոռնի) միջով և դրանք բաժանում երկու պետությունների՝ Հայաստանի և Վրաստանի միջև: Իսկ սա նշանակում է, որ գյուղի բնակիչը իր հարևանի կամ հարազատի տուն զնալու համար պետք է ենթարկվի սահմանային զննման, որը բավականին երկարատև գործընթաց է, ուստի գյուղացին երբեմն ստիպված է լինում ապօրինի հատել հայ-վրացական սահմանը: Դեռևս չհստակեցված սահմանի պատճառով որոշ քաղաքացիներ երբեմն հանդիպում են խոչընդոտների սեփական հողամասը օգտագործելու և այլ հարցերում¹⁹: Նկատենք նաև, որ այս սահ-

¹⁸ Նկատենք, որ Հայաստանի և Վրաստանի սահմանի երկայնքով միայն 33-ում առկա են շուրջ 38 սահմանամերձ բնակավայրեր (տե՛ս սույն աշխատության՝ սահմանին հարող բնակավայրերի ցանկը), իսկ Վրաստանում շուրջ երկու տասնյակ սահմանամերձ հայկական և 100-ից ավել խիտ բնակեցված հայկական բնակավայրեր, որոնք գտնվում են սահմանից մինչև 50 կիլոմետր հեռավորության վրա:

¹⁹ Նկատենք, որ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից 22.06.2010 թ. մեր կազմակերպությանն ուղարկված մամակի համաձայն՝ Հայաստանի և Վրաստանի միջև պետական սահմանի սահմանագծման նպատակով ստեղծված հայկական և վրացական հանձնաժողովների բանակցությունների արդյունքում շուրջ 225 կիլոմետր երկարությամբ սահմանագծից նախնական

մանամերձ շրջանում կան հայաբնակ գյուղեր, որոնք գտնվում են Վրաստանի տարածքում: Հայերի թիվը այդ գյուղերում ներկայումս բավականին մեծ է, չնայած որ սահմանի խստացման և դրա հետ կապված խնդիրների պատճառով Վրաստանի հայկական գյուղերում հայաթափման գործընթացն աղետալի չափերի է հասել²⁰: Այդ գյուղերի բնակիչներն իրենց ողջ կյանքի ընթացքում ազատ կարողացել են շփվել, տեղաշարժվել սահմանով և առանց որևէ մտավախության գնալ հանդիպման ՀՀ տարածքում գտնվող սահմանամերձ գյուղերի բնակիչների հետ, սակայն այսօր գյուղացին մեկ օր կարող է հանգիստ գնալ հարևանի տուն, իսկ մեկ ուրիշ օր նրան կծերբակալեն՝ մեղադրելով սահմանի խախտման համար: Այս սահմանների խստացման պատճառով տուժում են գյուղացիները, որոնք ոչ միայն կորցնում են իրենց հարազատների հետ հաճախակի շփվելու իրավունքը, այլև իրենց հողատարածքները: Օրինակ՝ Բրդաձոր, Խոժոռնի, Ծոփք, Խոխմել, Չանախչի գյուղերը հիմնականում հայաբնակ են, նրանց կապող ճանապարհները բարվոք վիճակում չեն, կտրված են ամեն ինչից և հայտնվել են անկալային վիճակում:

Կարծում ենք՝ եթե այսպես շարունակվի, և նրանց ազատ տեղաշարժի խնդիրը չլուծվի, ապա մի քանի տարվա ընթացքում հայերը կլքեն իրենց բնակավայրերը: Որպեսզի կանխվի հայաբնակ գյուղերի հայաթափման գործընթացը, պետք է ստեղծվեն արտոնյալ պայմաններ սահմանի տարբեր կողմերում բնակվող հայերի համար, որոնք միմյանց հետ կապված են արյունակցական կապերով, և սահմանի առկայությունը չպետք է խոչընդոտ հանդիսանա այդ հարցում:

Այս պարագայում հայ-վրացական սահմանային անցակետերով անձանց ազատ տեղաշարժի իրավունքի հիմքում առաջնահերթ պետք է տեսնել վերը նշված հայկական գործոնը՝ հայաբնակ սահմանամերձ բնակավայրերի առկայությունը, և Հայաստանի և Վրաստանի միջև պետք է որոշակի համաձայնություն ձեռք բերվի, ըստ որի՝ սահմանամերձ շրջանի հայ բնակչությունը ինչպես նախկինում, այնպես էլ հիմա կկարողանա ազատ ելումուտ անել հայ-վրացական սահմանով՝ առանց բարդ զննման և խիստ վերահսկողության գործընթաց անցնելու: Դա նրանց իրավունքն է, որը նրանք ձեռք են բերել տարիների ընթացքում, և այդ իրավունքի անտեսումը հետագայում բազմաթիվ խնդիրներ կարող է առաջացնել երկու հարևան պետությունների համար: Սահմանային խստությունների անհամաչափության պատճառով, օրինակ, Վրաստանում գտնվող հայ բնակչությունը կարող է բողոքի մեծ ալիք բարձրացնել՝ հիմք ընդունելով ազգային փոքրամասնությունների իրավունքների խախտումը, իսկ այդ բողոքները կարող են ավարտվել տարաբնույթ կոնֆլիկտներով, ինչու էլ՝ դժգոհություններ կան և կարող են ծավալվել նաև Հայաստանի սահմանամերձ բնակավայրերում: Այսպիսով, հայկական գործոնը էական պատճառ և հիմք է հանդիսանում անձանց ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման համար, և այդ իրավունքը պետք է պահպանվի ոչ միայն Հայաստանի, այլև Վրաստանի կողմից:

համաձայնեցվել է մոտ 160 կիլոմետր հատվածը: Սահմանային միջադեպերից խուսափելու նպատակով անհրաժեշտ ենք համարում անհապաղ արագացնել սահմանազատման աշխատանքները, բացի այդ՝ իրականացնել այդ սահմանազատման աշխատանքների արդյունքում անձանց սեփականության իրավունքի պատճառված վնասի հատուցում՝ նկատի ունենալով, որ որոշ քաղաքացիների սեփական հողամասը ընկել է բուն սահմանային գծի վրա:

²⁰ Նշենք, որ ըստ սահմանամերձ գյուղերի տարբեր բնակիչների կարծիքի՝ Վրաստանի հայկական գյուղերի հայաթափման համար կան նաև այլ պատճառներ, օրինակ՝ ժամանակ առ ժամանակ ծագում են ազգամիջյան վեճեր, չկա հայկական դպրոց և այլ խնդիրներ, սակայն մենք խնդրո առարկան դիտարկել ենք միայն ազատ տեղաշարժվելու, շփվելու իրավունքի տեսանկյունից:

Հիմք ընդունելով Վրաստանում հայ-ազգային փոքրամասնության առկա-
յությունը (հայկական գործոնի առկայությունը Վրաստանում)՝ կարծում ենք, որ
պետք է ԵԱՀԿ ազգային փոքրամասնությունների հարցերով գլխավոր հանձնակա-
տարի ուշադրությունը հրավիրել Վրաստանում բնակվող հայերի (հիմնականում
Վրաստանի սահմանամերձ բնակավայրերում և Վրաստանի Սամցխե-Ջավախե-
թիում բնակվող հայերի) ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման և դրա
արդյունքում ազգակիցների հետ ազատ հաղորդակցվելու իրավունքի երաշխա-
վորման խնդրին՝ ուշադրության արժանացնելով ազգային փոքրամասնություննե-
րի իրավունքների ոտնահարման պարագայում առաջագոյ հնարավոր ռիսկերը,
ինչը կարող է դրսևորվել ազգամիջյան և այլ տեղային կոնֆլիկտներով, որոնք
ուղղակիորեն կարող են ազդել երկու հարևան պետությունների անվտանգության
ապահովման գործին:

Ց Ա Ն Կ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ
ՀԱՐՈՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ

N	Մարզը	Սահմանը	Սահմանային գծից 1 կմ-ի վրա	Մոտավոր բնակչությ- յան	Սահմանային գծից 5 կմ-ի վրա	Մոտա- վոր բնակ- չության
			Բնակավայրերը	Քանակը	Բնակավայրերը	Քանակը
1	2	3	4	5	7	8
1	Տավուշ	Հայ- վրացական	Հաղթանակ	1165	Արճիս	1068
			Պտղավան	875	Այրում	2800
			Բագրատաշեն	2811	Լճկաձոր	438
			Դեբեդավան	658	Վերին Քյոփլու Ջորական	1200
			4 բնակավայր		4 բնակավայր	
2	Լոռի	Հայ-վրա- ցական	Պաղաղբյուր (Սովուղ- բուլլաղ)	164	Ջյունաշող (Ղրգլշաֆակ)	198
			Գոգավան (Դեմուրչիլար)↓		Մեծավան (Շահնազար)	5602
			Ջորամուտ (Էվլու)	344	Սարչապետ	2101
			Նորաշեն	1145	Պետրովկա	212
			Ապավեն	136	Միխայելովկա	648
			Արծնի (Ղզլղաշ)	300	Դաշտադեն (Իզմագլու)	131
			Ջիլիգա	110	Լեռնովիտ (Ղարաքիլիսա)	1355
			7 բնակավայր		Պրիվոլնոյե	1039
					Շամլուղ	
					Ախթալա (Վերին Ախթալա)	
					ճոճկան	2098
					Մեծ Այրում	940
					Քարկոփ	418
					13 բնակավայր	
3	Շիրակ	Հայ- վրացական			Եղնաջուր(Չիվինլի)	150
					Ծաղկուտ(Գյուլիջա)	260
					Լորասար(Էլլար)↑	
					Դարիկ(Օքսյուզ)	163
					Ջորակերտ (Բալըխլի)↑	
					Արդենիս(Գյուլլի)	146
					Աղվորիկ(Ենի-Յոլ)	117
					Թավշուտ	435
					Բավրա	538
					Սարագյուղ	226
					10 բնակավայր	

Բաժին 2.

Սահմանային անցակետերով անձանց և ապրանքների տեղաշարժի հսկողության և պրակտիկայի վերլուծություն

2.1. Հայաստանի և Վրաստանի միջև պետական սահմանը. ազատ տեղաշարժի տեսանկյունից ՀՀ պետական սահմանի կառավարման որոշ դիտարկումներ

ՀՀ-ում պետական սահմանների հետ կապված հարաբերությունները, սահմանային ռեժիմի, սահմանով անձանց և ապրանքների տեղաշարժի հարցերը իրավական կարգավորում են ստացել «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ մաքսային օրենսգրքով ու այլ իրավական ակտերով, որոնք մեծ կարևորություն են ներկայացնում պետական անվտանգության, ինչպես նաև սահմանային ռեժիմի հետ առնչվող մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության ու անվտանգության համար: 20.11.2001 թ. ընդունվել է պետական սահմանի մասին ՀՀ գործող օրենքը, որով և ամրագրվել է ՀՀ պետական սահմանի կարգավիճակը:

Հայ-վրացական սահմանի մասին խոսելով՝ պետք է նշել, որ սահմանային իրավահարաբերություններն ունեն ընդհանրություն պետական սահմանի կառավարման տեսանկյունից, և որպես սահմանի առանձնահատուկ հատված՝ առկա են ՀՀ պետական սահմանի այդ հատվածին բնորոշ առանձնահատկություններ²¹:

«ՀՀ պետական սահման» հասկացությունը ներառում է երեք չափանիշ՝ փաստացի, իրավաբանական և տեխնիկական: Նախ՝ պետական սահմանը այն գիծն է և այդ գծով անցնող այն ուղղահայաց մակերևույթը, որոնք որոշում են ՀՀ տարածքի՝ ցամաքի, ջրերի, ընդերքի, օդային տարածության շրջանակները: Իրավաբանական տեսանկյունից՝ ՀՀ սահմանի ամրապնդումը, տեղորոշումը և փոփոխումն իրականացվում են ՀՀ միջազգային պայմանագրերով և օրենքներով:

²¹ Նախ նկատենք, որ հայ-վրացական սահմանը դեռևս չի հստակեցված, արդեն շուրջ 20 տարի է, ինչ փնտրվել է Խորհրդային Միությունը, որից հետո ի հայտ եկած երկու նորանկախ պետությունների սահմանագծման աշխատանքները չեն ավարտվել: ՀՀ վարչապետի 2000 թ. նոյեմբերի 16-ի թիվ 763 որոշմամբ ստեղծվել է «Հայաստանի և Վրաստանի միջև պետական սահմանի սահմանագծման և սահմանագատման հանձնաժողով», որը բանակցություններ է վարում Վրաստանի համապատասխան հանձնաժողովի հետ, սակայն միջ օրս այդ աշխատանքները չեն ավարտվել:

Գտնում ենք, որ սահմանի հստակեցման համար անհրաժեշտ է դելիմիտացիայի և դեմառկացիոն աշխատանքներն անհապաղ ավարտել: Դելիմիտացիան ամրագրել միջպետական պայմանագրով՝ հստակ նկարագրելով սահմանագծի անցկացման կետերն ու դիրքերը կոնկրետ տեղանքի քարտեզագրման, տոպոգրաֆիական ֆոտոքարտեզագրման ու այլ եղանակով, որից հետո ապահովել դեմառկացիոն նշանների առկայությունը՝ հատուկ սահմանային նշանների կառուցմամբ ու տեղադրմամբ, որը նպատակաուղղված կլինի սահմանային միջադեպերից խուսափելուն:

Նշենք նաև, որ ներկայումս որոշ սահմանամերձ գյուղերում տեղի են ունենում սահմանային տհաճ միջադեպեր, որոնք երբեմն զուգորդվում են ձեռքակալություններով, գյուղացիները, իրենց ձեռքի տակ ունենալով հողի սեփականության իրավունքի վկայականներ, չեն կարողանում օգտվել այդ հողամասից, քանի որ դեռ հստակ չէ՝ այդ տարածքը Վրաստանի²², թե՞ Հայաստանի հատվածում է: Նման այլ խնդիրներ մեր դիտարկումների ժամանակ բարձրացվեցին սահմանամերձ մի քանի գյուղերի բնակիչների կողմից:

Տեխնիկական չափանիշը սահմանի վրա համապատասխան գծանշումների տեղադրման, սահմանային անցակետերի բարեկարգման և սահմանի պահպանմանն ուղղված միջոցառումների համակցությունն է: Նշենք, որ պետական սահմանը իրականացնում է երկու կարևորագույն ֆունկցիա՝

ա/ ապահովում է պետության անվտանգությունը.

բ/ ծառայում է որպես այլ հարևան երկրների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերություններ ստեղծելու և կարգավորելու առաջնային գիծ:

Պետական սահմանի պահպանությունը ՀՀ քաղաքական, տնտեսական շահերի, ինչպես նաև նրա անվտանգության ապահովման կարևորագույն պայմանն է: Պետական սահմանի պահպանության արդյունավետությունը հիմնականում կախված է իրավաբանական գործիքների հմուտ օգտագործումից, մասնավորապես՝ ապահով անվտանգության ռեժիմի ստեղծում և ամրապնդում, այդ նպատակով անհրաժեշտ միջոցների և գործիքների հատկացում և տրամադրում, հատուկ ծառայությունների ստեղծում (սահմանապահ, մաքսային, կարանտինային և այլն): Նշված բոլոր մեխանիզմների միահամուռ աշխատանքի արդյունքում կստանանք ապահով և անվտանգ պետական սահման և այն ազատորեն հատելու երաշխավորված իրավունք:

Նշվածներից ՀՀ պետական սահմանի քաղաքական պահպանությունը նպատակ է հետապնդում չթուլլատրել անձանց և տրանսպորտային միջոցների կողմից սահմանի ապօրինի հատում: Տնտեսական պահպանության խնդիրը նպատակ ունի կանխել ապրանքների, առարկաների և իրերի մաքսանենգ տեղաշարժը: Սահմանապահ պահպանությունն անհրաժեշտ է, որ ՀՀ պետական սահմանով կանխվի վարակների, մարդկանց համար վտանգավոր հիվանդությունների, բույսերի և կենդանիների տեղաշարժը:

ՀՀ պետական սահմանի անվտանգության պահպանության ռեժիմը²² բաղկացած է հետևյալ տարրերից և ընդգրկում է՝

- 1/ պետական սահմանի խնամքի կանոններ,
- 2/ պետական սահմանի հատման կանոններ,
- 3/ անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի՝ պետական սահմանով բացթողման կանոններ,
- 4/ պետական սահմանում տնտեսական գործունեության ծավալելու կանոններ
- 5/ սահմանակից պետությունների հետ սահմանային միջադեպերի լուծման կարգ:

Պետական սահմանի խնամքի կանոններով կարգավորվում են սահմանանշանների տեղադրումը և պահպանումը, դրանց վերահսկողական զննումները, սահմանի երկայնքով թափանցիկ, սանիտարական շերտի ստեղծումը և դրա

²² «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածով ամրագրվել է «սահմանային ռեժիմ» հասկացությունը, որն էլ սահմանում է ՀՀ քաղաքացիների և այլ անձանց՝ սահմանային շերտ և գոտի մուտք գործելու, այնտեղ գտնվելու, տնտեսական գործունեություն իրականացնելու հարաբերությունների իրավական կարգավորման պայման՝ այդպիսի ռեժիմի հետ կապված իրավական կարգավորման լիազորություն վերապահելով ՀՀ կառավարությանը: Սակայն նկատենք, որ նշված օրենքի ընդունումից մինչ այժմ կառավարության կողմից չի ընդունվել «Պետական սահմանի մասին» 20.11.2001թ. ՀՕ-265 ՀՀ օրենքի 20-23-րդ հոդվածներով կառավարությանը վերապահված ՀՀ սահմանի սահմանային գոտու կառավարման և սահմանով անցնելու հարցերի կարգավորման համար անհրաժեշտ «ՀՀ պետական սահմանում սահմանային ռեժիմ սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում, ՀՀ պետական սահմանում պատշաճ կարգ սահմանելու սահմանային ռեժիմ՝ նկատելով, որ գործող իրավական ակտերը հստակորեն չեն ամրագրում բոլոր շահագրգիռ անձանց, հատկապես սահմանով տեղաշարժվողների իրավաչափ շահերը: Նշենք, որ այդ իրավական ակտով կարող են կարգավորվել նաև սույն աշխատությանմբ մեր կողմից առաջարկվող պարզեցված սահմանային անցակետի կազմակերպման հետ կապված հարաբերությունները:

խնամքը, սահմանակից պետության հետ պետական սահմանի համատեղ ստուգումները:

ՀՀ վարչապետի 22.11.1995 թ. թիվ 298 որոշմամբ հաստատվել են պետական սահմանի պահպանման կանոնները, ըստ որոնց՝ տարին մեկից երկու անգամ սահմանակից պետության հետ անցկացվում են համատեղ ստուգումներ, իսկ սահմանանշանների անհետացման կամ վնասման դեպքում դրանց վերանորոգումը և վերականգնումն իրականացնում է սահմանակից այն պետությունը, որին դրանք կցված են: Հատուկ դեպքերում (տարերային աղետ և այլն) թույլատրվում է սահմանանշանների տեղաշարժ՝ առանց սահմանի փոփոխման: Նշված տեղաշարժը իրականացվում է միայն սահմանակից պետության թույլտվությամբ²³:

Պետական սահմանի հատման կանոնների համաձայն՝ երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և այլ հաղորդակցությունը պետական սահմանով իրականացվում է միայն սահմանված անցման կետերում, որտեղ ստեղծվում են սահմանապահ զորքերի հսկիչ-անցագրային կետեր, այնտեղ սահմանվում է նաև առանձին մաքսային գոտի, որտեղ հսկողություն են իրականացնում բացառապես մաքսային մարմինները:

Հայ-Վրացական պետական սահմանի անցման համար երկու պետությունների կողմից սահմանվել են ցամաքային և օդային կետեր:

Հիմք ընդունելով Հայաստանի և Վրաստանի միջև 19.05.1993 թ.²⁴ ստորագրված երկու պետությունների սահմանի վրա մաքսային անցակետեր բացելու վերաբերյալ համաձայնագիրը՝ ՀՀ կառավարության 27.02.1998 թ. թիվ 122 որոշմամբ սահմանվել են **Տավուշի մարզի «Բագրատաշեն», Շիրակի մարզի «Բավրա» և Լոռու մարզի «Գոգավան»** պետական սահմանի անցման կետերում մաքսային հսկողության գոտիներ, որոնցով իրականացվում է ավտոճանապարհային հաղորդակցություն, իսկ **Լոռու մարզի Զիլիգա գյուղի «Այրում» պետական սահմանի անցման կետում՝ երկաթուղային հաղորդակցություն: Նաև ստեղծվել է ՀՀ «Զվարթնոց» օդանավակայանի անցման կետը**: Այսինքն՝ Հայաստանի և Վրաստանի միջև հաղորդակցությունը թույլատրվում է միայն նշված անցակետերով: Իսկ պետական սահմանով՝ անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի բացթողումը իրականացնում են սահմանապահ զորքերի ու ՀՀ միջազգային պայմանագրերին, օրենքներին և այլ իրավական ակտերին համապատասխան ստեղծված այլ պետական մարմինների միջոցով:

Այս պարագայում անհրաժեշտ ենք համարում խոսել հայ-վրացական սահմանում առկա սահմանային անցակետերի սակավության մասին²⁵, նկատելով այն

²³ Արդեն նշել ենք, որ հայ-վրացական սահմանի սահմանագատման և սահմանագծման աշխատանքները չեն ավարտվել, և դեռևս վաղ է խոսել պետական սահմանի այդ հատվածում սահմանի լիիրավ խնամք անցկացնելու մասին:

²⁴ Համաձայնագիր հայ-վրացական պետական սահմանի անցման կետեր սահմանելու վերաբերյալ 19.05.1993 թ.:

²⁵ Սահմանային անցակետերի քիչ լինելու պատճառով տարվա տարբեր ժամանակաշրջաններում գործող անցակետերում լինում են կուտակումներ, ասենք՝ ամառվա ամիսներին Վրաստան՝ ամառային հանգիստն անցկացնելու համար մեկնողների թիվն ավելանում է, կամ մրգերի ու բանջարեղենի տեղափոխման ժամանակ լինում են կուտակումներ:

Նշենք նաև մեկ ցավալի դեպք, երբ անձինք ստիպված են տեղափոխել մահացած հարազատի դին ու այդ պարագայում նախ ստիպված են անցնել երկար ճանապարհ և անցակետերում սպասել հերթերի, սակայն հերթերի պատճառն այն չէ, որ պետք է հսկողություն անցնել, այլ այն է, որ անցակետի թողունակությունը քիչ է: Միաժամանակ նշենք, որ մահացածի դի տեղափոխելիս մաքսային և կամ այլ ձևակերպումներ չեն իրականացվում, միայն իրականացվում է զննություն՝ դիակի հետ արգելված մաքսանենգ ապրանքներ տեղափոխելը բացառելու համար:

հանգամանքը, որ որոշ սահմանամերձ գյուղերի բնակիչներ, ովքեր հաճախակի անհրաժեշտություն ունեն հատելու սահմանը, ստիպված են անցնել հարյուրավոր կիլոմետր ճանապարհ Վրաստան գնալու համար, միջդեռ սեփական բնակավայրը անմիջականորեն գտնվում է սահմանին հարող տարածքում, և կարող են սահմանային անցակետի առկայության պարագայում այն հատել՝ անցնելով շատ քիչ ճանապարհ:

Փաստենք, որ քննարկվող սահմանի հարևանությամբ առկա է շուրջ 38 բնակավայր և նույնքան էլ՝ Վրաստանի կողմում, և այդ վայրի բնակչությունը չունի սահմանով ազատ տեղաշարժվելու հնարավորություն, առաջացել է տեխնիկական խնդիր՝ սահմանային անցակետի բացակայություն: Վերջին ժամանակներս առավել հնչեղություն ստացավ ՀՀ Լոռու մարզի Ջիլիգա գյուղի հարևանությամբ սահմանային անցակետ բացելու հարցը: Նշենք, որ հարևան Վրաստանի կողմից այդ գյուղի հարևանությամբ կա Օփրեթի գյուղ, և այս երկու գյուղերի և նրանց մոտ այլ բնակավայրերի բնակիչները զրկված են միմյանց այցելելու հնարավորությունից, և նրանց կողմից հնչեղ հասարակական պահանջ ներկայացվեց անցակետ բացելու վերաբերյալ: Այդ երկու գյուղերն առանձնացնում է պայմանականորեն որպես սահման ընդունված գետը, որոշ բնակիչներ, չիմանալով սահմանի գոյության մասին, ուղղակի գնում են հարևան գյուղ, և սահմանապահները նրանց ձերբակալում են: Նման պատճառով կան Վրաստանում սահմանը խախտելու համար դատապարտված անձինք: Տեղի բնակիչների հետ հանդիպումներից պարզվեց, որ նրանք կարծում են, թե վրացիներին ձեռնադրել է սահմանի երկու կողմերում մնացած հայերի շփումները:

Նշենք, որ այդ հատվածում սահմանային անցակետ բացելը առավել արդիական խնդիր է: Այդ հարցով թե՛ գյուղացիները և թե՛ մեր կազմակերպությունը խնդրանքով դիմել են պետական իրավասու մարմիններին և ստացել դրական պատասխան խնդիրը լուծելու համար²⁶:

Խոսելով հայ-վրացական սահմանին մեր անցակետ բացելու հարցի մասին՝ կարծում ենք, որ բացի Ջիլիգա գյուղի հատվածից՝ հարկավոր է բացել անցակետ նաև Պրիվոլնոյե գյուղի, «Գայլաբերան» կոչվող, ինչպես նաև սահմանի այլ հատվածներում:

Նկատի ունենալով «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքով ամրագրված այն դրույթը, որ պետական սահմանով հաղորդակցությունն իրականացվում է միայն կառավարության սահմանած սահմանային հսկիչ-անցագրային կետերում²⁷, անհրաժեշտ ենք համարում նշել, որ այդ օրենքը չի սահմանում հնարավոր հսկիչ-անցագրային կետերի տեսակները, և չի դասակարգում դրանց հնարավոր գործառույթների, ծավալի հիմքով, ինչը, կարծում ենք, համարվում է նշված օրենքի բաց և ուղղակիորեն ազդում է անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդրի լուծմանը: Այս հանգամանքի համար կցանկանանք նշել, որ, օրինակ, Բավրայի և Բագրատաշենի անցակետերն իրենց նշանակությամբ և գործնական կիրառությամբ հանդիսանում են միջազգային ավտոմոբիլային սահմանային հսկիչ-անցակետեր, որոնք իրար են կապում ոչ միայն Հայաստանն ու Վրաստանը, այլև այդտեղով իրականացվում են միջազգային տարանցիկ փոխադրումներ և անձանց տեղաշարժ: Իսկ Գոգավանի և Այրում-Ջիլիգայի անցակետերը փոքր ծա-

²⁶ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը 22.06.2010 թ. տեղեկացրել է, որ Հայկական կողմը իրականացրել է նախապատրաստական աշխատանքներ Ջիլիգա-Օփրեթի գյուղերի սահմանային հատվածում անցակետ բացելու համար:

²⁷ Տե՛ս «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդված:

վալների տեղաշարժի համար նախատեսված որոշակի նպատակային անցակետեր են: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է, որ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածում կատարվի լրացում և սահմանվի հսկիչ անցագրային կետերի երկու տեսակ՝ պարզեցված ընթացակարգով և միջազգային, որոշ դեպքերում՝ նաև դրանց երկուսի կիրառական համատեղմամբ: Ինչպես նաև անհրաժեշտ է սահմանել, որ միջազգային անցակետում իրականացվում է ամբողջական հսկողություն, իսկ պարզեցված անցակետում իրականացվում է միայն անձնագրային՝ միգրացիոն կամ անձնագրային՝ միգրացիոն և մաքսային պարզեցված հսկողություն, իսկ սանիտարական-կարանտինային և այլ հսկողությունները չեն իրականացվում, համապատասխանաբար առևտրային քանակության ապրանքների և հատուկ զննության ենթակա ապրանքների տեղաշարժը արգելվում է պարզեցված անցակետով²⁸:

Անհրաժեշտ ենք համարում օրենքում նաև «հսկիչ անցակետ»-ի հստակ սահմանման ամրագրումը հետևյալ ձևով. «Հսկիչ-սահմանային անցակետ է համարվում երկաթուղային, ավտոմոբիլային, օդային, ջրային հաղորդակցության համար նախատեսված այն տարածքը, որով իրականացվում է միջազգային հաղորդակցություն՝ տեղաշարժ, և այդ տարածքը կահավորված է և համապատասխանում է պատշաճ սահմանային, անձնագրային, մաքսային և այլ պետական հսկողություն իրականացնելու համար՝ անձանց, ապրանքների և տրանսպորտային միջոցների՝ պետական սահմանով տեղաշարժվելիս՝ հատելիս»:

Հայ-վրացական պետական սահմանային անցակետերով ազատ տեղաշարժը ուղղակիորեն կապված է սահմանային անցման կետի ռեժիմի հետ, որը ներառում է պետական սահմանի անցման կետերով՝ անձանց, տրանսպորտային միջոցների մուտքի, բեռների և այլ գույքի տեղափոխման կարգը, անցման կետերում անձանց ու տրանսպորտային միջոցների գտնվելու և տեղաշարժվելու կարգը²⁹:

Անցակետերում սահմանային վերահսկողություն և մաքսային հսկողություն իրականացնելու համար անհրաժեշտ շենքերն ընտրվում են ՀՀ կառավարության սահմանած կարգով: Անցման կետերում տեղաշարժը թույլատրվում է անձանց և ապրանքների համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում՝ սահմանային գործերի թույլտվությամբ³⁰:

Մաքսային հսկողության, սահմանային և այլ տեսակի վերահսկողություն իրականացնելու ժամանակ սահմանային անցակետերում անձանց մուտքը տրանսպորտային միջոցներ սահմանափակվում է, անհրաժեշտության դեպքում նաև արգելվում³¹: Տրանսպորտային միջոցների մուտք գործելը ՀՀ սահմանային անցա-

²⁸ Նկատենք, որ պարզեցված անցակետով կարող է սահմանվել, որ թույլատրվում է միայն սահմանյին երկու պետությունների քաղաքացիների տեղաշարժը, իսկ օտարերկրացիներինը և քաղաքացիություն չունեցող անձանց կողմից պարզեցված անցակետով սահմանը հատելը կարող է արգելվել, ինչը արտերկրյա պրակտիկայում կիրառվում է, օրինակ, ՌԴ-Ղազախստան սահմանին: Երբեմն այդպիսի անցակետով թույլատրվում է տեղաշարժվել միայն այդ անցակետի շրջանում բնակվող երկու կողմերի քաղաքացիներին: Կարող ենք փաստել, որ նման խնդիր առկա է, օրինակ, հայ-վրացական սահմանի Ջիլիգա-Օփրեթի հատվածում և, կարծում ենք, այն բավականին դյուրին պրակտիկ կիրառություն կարող է ունենալ: Այդպիսի անցակետերը միջազգային պրակտիկայում ստեղծվում են հարևան պետությունների միջպետական համաձայնագրերով, օրինակ՝ նման անցակետ ստեղծվել է միջպետական համաձայնագրի հիման վրա ՌԴ-Ֆինլանդիա սահմանին:

²⁹ Տե՛ս «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածը:

³⁰ Տե՛ս նույն օրենքի 25-րդ հոդվածը:

³¹ Այստեղ ուշագրավ է նաև այն հարցը, որ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված է, որ պետական սահմանում ՀՀ շահերի նկատմամբ սպառնալիքի ծագման դեպքում սահմանապահ գործերի հրամանատարը կարող է ժամանակավորապես դադարեցնել հաղորդակցությունը պետական սահմանի անցման կետերում: Նման լիազորությունը, իհարկե, բխում է ՀՀ պետական անվտանգության պահպանմանն ուղղված

կետ, ուղևորների նստելն ու դրանցից իջնելը, ինչպես նաև բեռնումն ու բեռնաթափումն իրականացվում են սահմանապահ զորքերի և մաքսային մարմինների թույլտվությամբ:

«Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ պետական սահմանի անցման կետերում առանձնացվում է տարածք, շինություն, որտեղ ուղղակիորեն իրականացվում են սահմանային, սանիտարական-կարանտինային, անասնաբուժական, ֆիտոսանիտարական վերահսկողություն և մաքսային հսկողություն:

Հայ-վրացական պետական սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի մասին խոսելիս անհրաժեշտություն է առաջանում նաև անդրադառնալ թե՛ ֆիզիկական անձանց կողմից սահմանը հատելիս տեղափոխվող ապրանքների և թե՛ ՀՀ մաքսային սահմանով առևտրային նպատակներով ապրանքների տեղափոխման և դրա նկատմամբ սահմանային անցակետերում իրականացվող հսկողությանն ու վերահսկողությանը:

«Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պետական սահմանը հատող անձինք, տրանսպորտային միջոցները, կենդանիները, բեռներն ու այլ գույքը ենթակա են սահմանային, սանիտարական-կարանտինային, անասնաբուժական, ֆիտոսանիտարական վերահսկողության և մաքսային հսկողության: Այսպիսով՝ կարող ենք նշել, որ սահմանի և սահմանային անցակետի կառավարման գործում լիազորություններ ունեն մի քանի տարբեր պետական մարմիններ:

Նշված համապատասխան պետական մարմինները իրականացնում են ՀՀ - պետական սահմանը հատող անձանց առողջական վիճակի գնություն, ստուգում, կենդանիների, բույսերի գնություն, ստուգում, իրականացնում են վնասակար օրգանիզմների բացահայտմանն ուղղված միջոցառումներ: Սանիտարական-կարանտինային մարմինների նախաձեռնությամբ կարող է որոշվել այս կամ այն սահմանային անցակետով անձանց, ապրանքների, իրերի և այլ առարկաների տեղեւաշարժի ժամանակավոր սահմանափակումը:

Ինչ վերաբերում է սահմանային վերահսկողությանը, ապա «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ սահմանային վերահսկողությունը միջոցառումների համակարգ է, որն ապահովում է պետական սահմանի հատման օրինականությունը:

Սահմանային վերահսկողությունը միջազգային հաղորդակցության ուղիներում իրականացվում է՝

ա) դիտարկման օպտիկական սարքերի ու հատուկ տեխնիկական միջոցների կիրառմամբ՝ անցման կետերում վերահսկողություն սահմանելու և ապահովելու նպատակով.

բ) փաստաթղթերի ստուգման միջոցով անձի ինքնությունն ու պետական սահմանը հատելու իրավունքը հաստատելու նպատակով.

գ) պետական սահմանը հատող օդանավերի, թռչող այլ սարքերի ու տրանսպորտային միջոցների գնության նպատակով.

միջոցառումներից ու անհրաժեշտությունից, սակայն կուզենայինք նշել, որ տվյալ լիազորության իրականացման պարագայում ընդհանրապես դադարեցվում է տեղաշարժը սահմանային անցակետերով, և այս պարագայում հարց է առաջանում՝ իսկ առկա՞ է օրենսդրական ամրագրում այն հստակ ՀՀ շահերի շրջանակի, որոնց սպառնացող վտանգի դեպքում կդադարեցվի հաղորդակցությունն անցման կետերում:

դ) պետական սահմանով տեղափոխվող կենդանիների, բեռների և այլ գույքի զննություն կատարելու, պետական սահմանն ապօրինի հատելու փորձ կատարող անձանց հայտնաբերելու նպատակով:

Միջազգային հաղորդակցության ուղիներից դուրս սահմանային վերահսկողությունն իրականացվում է ակնադիտական և տեխնիկական դիտարկման, անձը հաստատող փաստաթղթերի ստուգման, սահմանային գոտում տրանսպորտային միջոցների զննության ճանապարհով: «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքը հստակ ամրագրել է այն գործողությունների շրջանակը, որոնք ուղղված են սահմանի կառավարման և անվտանգության վերահսկողությանը, օրենքով ամրագրված միջոցառումները ենթադրում են նախնական ընթացիկ և հետագա հսկողական աշխատանքներ սահմանի և սահմանային անցակետի անվտանգության ապահովման համար, որոնց իրականացման կարգը սահմանվում է ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով:

Պետական սահմանի կառավարման համար ուշագրավ է այն հարցը, թե ովքեր և ինչ կազմակերպություններ իրավունք ունեն պետական սահմանում կամ սահմանային հսկիչ անցակետի գոտում իրականացնելու տնտեսական գործունեություն: Դրա վերաբերյալ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքը միայն ընդհանրական հոդված է նախատեսում: ՀՀ և օտարերկրյա պետությունների ֆիզիկական և իրավաբանական անձինք պետական սահմանի հատմամբ կամ անմիջապես պետական սահմանում իրականացվող գործունեությամբ չպետք է վնաս պատճառեն կամ խոչընդոտեն պետական սահմանի պահպանությանը կամ պահպանմանն ուղղված մյուս գործողություններին³²:

Ինչպես արդեն նշել ենք, ՀՀ կառավարությունը պետական սահմանում պատշաճ կարգ ապահովելու նպատակով, օրենսդրությամբ սահմանված կարգով, սահմանում է սահմանային ռեժիմ, որը կարգավորում է ՀՀ քաղաքացիների և այլ անձանց՝ սահմանային շերտ մուտքի, այնտեղ ժամանակավորապես գտնվելու, բնակվելու, տեղափոխվելու և այլ գործունեություն իրականացնելու հետ կապված հարաբերությունները: «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածով ավելի մանրամասն կարգավորվում են սահմանային շերտում իրականացվող տնտեսական գործունեության հետ կապված հարցերը, որի համաձայն՝ սահմանային շերտում պետական սահմանի պահպանության հետ չկապված այլ գործունեությունն արգելվում է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Սահմանային շերտում տնտեսական գործունեությունն իրականացվում է միայն օրվա լուսավոր ժամերին: Գիշերային ժամերին, ինչպես նաև մութ ժամանակ սահմանային շերտում տնտեսական գործունեությունն արգելվում է, բացառությամբ անհրաժեշտ դեպքերի, սահմանապահ ջոկատի պետի թույլտվությամբ՝ սահմանապահ զորքերի հրամանատարության համաձայնությամբ: Այս պարագայում օրենքը սահմանապահ զորքերին իրավունք է վերապահել ինքնուրույն որոշել սահմանի կառավարման գործունեության որոշ հարցեր, սակայն պետք է նշել, որ ինքնուրույնությունը նշանակում է իր լիազորությունների իրականացում երբեմն սուբյեկտիվ դիրքորոշմամբ, ինչը, կարծում ենք, պետք է հստակ կարգավորման ենթարկվի սուբյեկտիվ դրսևորումներից զերծ մնալու նպատակով³³:

³² Տե՛ս «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածը:

³³ Հայ-վրացական սահմանային անցակետերի դիտարկումը հանգեցրեց մի տեսարանի, որ սահմանային հսկիչ անցակետի տարածքներում հանդիպում էինք տարբեր տնտեսական ծառայությունների մատուցում առաջարկող անձանց, որոնց սահմանային հսկողության գոտում գտնվելը ուղղակիորեն վտանգ է ներկայացնում անցակետի աշխատանքների ու անվտանգության համար:

Պետական սահմանում տնտեսական գործունեություն իրականացնելու տեսակ և միաժամանակ որպես մաքսային ռեժիմ հանդիսանում է «Անմաքս առևտրի խանութը»: ՀՀ մաքսային վարչության պետի 04.02.1999 թ. թիվ 15-ՄՎ հրամանով հաստատվել է «Անմաքս առևտրի խանութներ կազմակերպելու մասին» հրահանգը: Նշված հրահանգի 2-րդ գլխի 1-ին կետի համաձայն՝ անմաքս առևտրի խանութը մաքսային ռեժիմ է, որը թույլ է տալիս ՀՀ-ից և այլ երկրներից օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքների ներմուծում անմաքս առևտրի խանութի տարածք և հետագայում դրանց իրացում՝ մաքսային հսկողության ներքո, առանց հարկային և մաքսային մարմինների կողմից մաքսատուրքի, ավելացված արժեքի և ակցիզային հարկերի և դրանց փոխարինող հաստատագրված վճարների գանձման: Նույն հրահանգի 2-րդ գլխի 5-րդ կետի համաձայն՝ անմաքս առևտրի խանութներ կարող են հիմնադրվել այն միջազգային ուղևորային հաղորդակցության համար բաց օդանավակայանների կամ ֆիզիկական անձանց կողմից սահմանը հատելու համար նախատեսված ՀՀ անցումային կետերի տարածքներում, որոնք ՀՀ կառավարության կողմից սահմանվել են որպես մաքսային հսկողության գոտիներ:

Նշենք, որ հայ-վրացական սահմանային անցակետերից և ոչ մեկում դեռևս չեն գործում անմաքս առևտրի խանութներ, դրանք առկա են միայն ՀՀ «Զվարթնոց» օդանավակայանի սահմանային անցակետում, իսկ հակառակ կողմում, օրինակ, Բագրատաշեն-Սադախլո սահմանային անցակետի վրացական հատվածում, առկա է կոկիկ ձևով կազմակերպված անմաքս առևտրի խանութ:

Սահմանային անցման կետերի ռեժիմի և աշխատանքների կազմակերպման խնդիրների որոշ դիտարկումներ

Ինչես նշել ենք, սահմանային անցման կետի ռեժիմը ներառում է պետական սահմանի անցման կետերով անձանց, տրանսպորտային միջոցների մուտքի, բեռների՝ ապրանքների, գույքի տեղափոխման կարգը, անցման կետերում անձանց ու տրանսպորտային միջոցների գտնվելու և տեղաշարժվելու կարգը: Սահմանային անցակետի ռեժիմը պրակտիկ կիրառական առումով ներառում է բուն անցման կետի աշխատանքների կազմակերպումը լիազոր պետական մարմինների կողմից:

Հայ-վրացական սահմանային անցման կետերի աշխատանքների դիտարկումներ կատարվել են՝ պարզելու համար առկա խնդիրները, մասնավորապես պարզելու պրակտիկ տեսանկյունից՝ ինչպես է իրականացվում անձանց և ապրանքների տեղաշարժը, և առկա խնդիրները ինչքանով կարող են ազատ տեղաշարժի խոչընդոտ հանդիսանալ:

Առաջին հերթին նկատենք, որ «Զվարթնոց» օդանավակայանի անցման կետում սահմանային ռեժիմի աշխատանքների կազմակերպումը ընդհանուր առմամբ իրականացվում է բավարար ռեսուրսների կիրառմամբ՝ շենքեր, տեխնիկական, անձնական՝ պրոֆեսիոնալ մասնագետներ և այլ: Նշենք, որ այդպիսի պայմաններում ազատ տեղաշարժը խոչընդոտող հիմնախնդիրներն ընդհանրական են, և օդանավակայանի անցման կետին սույն աշխատությունում առանձին չենք անդրադարձնալու:

Հայ-վրացական սահմանային անցման կետերով ազատ տեղաշարժ քննարկելու պարագայում անհրաժեշտ ենք համարում նշել, որ ավտոմոբիլային սահմանային անցակետերից բարվոք ճանապարհային կապով ապահովված են

միայն երկուսը՝ Բագրատաշենի և Բավրայի³⁴, իսկ Գոգավան-Պրիվոլնոյե սահմանային անցակետը հասնելու համար ՀՀ Լոռու մարզի Տաշիր քաղաքից դեպի Գոգավանի սահմանային անցակետ հասնելու համար պետք է անցնել մոտ 20 կիլոմետր անանցանելի, քանդված ճանապարհով, ինչը սահմանը հատելու ցանկություն ունեցող անձանց հաճախ ստիպում է ընտրել այլ անցակետ, նույնիսկ դրա ավելի հեռու լինելու դեպքում: Ճանապարհով երթևեկելու անհնարինության պատճառով անձանց և բեռների տեղափոխությունը կատարվում է հիմնականում այլ անցակետերով, ինչի պատճառով էլ այլ անցակետերում, կարծում ենք, ստեղծվում են սահմանը հատող անձանց բազմամարդ հերթեր և կուտակումներ³⁵:

Գոգավան-Պրիվոլնոյե անցման կետով անձանց տեղաշարժը կազմակերպելու հիմնական խնդիրը պայմանավորված է անցակետի ինֆրաստրուկտուրայի ոչ բարվոք վիճակով, նախ՝ ճանապարհը անբարեկարգ է, Վրաստանի հետ կապող հիմնական մայրուղին հոսքաջրերից քանդվել և անհաղթահարելի, անանցանելի է դարձել: Անցակետում տեղակայված շենքը, շինություններն անբարեկարգ ու անմխիթար վիճակում են, և աշխատակիցները գործունեությունն իրականացնում են վազոն-տնակներում³⁶:

Սահմանային անցակետում տեսանելի վայրում փակցված չեն մաքսային կանոնները, անցման կետի ընթացակարգերը, վճարները և այլն: Նշենք, որ չկա նույնիսկ հնարավորություն՝ որևէ տեղ, ուր կարելի կլիներ փակցնել այդ կանոնները հուշող պաստառներ կամ որևէ ձևով իրազեկել սահմանային անցակետը հատելու սպառնիչ կարգի մասին:

Նշենք, որ անցակետը տեղակայված է շուրջ երկու տասնյակ ընտանիք ունեցող գյուղում, որը գտնվում է ռելիեֆային անհարմար տեղանքում, և, բնականաբար, անցակետի վերանորոգումը և այդտեղ շինարարությունը նույնպես կլինեն բարդ, ու կծագեն բազմաթիվ խնդիրներ, քանզի այն լուրջ բարեկարգման կարիք ունի:

Այս պարագայում կարծում ենք, որ պետք է լուծել դեպի անցակետ գնացող ճանապարհի բարեկարգման խնդիրը: Եթե ճանապարհը բարեկարգ է, ապա անցակետերում անձանց հոսքը կհավասարակշռվի: Իսկ Գոգավան-Պրիվոլնոյե կետով անցնող ճանապարհը տարիներ շարունակ եղել է Վրաստանի հետ կապող

³⁴ Նշենք, որ Բավրայի սահմանային անցակետի հիմնական խնդիրն այն է, որ չի գտնվում սահմանի գծում, անհրաժեշտ է անցակետը տեղափոխել սահմանային գիծ:

³⁵ Տաշիրից դեպի սահմանային անցակետ գնալիս աջ տանող ճանապարհով կարելի է բարձրանալ Լուվի լեռնանցք, որտեղ կա սահմանը հատելու հնարավորություն, որտեղից, բնակիչների կարծիքով, հնարավոր՝ տեղափոխվում են ապրանքներ մաքսանենգ ճանապարհով: Նշենք նաև, որ մենք առաջարկել ենք այդ վայրում ստեղծել նոր պարզեցված անցակետ:

³⁶ Նշենք, որ անցակետերում որոշ պետական մարմինների ծառայողներ ոչ միայն բողոքում էին վատ շենքային պայմաններից, այլև նշում էին, որ անգամ չունեն էլեկտրաէներգիայի վարձավճարը վճարելու կամ այդ շենքը տաքացնելու հնարավորություն, դրա պատճառով աշխատողները նույնիսկ խուսափում են անցակետում լինելուց (օրինակ՝ Գոգավանի հակահամաճարակային հսկողության կետ), որը մեր երկրին պատշաճ չէ:

Բացի նշվածից՝ սահմանային անցակետում հիմնական խնդիրներից է տեխնիկական հագեցվածության և ինֆրաստրուկտուրայի պակասը: Անցակետերը թույլ են տեխնիկապես, զննող սարքեր չունեն, չկան լաբորատորիաներ, ավտոմատացված ախտահանման ու այլ սարքավորումներ, իսկ եղած մի քանի համակարգիչներն էլ անցակետի աշխատակիցների համարերբեմն ծառայում են իբրև խաղային ժամանցի առարկա: Որոշ ծառայությունների համար չկա համապատասխան համազգեստ (օրինակ՝ անասնաբուժական հսկողության ծառայողների համար): Անցակետերում չկա նաև միասնական տեղեկատվական բազա:

Անցակետերի կահավորվածության տեսանկյունից չեն ապահովվում նաև շատ պարզ պահանջներ, օրինակ՝ ճանապարհային երթևեկության միջազգային կոնվենցիայի 3-րդ հոդվածի 7-րդ կետն ամրագրում է, որ անցակետերում պետք տեղկայված լինեն համապատասխան ճանապարհային նշաններ, ինչը իսպառ բացակայում է:

ստրատեգիական ավտոմոբիլային կապուղի: Եվ այս պարագայում, սահմանը հատող՝ մեր կողմից հարցման ենթարկված անձինք փաստեցին, որ նշված ճանապարհն ունի ստրատեգիական նշանակություն, և հարկավոր է այն վերակառուցել, ինչպես նաև անհրաժեշտ է կառուցել միջազգային չափանիշերին համապատասխան տեխնիկապես հագեցված *անցակետ*: Նկատենք, որ նույն խնդիրը առկա էր Վրաստանում, սակայն Վրաստանն արդեն վերանորոգել-վերակառուցել է Գոգավան-Պրիվոլնոյեին հարող *անցակետը*՝ կառուցելով մեկ ելքի և մուտքի ուղեգիծ ունեցող փոքրիկ *անցակետ*³⁷:

Հայաստանի ու Վրաստանի սահմանային *անցակետեր*ով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդիրների վերահսկման նպատակով իրականացվել են սոցիոլոգիական հարցումներ և դիտարկումներ, մասնավորապես՝ սահմանային *անցակետերը* հատելիս դժվարությունների ու խնդիրների առկայության, սահմանային *անցակետի* պաշտոնատար անձանց վերաբերմունքը սահմանային *անցակետը* հատող անձանց հետ հարաբերություններում պարզելու, ինչպես նաև սահմանային *անցակետի* հարմարավետությունը գնահատելու նպատակով³⁸:

Հարցումների արդյունքում ի հայտ եկան որոշակի դիրքորոշումներ, մասնավորապես՝ հարցման մասնակիցներին առաջադրված այն հարցին, թե սահմանային *անցակետերը* հատելիս արդյոք որևէ դժվարություն լինում է, թե ոչ (զծապատկեր 3), հարցման մասնակիցների 33 %-ը պատասխանել է, որ խնդիրներ չեն լինում, 48 %-ը՝ լինում են որոշ խնդիրներ, իսկ 19 %-ը՝ խնդիրներ լինում են: Կարծում ենք՝ խնդիրները կապված են *անցակետի* որոշ աշխատակիցների՝ սահմանը հատող անձանց նկատմամբ ոչ պատշաճ վերաբերմունքի հետ: Այս առումով անհրաժեշտ է, որ անցման կետի աշխատակիցներն ավելի զգոն լինեն, կատարեն իրենց անմիջական պարտականությունները, քանի որ շատ հաճախ սահման հատողների իրավունքներն անտարբերության են մատնվում, ինչն էլ իր հերթին *անցակետը* հատելու դժվարության ու այլ խնդիրների առաջացման պատճառ է դառնում: Բա-

³⁷ Ուշագրավ է այն հանգամանքը, որ բոլոր երեք անցման կետերի վրացական կողմերում Վրաստանը վերջին տարիներին իրականացրել է լայնածավալ բարեկարգման աշխատանքներ՝ կառուցելով տեխնիկապես հագեցված մոր *անցակետեր*, այդ թվում՝ լայն թափ է ստացել նաև *անցակետ* տանող ճանապարհների շինարարությունը: Դիտարկելով վրացական կողմի կատարած աշխատանքները սահմանային *անցակետերի* վերակառուցման առումով՝ կարելի է գնահատել *անցակետերի* նշանակության հարցում հարևան Վրաստանի դիրքորոշումը: Գոգավանի հատվածով փոքրիկ *անցակետ* կառուցելով՝ նրանք տեսնում են տեղաշարժի փոքր ծավալ, այդ պարագայում, կարծում ենք, անհրաժեշտ է *անցակետերի* նշանակության հարցը լուծել համատեղ, որովհետև եթե մեկ կողմը կառուցի փոքր և մյուսը՝ մեծ քանակությամբ ավտոմեքենաների անցման կետ, միևնույն է, տեղաշարժը արդեն իսկ խոչընդոտներով պետք է տեղի ունենա: Ուստի առաջարկում ենք սահմանային *անցակետերի* զարգացման ստրատեգիան համաձայնեցնել Վրաստանի հետ: Բացի այդ, ինչպես նշել ենք, որոշ *անցակետեր* տանող ճանապարհներն անանցանելի են՝ քանդված, ինչը նույնպես ազատ տեղաշարժի համար խոչընդոտ է, և կարծում ենք, որ անհրաժեշտ է համակարգված ձևով իրականացնել նաև ճանապարհների վերակառուցում: Նկատենք, որ ՀՀ կառավարման մարմինների կողմից իրականացվող միմյանց փոխկապված ծրագրերը երբեմն իրականացվում են միմյանցից անկախ առանց դրանց կապի էական նշանակությունը հաշվի առնելու: Այսպես օրինակ՝ ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության 08.06.2010 թ. թիվ 01/10/13045-10 նամակով տեղեկացել ենք, որ «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի շրջանակներում վերակառուցվելու է Սեդրի-Բավրա ավտոմայրուղին, սակայն այդ ծրագրի շրջանակներում նախատեսված չէ Բավրայի *անցակետ*ում, որևէ համապատասխան սահմանային *անցակետի* շինությունների և կամ կոմունիկացիաների կառուցում, և նույնիսկ նրանք տեղյակ չեն՝ նման բան ընդհանրապես լինելու է, թե՞ ոչ: Կարծում ենք, որ երկրի տրանսպորտային միջազգային հաղորդակցության ուղիների բարելավման աշխատանքներում խստագույնս պետք է ներառվի նաև *անցակետերի* զարգացումն ու բարելավումը:

³⁸ Տե՛ս զծապատկերներ 3, 4 և 5:

ցի այդ, նշենք, որ հիմնականում պրոբլեմներ լինում են, օրինակ, ավտոմեքենաների տեղաշարժի դեպքում. ՀՀ քաղաքացիները գնում են մեքենաներ Վրաստանում, հաշվառում են այնտեղ և փորձում են առանց ՀՀ-ում մաքսագերծելու շահագործել: Սակայն այս խնդիրն ունի մի քանի պատճառ. նախ՝ ՀՀ-ում մաքսագերծումը շատ թանկ արժի, ապա՝ սահմանը հատելիս անցակետում ստիպված ես լինում հաղթահարել տարբեր խոչընդոտներ:

Իսկ «Ընդհանուր առմամբ սահմանային անցակետի պաշտոնատար անձինք սահմանային անցակետը հատող անձանց հետ հարաբերություններում ինչպիսի՞ վերաբերմունք են ցուցաբերում» հարցին (գծապատկեր 4) ի պատասխան՝ հարցման մասնակիցների 16 %-ը նշում է, որ սահմանային անցակետի պաշտոնատար անձինք սահմանային անցակետը հատող անձանց հետ հարաբերություններում միշտ բարեհամբույր են, 17 %-ը գտնում է, որ հաճախ հասկանալի պատասխաններ չեն տալիս, 17 %-ը՝ հաճախ անտարբեր են, 33 %-ը՝ երբեմն անտարբեր են, իսկ 17 %-ը նախընտրել է չպատասխանել: Վերը նշվածից կարելի է ենթադրել, որ մաքսատան աշխատակիցներն անտարբերությամբ են վերաբերվում իրենց աշխատանքին ու սահմանը հատող անձանց իրավունքների իրականացմանն ու պաշտպանությանը:


Այն հարցին, թե ինչպիսին է անձանց համար սահմանային անցակետի հարմարավետությունը (Գծապատկեր 5), մասնակիցների 16 %-ը պատասխանել է՝ գերազանց, 18 %-ը՝ լավ, 19 %-ը՝ բավարար, իսկ 47 %-ը՝ վատ: Վերը նշված տվյալներից ելնելով՝ կարծում ենք, որ սահմանային անցակետերում հարմարավետությունը գրեթե բացակայում է, ինչի մասին արդեն նշեցինք Գոգավան-Պրիվոլնոյե անցման կետի մասին խոսելիս: Նշենք, որ մյուս անցակետերը նույնպես բարվոք վիճակում չեն. թե՛ Բագրատաշենում և թե՛ Բավրայում բացակայում է միջազգային չափորոշիչներին համապատասխան միասնական անցակետ, տարբեր պետական հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմիններն իրենց ծառայություններն իրականացնում են միմյանցից հեռու գտնվող շինություններում, իսկ վերջիններս էլ ոչ միշտ են համապատասխանում ժամանակակից տեխնիկական չափանիշներին:

Անցակետերի տարածքները հստակ սահմանազատված չեն, և երբեմն անցակետի տարածքում, որում ներառված է սահմանային անցակետի ռեժիմի գոտին, անհայտ անձանց կողմից իրականացվում է տնտեսական գործունեություն, և պարզ չէ՝ դրանց գոյությունն արդյոք համապատասխանում է ՀՀ օրենսդրության պահանջներին: Օրինակ՝ Բագրատաշենի սահմանային անցակետի հսկողության գոտում, որը ներառում էր նաև մաքսային հսկողության գոտին, առկա էին անօրինական գործող տաքսի ծառայություններ մատուցողներ, խանութներ, հյուրանոց, տարբեր ծառայություններ մատուցող կազմակերպություններ, որոնք լուրջ խոչընդոտ են սահմանային անցակետերի ռեժիմի ապահովման և անվտանգության համար:

Ընդհանրացնելով կարելի է նշել, որ սահմանային անցակետի ռեժիմի և աշխատանքների կազմակերպման առումով հայ-վրացական սահմանային անցակետերում առկա են տեխնիկական և ռեսուրսային հիմնախնդիրներ, մասնավորապես՝ բարեկարգ անցման կետի շենքային պայմանների ապահովում, հսկողություն և վերահսկողություն իրականացնելու համար տեխնիկական հագեցվածություն, որոնք ուղղակիորեն կազդեն հսկողական աշխատանքների որակի և տևողության վրա, և ամենակարևորը պրոֆեսիոնալ, բարեկիրթ ծառայողների և տեխնիկական աշխատակիցների առկայություն:

Գծապատկեր 3.


Սահմանային անցակետերը հատելիս առկա դժվարություններ և խնդիրներ



1. Խնդիրներ չեն լինում
2. Լինում են որոշ խնդիրներ
3. Խնդիրներ լինում են
4. Այլ կարծիք
5. Չեն պատասխանել


Գծապատկեր 4.

Ընդհանուր առմամբ սահմանային անցակետի պաշտոնատար անձինք սահմանային անցակետը հատող անձանց հետ հարաբերություններում



1. Միշտ բարեհամբույր են
2. Հաճախ հասկանալի պատասխաններ չեն տալիս
3. Հաճախ անտարբեր են
4. Երբեմն անտարբեր են
5. Չեն պատասխանել

Ինչպե՞ս կգնահատեք անձանց համար սահմանային անցակետի հարմարավետությունը



1. Գերազանց
2. Լավ
3. Բավարար
4. Վատ
5. Այլ

Սահմանային անցակետերի աշխատանքների կազմակերպման ժամանակ, դիտարկումների արդյունքում ի հայտ եկան նաև ազատ տեղաշարժի իրավունքի իրացման հետ ուղղակիորեն կապված խնդիրներ, որոնցից ակնառու տեղ են գրավում կոռուպցիոն երևույթները: Այսպես օրինակ՝ հարցման է ենթարկվել սահմանային անցակետով տեղաշարժի հետ առնչվող շուրջ 120 անձ՝ պարզելու համար կոռուպցիոն երևույթների ազդեցությունը հայ-վրացական սահմանային անցակետով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի վրա:

Հարցման մասնակիցների 49 %-ը պատասխանել է, որ կոռուպցիան սահմանային անցակետերով ապրանքների և տրանսպորտային միջոցների ազատ տեղաշարժի հարցում խոչընդոտող լուրջ խնդիր է (տե՛ս գծապատկեր 6), իսկ մնացած 51 %-ը պատասխանել է՝ ունի որոշ էական նշանակություն: Ուշագրավ է, որ հարցման մասնակիցների մեծ մասը տեսնում է սահմանային անցակետերում կոռուպցիոն երևույթների առկայությունը: Հարցման տվյալներից ակնհայտ է, որ կոռուպցիան սահմանային անցակետերով ապրանքների և տրանսպորտային միջոցների ազատ տեղաշարժը խոչընդոտող բավականին մեծ խնդիր է, որը նաև այլ խնդիրների առաջացման պատճառ կարող է հանդիսանալ: Կարծում ենք, որ այս պարագայում անհրաժեշտ է աշխատանքներ տանել՝ հասարակական վերահսկողություն սահմանելով սահմանային անցակետերում պետական մարմինների աշխատակիցների գործունեության նկատմամբ:

Հարցման մասնակիցների (արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձինք) 47 %-ը գտնում է (տե՛ս գծապատկեր 7), որ սահմանային անցակետերում կոռուպցիայի դեմ պայքարում իշխանության կամք չի դրսևորվում, իսկ մնացած 51 %-ը կարծում է, որ այն անհասկանալի է: Ըստ սահմանը հատող անհատ քաղաքացիների 72 %-ի տեսակետի՝ իշխանության կամքը սահմանային

անցակետերում կոռուպցիայի դեմ պայքարում ունի ինչ-որ անհասկանալի բնույթ, իսկ 28 %-ը կարծում է, որ իշխանության կամքը կոռուպցիայի դեմ պայքարում չի դրսևորվում: Ակնհայտ է, որ իշխանությունը բավականաչափ քայլեր չի ձեռնարկում սահմանային անցակետերում կոռուպցիոն երևույթները կանխելու ուղղությամբ: Կարծում ենք՝ այս պարագայում նախ և առաջ անհրաժեշտ է նվազեցնել պետական մարմին և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող և սահմանը հատող անձ շփումը: Տվյալ դեպքում արդյունավետ կլինի, եթե մի շարք ընթացակարգեր՝ սահմանային հսկողության գործառույթներ, ավտոմատացվեն՝ անձանց շփումները բացառելու համար:


Իսկ առավել ուշագրավն այն է, որ սահմանային անցակետերում կոռուպցիայի դեմ պայքարի՝ պետության ջանքերը հավասարվում են նվազագույնին (տե՛ս գծապատկեր 8): Հարցման մասնակիցների 21 %-ը պատասխանել է, որ սահմանային անցակետերում առկա (կամ այն բացառելու համար) կոռուպցիայի դեմ պայքարի՝ պետության ջանքերը դրսևորվում են որոշակի արդյունավետությամբ, իսկ մնացածը՝ 79 %-ը, պատասխանել է, որ դրանք արդյունավետ չեն: Հաշվի առնելով հարցման մասնակիցների մեծամասնության կարծիքը՝ կարելի է ասել, որ կոռուպցիան ՀՀ համար բավականին լուրջ խնդիր է: Ուստի կարծում ենք՝ տվյալ պարագայում նախ և առաջ պետք է փոխվի պետության ռազմավարությունը կոռուպցիայի դեմ պայքարում՝ իրականացնելով ռեալ պայքարի համալիր միջոցառումներ:

Սահմանային անցակետերում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ հանրությանը (սահմանը հատողներին) իրազեկելու մակարդակի առնչությամբ հարցին (տե՛ս գծապատկեր 9) մասնակիցների 26 %-ը պատասխանել է, որ կոռուպցիայի դեմ պայքարի մասին տեղյակ է որոշ չափով, իսկ 74 %-ը՝ տեղյակ չէ: Իսկ ինչ վերաբերում է սահմանային անցակետերի հետ կապված լիազորություններ ունեցող անձանց կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումների վերաբերյալ իրազեկվածությանը, ապա հարցման մասնակիցների 26 %-ի կարծիքով պաշտոնատար անձինք իրազեկված են վերը նշված միջոցառումների մասին, 47 %-ը գտնում է՝ տեղյակ են որոշ չափով, իսկ մնացած 27%-ը կարծում է, որ տեղյակ չեն: Նշենք, որ այս տվյալները հուսադրող չեն: Գտնում ենք՝ արդյունավետ կլինի, եթե սահմանային անցակետերում կազմակերպվի «թեժ գիծ», և այնտեղ տեղակայված լինեն շուրջօրյա գործող հեռախոսահամարներ, որպեսզի անհրաժեշտության դեպքում սահման հատող անձինք կարողանան օրենքի չիմացության դեպքում ճշտել իրենց իրավունքներն ու պարտականությունները, պաշտպանել իրենց օրինական շահերը՝ բացառելով կոռուպցիոն ռիսկերը:

Այսպիսով՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է իրականացնել սահմանային անցակետերի աշխատանքների կազմակերպման պարբերաբար մոնիտորինգներ, ընդ որում ոչ միայն պետական մարմինների կողմից, այլև տարբեր հասարակական կազմակերպությունների կողմից, նպատակ ունենալով բացահայտել անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի և սահմանաին անցակետերին առնչվող այլ խնդիրները:

Գծապատկեր 6.


Կոռուպցիան՝ սահմանային անցակետերով ապրանքների և տրանսպորտային միջոցների ազատ տեղաշարժի հարցում խոչընդոտող



1. Խնդիր չէ
2. Ունի որոշ էական մշանակություն
3. Խոչընդոտող լուրջ խնդիր է
4. Չեն պատասխանել

Գծապատկեր 7.


Սահմանային անցակետերում կոռուպցիայի դեմ պայքարում իշխանության կամքը՝ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների և սահմանը հատող անհատ քաղաքացիների աչքերով (տեսակետ)



- 1, 2 արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող անձինք
 3, 4 սահմանը հատող անհատ քաղաքացիներ

Գծապատկեր 8.


Սահմանային անցակետերում առկա (կամ այն բացառելու համար) կոռուպցիայի դեմ պայքարի՝ պետության ջանքերը



1. Արդյունավետ են բավականին
2. Դրսևորվում է որոշակի արդյունավետությամբ
3. Արդյունավետ չեն
4. Չեն պատասխանել

Գծապատկեր 9.

Սահմանային անցակետերում կոռուպցիայի դեմ պայքարի վերաբերյալ հանրությանը (սահմանը հատողների) և սահմանային անցակետերի հետ կապված լիազորություններ ունեցող պաշտոնատար անձանց իրազեկելու մակարդակը



1. Տեղյակ են որոշ չափով
2. Տեղյակ չեն
3. Միջոցառումների վերաբերյալ իրազեկված են
4. Տեղյակ են որոշ չափով
5. Տեղյակ չեն

- 1 սահմանը հատող անձինք
- 2 սահմանը հատող անձինք
- 3 պաշտոնատար անձինք
- 4 պաշտոնատար անձինք
- 5 պաշտոնատար անձինք

Սահմանային անցակետերի աշխատանքի կազմակերպման և կոռուպցիոն երևույթների բացառման ու դրանց հետևանքով անցակետերով անձանց ու ապրանքների ազատ տեղաշարժի ապահովելու համար անհրաժեշտ է նաև իրականացնել սահմանային անցակետի ռեժիմի ու ծառայողների պարտականությունների վերաբերյալ հանրային իրազեկում: Նախ՝ սահմանը հատող անձանց՝ անցակետի ռեժիմի կանոնների վերաբերյալ իրազեկելու համար պետք է անցակետում կազմակերպել տեղեկատվական՝ խորհրդատվական կետ, անցակետերում տեսանելի և մատչելի տեղում տեղադրել բուկլետներ՝ սահմանը հատելու և սահմանով անձանց և ապրանքների տեղաշարժվելու կարևորագույն կանոնների ներառմամբ³⁹:

Որոշակի իրազեկման գործընթաց անհրաժեշտ է իրականացնել նաև սահմանային անցակետի պաշտոնատար անձանց շրջանակում. մասնավորապես՝ նրանց իրազեկվածությունը ապահովելու համար անհրաժեշտ է՝
ա/ աշխատանքի ընդունելիս ստորագրությամբ հանձնել ծանուցում այն մասին, որ կոռուպցիայի դրսևորումները կարող են հանգեցնել բացասական հետևանքների՝ ընդհուպ մինչև քրեական պատասխանատվության,
բ/ անհրաժեշտ է այդ պաշտոնյաների համար իրականացնել դասընթացներ (իրականացնել մասնագիտական վերապատրաստում)՝ էթիկայի կանոնների ուսուցման, դրանց պահանջների պահպանման անհրաժեշտության և կոռուպցիոն ռիսկերի բացառման ու նրանց աշխատանքների անդյունքների բարելավման ու այլ հարցերի շուրջ:

Սահմանային անցակետերի աշխատանքների կազմակերպման համար, ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման տեսանկյունից, կարևոր է լրատվական միջոցների դերը: Անհրաժեշտ է, որ ռադիո և հեռուստատեսային ալիքներով լուսաբանվի անցակետերի աշխատանքը, ներկայացվեն թերի կողմերը, բացահայտված կոռուպցիայի դեպքերը:

Առավել ուշագրավ էր նաև սահմանային անցակետերի ծառայողների աշխատանքի դիմաց դրամական հատուցման հարցը, որը մեր ուշադրությանն արժանացավ իր փոքր չափերի պատճառով, ինչպես նաև անցակետերում որոշ առումով պրոֆեսիոնալ մասնագետների բացակայությամբ⁴⁰:

Հաշվի առնելով սահմանային անցակետերի՝ ՀՀ մայրաքաղաքից հեռու գտնվելու հանգամանքը, ինչպես նաև սահմանամերձ բնակավայրերում համապատասխան մասնագետների բացակայությունը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է սահ-

³⁹ Նշենք նաև այն հանգամանքը, որ ՀՀ ՊԵԿ մաքսային ծառայության կողմից տպագրվել է բուկլետ, որ հակիրճ և մատչելի ձևով ներկայացնում է տեղեկություններ ՀՀ մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքների մաքսային ձևակերպումների ընթացակարգերի մասին, ինչպես նաև ապրանքների տեղաշարժի սահմանափակումների ու մաքսային արտոնությունների վերաբերյալ, սակայն կուզենայինք նշել, որ մի քանի ամիսների ընթացքում սահմանային անցակետերի դիտարկումներ կազմակերպելիս երբեմն հանդիպել ենք դեպքերի, երբ մաքսային սահմանային անցակետերում հնարավոր չի եղել որևէ տեղից ստանալ այդ բուկլետը կանոններին ծանոթանալու համար: Ինչևիցե, դա ունի իր բազմաթիվ պատճառները՝ սկսած սահմանային անցակետում հարմար շինության բացակայությունից, ուր կարող են ներկայացվել այդ իրազեկող բացիկները, և այն, որ որոշ անցակետերում հենց մաքսային ծառայողներն ունենին վերացական մոտեցում այդ բուկլետների դրական նշանակության վերաբերյալ և նշում են. «Դրանք կան, պետի մոտ են, եթե պետք լինի, կտան»: Սակայն դրանք, կարծում ենք, պետք է անցակետի ամեն մի անկյունում տեղադրված լինեն:

⁴⁰ Նման հանգամանքները՝ ոչ պրոֆեսիոնալ ծառայողներ, նրանց ցածր աշխատավարձը, իրազեկության բացակայություն և այլն, ուղղակիորեն ազդում են սահմանային անցակետի ռեժիմի և անցակետերով անձանց, ապրանքների ազատ տեղաշարժի ապահովման հարաբերությունների վրա՝ թողնելով իրենց անմիջական ազդեցությունը կոռուպցիոն երևույթների պաշտոնական թողտվության և այլ դրսևորումներով:

մանային անցակետում առկա բոլոր ծառայությունների աշխատողների համար սահմանել բարձր աշխատավարձ, որը պետք է ձևավորվի տվյալ բնակավայրի առանձնահատկությունները, այդ տարածքի բնակչության կազմակերպությունը և հիմնական բնակավայրից հեռու գտնվելու հանգամանքները հաշվի առնելով⁴¹:

2.2. ՀՀ քաղաքացու անձնագիրը և սահմանային անցակետում անձնագրային հսկողությունը

ՀՀ սահմանային անցակետերով անձանց ազատ տեղաշարժի հիմնախնդիրների մասին խոսելիս առաջին հարցը, որ կարող է ծագել, այն է, թե ՀՀ քաղաքացիներին ինչ է հարկավոր սահմանը հատելու համար: **Այս պարագայում անհրաժեշտ է խոսել ՀՀ քաղաքացու անձնագրի, այն քաղաքացուն տրամադրելու կարգի ու սահմանային անցակետերում անձնագրային հսկողության մասին:**

Այսպես, ՀՀ-ում անձը հաստատող փաստաթղթերն են՝ 1. ՀՀ քաղաքացիների համար անձնագիրը, գինվորական գրքույկը, ՀՀ ներքին գործերի նախարարության մարմինների կողմից ժամանակավորապես տրվող՝ անձը (ինքնությունը) հաստատող փաստաթուղթը, մինչև 16 տարեկան երեխաների համար ծննդյան վկայականը, 2. փախստականների համար փախստականի վկայականը, փախստականի ճամփորդական փաստաթուղթը, 3. օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց համար՝ օտարերկրյա պետության անձնագիրը, անձը (ինքնությունը) հաստատող միջազգայնորեն ճանաչված փաստաթղթերը, ՀՀ հատուկ անձնագիրը, կացության վկայականը:

ՀՀ քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն են ՀՀ քաղաքացու անձնագիրը և անչափահասի ծննդյան կամ քաղաքացիությունը հաստատող վկայականը: Այն դեպքերում, երբ գործ ունենք սահմանը հատող օտարերկրյա քաղաքացիների հետ, ՀՀ անձնագրային հսկողությունն իրականացվում է այդ անձանց մասով ճանաչելով օտարերկրյա պետություններում տրված անձը հաստատող փաստաթղթերը:⁴²

ՀՀ քաղաքացու անձնագիրը տրվում է անձի կամ նրա ներկայացուցչի դիմումի հիման վրա: Անձնագիր տալու համար ՀՀ քաղաքացուց գանձվում է տուրք՝ բազային տուրքի չափով⁴³: ՀՀ քաղաքացիների անձնագրերը տրվում կամ փոխանակվում են ըստ նրանց մշտական, ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրի՝ ՀՀ ներքին գործերի մարմինների, իսկ օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչների կամ հյուպատոսական հիմնարկնե-

⁴¹ Ամբողջ աշխարհում սահմանամերձ շրջաններում աշխատանքում բաժրորակ մասնագետների ներգրավելու համար վճարում են ավելի բարձր: Որպեսզի այդ մասնագետները կարողանան մնալ պայմաններում սահմանային անցակետերում պրոֆեսիոնալ գործունեություն իրականացնել, պետք է ունենան բարձր աշխատավարձ (շահագրգիռ գործոն), արտոնություններ, ապահովված լինեն տրանսպորտով և այլ երաշխիքներով, ինչը կնդի պրոֆեսիոնալներին թեկուզ և որոշակի ժամանակով դեպի սահմանային անցակետերի աշխատանքներ: Ունենալով որակյալ անցակետի աշխատանքների կազմակերպում հնարավոր է մոռացվի ազատ տեղաշարժի խնդիրների մասին:

⁴² Քաղաքացիություն չունեցող անձանց անձը հաստատող փաստաթղթերը՝ ճամփորդական անձնագիր և այլն, որոնք տրվել են օտարերկրյա պետություններում, և այդ անձանց նկատմամբ ՀՀ պետական սահմանը հատելիս կիրառվում են այդ փաստաթղթերը տրամադրած պետությունների քաղաքացիների համար կիրառվող սահմանը հատելու ընթացակարգ:

⁴³ «Պետական տուրքերի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածով սահմանված է անձագիր տրամադրելու համար պետական տուրքի չափը:

րի կողմից: Անձնագիրը ստանալու համար ՀՀ քաղաքացիները ներկայացնում են՝ սահմանված ձևի դիմում, ծննդյան վկայականը կամ մինչև 16 տարին լրանալը ստացած ՀՀ քաղաքացու անձնագիր, 35x45 մմ չափսի երկու լուսանկար, ծնողների կամ ծնողներից մեկի⁴⁴ կամ օրինական ներկայացուցիչների համաձայնությունը (մինչև 16 տարին լրանալը անձնագիր ստացողները), ընդ որում՝ ծնողի կամ օրինական ներկայացուցչի համաձայնությունը նրանց կողմից ստորագրվում է այն հանձնելիս: Եթե ծնողը կամ օրինական ներկայացուցիչը անձամբ չի կարող ներկայացնել համաձայնությունը, ապա ներկայացվող համաձայնության վրա նրա ստորագրության իսկությունը պետք է վավերացված լինի նոտարական կարգով, ինչպես նաև կցագրման վկայական կամ զինվորական գրքույք (զինապարտները)⁴⁵:

ՀՀ քաղաքացին անձնագիրը կարող է փոխանակել դրանում պարունակվող տեղեկությունները փոխելու, գրառումներում անճշտություններ հայտնաբերելու, անձնագիրը ոչ պիտանի լինելու դեպքերում: Անձնագրի փոխանակման համար ՀՀ քաղաքացին ներկայացնում է փոխանակման ենթակա անձնագիրը, սահմանված ձևի դիմումը և երկու լուսանկար: Անձնագրում որևէ տեղեկություն փոխելու կամ գրառումներում անճշտություններ հայտնաբերելու պատճառով այն փոխանակելիս ՀՀ քաղաքացին ներկայացնում է նաև փոփոխությունները կամ անճշտությունները հաստատող փաստաթղթեր: ՀՀ քաղաքացին պարտավոր է անձնագիրը կորցնելու մասին 10–օրյա ժամկետում հայտնել ներքին գործերի մարմիններին, իսկ օտարերկրյա պետություններում ՀՀ դիվանագիտական ներկայացուցչություններին: Անձնագրի կորստյան դեպքում կազմվում է կորստյան գործ, և կորած անձնագրի փոխարեն տրվում է նորը:

ՀՀ քաղաքացիությունից դուրս եկած կամ այն կորցրած անձը պարտավոր է անձնագիրը սահմանված կարգով հանձնել ՀՀ-ում՝ ներքին գործերի մարմիններին, արտերկրում ՀՀ դիվանագիտական հիմնարկներին⁴⁶: Կասկածյալների, մեղադրյալների, որոնց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել չհեռանալու մասին ստորագրությունը կամ կալանքը, ինչպես նաև ազատազրկման դատապարտված անձանց անձնագրերը ժամանակավորապես վերցնում են հետաքննության կամ նախաքննության մարմինները կամ դատարանը, իսկ ժամկետային զինվորական ծառայության զորակոչված անձանց անձնագրերը՝ զինկոմիսարիատը, որով սահմանափակվում են այդ անձանց տեղաշարժի իրավունքները:

Նկատենք, որ արգելվում է ՀՀ քաղաքացու անձնագիր վերցնելը, այլ անձանց հանձնելը կամ անձնագիրը ուրիշին տալը⁴⁷:

⁴⁴ Նկատենք, որ արդեն բավականին ժամանակ է, ինչ ՀՀ քաղաքացի անչափահասների անձնագրերը պետք է տրվեն նրանց ծնողներից մեկի դիմումի հիման վրա, սակայն որոշ անձնագրային ծառայության ստորաբաժանումներում պահանջում են պարտադիր երկու ծնողի համաձայնությունը՝ խոչընդոտելով անձանց իրավունքը: Նշենք, որ դա կարող է լինել կոռուպցիոն երևույթների կամ անձնագրային ծառայողի պակաս իրազեկվածության պատճառ:

⁴⁵ Տե՛ս ՀՀ կառավարության 25.12.1998 թ. թիվ 821 որոշումը:

⁴⁶ Սահմանային անցակետերում ուշագրավ խնդիրներ են առաջանում ՀՀ քաղաքացիությունը կորցրած անձանց հետ, երբ նրանք ՀՀ քաղաքացիությունը կորցնելուց տարիներ անց այցելում են ՀՀ այլ պետության քաղաքացու անձնագրով, նրանց սահմանային անցակետերում ենթարկում են հարցաքննության անհասկանալի նպատակներով: Գտնում ենք, որ նման պրակտիկան պետք է բացառել՝ ազատ տեղաշարժի իրավունքը երաշխավորելու համար:

⁴⁷ ՀՀ քաղաքացու անձնագրում հստակ սահմանված է, որ անձնագիրը համարվում է Հայաստանի Հանրապետության սեփականությունը, այն ենթադրում է բացարձակ արգելք անձի մոտից անձնագիրը վերցնելու կամ նրանից զրկելու հարցում, բացառություն կարող է սահմանվել միայն օրենքով:

ՀՀ քաղաքացու անձնագրի տրամադրման հետ անմիջականորեն կապված է ՀՀ քաղաքացիների բնակության վայրի հաշվառումը, որն իրականացվում է կենտրոնական և տեղական ռեգիստրների միջոցով, որոնք մշակում և համակարգում են քաղաքացիների անհատական հաշվառման տվյալները: ՀՀ քաղաքացու անձնագրում նշում է կատարվում նրա բնակության պետական ռեգիստրում հաշվառման տվյալների վերաբերյալ, մասնավորապես՝ նշվում է հաշվառման հասցեն: ՀՀ բնակիչը բնակության պետական ռեգիստրում հաշվառվելու համար «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իր մշտական բնակության վայրի (կացարանի) հասցեն տրամադրում է տեղական ռեգիստրին՝ ներկայացնելով սահմանված ձևի դիմում, անձը հաստատող և տվյալ վայրում բնակվելու իրավունքը հաստատող փաստաթղթեր: Հաշվառվելու կամ այն փոխելու դիմումը ռեգիստր ներկայացնում է քաղաքացին, նրա լիազորված անձը, իսկ մինչև 16 տարեկան քաղաքացու դեպքում՝ նրա օրինական ներկայացուցիչը:

Հաշվառում չունեցող անձը դիմումը ներկայացնում է այն տեղական ռեգիստր, որի տարածքում նա փաստացի բնակվում է: Քաղաքացու հաշվառումն իրականացվում է առանց կոնկրետ հասցե նշելու: Որպես բնակության վայր՝ նշվում է փողոցը կամ թաղամասը⁴⁸:

Ռեգիստրում անչափահաս երեխան հաշվառվում է ծնողներից որևէ մեկի կամ օրինական ներկայացուցչի հաշվառման վայրում՝ անկախ բնակելի տարածության սեփականատիրոջ համաձայնությունից⁴⁹: «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետի համաձայն՝ զինապարտներին անձնագիր տալու կամ փոխանակելու (բացառությամբ արտերկրում գտնվող պահեստազորայիների), ըստ բնակության վայրի հաշվառելու կամ հաշվառումից հանելու գործողությունները կատարվում են նրանց զինվորական փաստաթղթերում համապատասխան զինվորական կոմիսարիատի կողմից զինվորական հաշվառման վերաբերյալ նշումների առկայության դեպքում: Նախազորակոչային տարիքի զինապարտների անձնագրերն օտարերկրյա պետություններում վավերական լինելու մասին նշումը կատարվում է մինչև նրանց զորակոչային տարիքը լրանալը, իսկ զորակոչային տարիքը լրանալու դեպքում՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ստացած տարկետման ժամանակով:

ՀՀ պետական սահմանը հատելու համար, բացի համապատասխան բնակչության ռեգիստրում հաշվառում ունենալու և անձնագիր ունենալու հանգամանքից, անհրաժեշտություն է առաջանում նաև ապահովել ՀՀ քաղաքացիների անձնագրի՝ օտարերկրյա պետություններում վավերականության հարցը: ՀՀ քաղաքացիներին անհրաժեշտ է, որպեսզի անձնագրում առկա լինի օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության մասին կնիքը՝ նշումը, որի բացակայության դեպքում ՀՀ քաղաքացիներին արգելվում է մեկնել ՀՀ-ից: ՀՀ անձնագրերի՝ օտարերկրյա պետություններում վավերականության կնիքը դրվում է ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից, այն իրականացվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որի համար կատարվում է պետական տուրքի վճարում⁵⁰:

⁴⁸ Խոսքը վերաբերում է, այսպես կոչված, անորոշ բնակության վայրով անձանց՝ «բոմժերին»:

⁴⁹ Տե՛ս «Ձինապարտության մասին» ՀՀ օրենքը :

⁵⁰ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ ՀՀ անձնագիր տրամադրելու և փոխանակելու հետ կապված որոշ ծառայությունների համար «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով նախատեսված է պետական տուրքի վճարում, սակայն կուզենայինք նշել, որ վերջին ժամանակներս անձնագրերի տրամադրման և փոփոխման ընթացակարգերը պարզեցվել են և ավելի մատչելի ու արագ ձևով են կազմակերպվում, նախատեսվել է նաև դրանց տրամադրման ավելի կարճ ժամկետների

Խոսելով հայ-վրացական պետական սահմանի անցման կետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի մասին՝ անհրաժեշտ ենք համարում նշել անձանց տեղաշարժի ապահովման համար սահմանված կանոնների ու առանձնահատկությունների, մասնավորապես սահմանային անցակետերում անձնագրային հսկողության մասին:

Անձնագրային հսկողությունը սահմանային անցակետում իրականացվում է ուղղակիորեն սահմանային հսկիչ-անցումային կետով տեղաշարժվող անձանց նկատմամբ օրենքով սահմանված հսկողություն իրականացնելու նպատակով, որի շրջանակներում պարզվում է անձի և նրա ներկայացրած փաստաթղթի համապատասխանությունը, անձի՝ ՀՀ տարածք մուտք գործելու և ելքի իրավունքի առկայությունը:

Հայ-վրացական սահմանային անցակետերով անձանց տեղաշարժի դեպքում ուշագրավ է այն, որ սահմանված են երկու պետությունների միջև առանց արտոնագրային և վիզաների փոխադարձ ճանաչման ռեժիմներ, մասնավորապես՝ 19.05.1993 թ. Հայաստանի և Վրաստանի միջև կնքվել է վիզաների փոխադարձ ճանաչման մասին համաձայնագիր⁵¹: Նշված համաձայնագրի 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր կողմ ճանաչում է օտարերկրյա քաղաքացիների՝ կողմերի իրավասու մարմինների կողմից տրված մուտքի, ելքի և տարանցիկ վիզաները: Կողմերից մեկի տարածք մուտք գործելու, մնալու և ելքի համար տրված հիշյալ վիզաներն ունեցողներին իրավունք են տալիս անարգել կերպով տարանցիկ անցնել մյուս կողմի տարածք՝ նշանակման վայր, կամ երրորդ երկիր՝ ելքի վայր: Իսկ 18.04.1993 թ-ին Հայաստանի և Վրաստանի միջև ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության քաղաքացիների՝ իրենց տարածքներով առանց վիզաների տեղաշարժման մասին» համաձայնագրի⁵² 1-ին հոդվածի համաձայն՝ կողմերի քաղաքացիներն իրավունք ունեն մեկնել, մուտք գործել և տեղաշարժվել համաձայնագրի մասնակից պետությունների տարածքով առանց վիզաների՝ անձը հաստատող փաստաթղթերի առկայության դեպքում:

հնարավորություն որոշակի չափով վճարում կատարելու պարագայում: ՀՀ կառավարության 11.12.2008 թ. թիվ 1467-Ն ՀՀ քաղաքացուն անձնագիր տալու և փոխանակելու և ծառայությունների վճարի չափը հաստատելու ՀՀ ոստիկանության արտաբյուջետային հաշիվ բացելու թույլտվություն տալու վերաբերյալ ընդունված որոշմամբ կառավարությունը հաստատել է ՀՀ քաղաքացու անձնագիր ստանալու կամ փոխանակելու ծառայությունների վճարման չափերը: Եթե ՀՀ քաղաքացին ցանկանում է անձնագիր ստանալ համ փոխանակել կարճ ժամկետում, ապա նա պայմանագիր է կնքում համապատասխան մարմնի հետ, որի համաձայն, օրինակ, կրթած անձնագրի փոխարեն նոր անձնագիր՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում կարող է ձեռք բերել 60.000 ՀՀ դրամով, 3-րդ աշխատանքային օրվա համար՝ 50.000 ՀՀ դրամով, 5-րդ աշխատանքային օրվա համար՝ 40.000 ՀՀ դրամ: ՀՀ քաղաքացուն անձնագիր տալու կամ փոխանակելու համար մեկ աշխատանքային օրվա ընթացքում քաղաքացին պետք է վճարի 20.000 ՀՀ դրամ, իսկ 3-րդ աշխատանքային օրվա համար՝ 10.000 ՀՀ դրամ: ՀՀ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ քաղաքացուն անձնագիր տալու համար գանձվում է համապատասխան բազային տուրքի չափով, իսկ ՀՀ կորցրած հատուկ անձնագրի փոխարեն նորը տալու համար՝ բազային տուրքի 75-ապատիկի չափով: Համաձայն վերը նշվածի՝ ՀՀ կառավարության հիշյալ որոշումը հակասում է «Պետական տուրքի մասին» օրենքին այն մասով, որ պետական տուրքը գանձվում է պետական մարմինների կողմից մատուցվող որոշակի ծառայությունների համար օրենքով սահմանված կարգով, և ՀՀ Սահմանադրությամբ, որովհետև այդ արտաբյուջետային վճարումները կատարվում են, ինչպես նշեցինք, ենթաօրենսդրական ակտի հիման վրա, և կարծում ենք, որ այն ուղղակիորեն հակասում է ՀՀ Սահմանադրության նորմերին առ այն, որ անձանց պարտավորությունները պետք է սահմանվեն միայն օրենքներով:

⁵¹ Տե՛ս 19.05.1993 թ. Հայաստանի և Վրաստանի միջև վիզաների փոխադարձ ճանաչման մասին համաձայնագիր:

⁵² Տե՛ս 18.04.1993 թ. «Հայաստանի Հանրապետության և Վրաստանի Հանրապետության քաղաքացիների՝ իրենց տարածքներով առանց վիզաների տեղաշարժման մասին» համաձայնագիր, հոդված 1:

Այսինքն՝ նշված համաձայնագրերով երկու պետությունների միջև պարզեցվել է անձանց տեղաշարժը սահմանային անցակետերով և համաձայնագրի կողմ պետությունների տարածքներով: Նկատենք, որ առաջին հերթին անձանց տեղաշարժի հիմքում դրվել է երկու պետությունների (Հայաստան և Վրաստան) քաղաքացիների՝ հարևան պետություններ այցելելու առանց արտոնագրի մուտքի իրավունքի ապահովումը, և ամրագրվում է միմյանց կողմից այլ պետությունների քաղաքացիներին տարանցիկ տեղաշարժվելու իրավունք տվող փաստաթղթերի ճանաչում և անխոչընդոտ տեղաշարժի իրավունքի ամրագրում:

ՀՀ կառավարության 24.03.1998 թ. թիվ 200 որոշմամբ հաստատվել է ՀՀ պետական սահմանի անցման կետերում պետական լիազորված մարմինների գործառույթների իրականացման կարգը⁵³, որի համաձայն՝ ՀՀ ցամաքային տրանսպորտի միջոցով քաղաքացիների մուտքի և ելքի դեպքում սահմանապահ ծառայության կողմից ստուգվում են ՀՀ ժամանող և ՀՀ-ից մեկնող քաղաքացիների անձնագրերը, օտարերկրյա քաղաքացիների մուտքի դեպքում՝ նաև մուտքի արտոնագրի առկայությունը, սակայն արտոնագրի առկայության դեպքը նախատեսվում է, միայն եթե միջազգային պայմանագրով կարգավորված չէ առանց մուտքի արտոնագրի Հայաստանի տարածք մուտքի թույլտվությունը:

Այսինքն՝ տվյալ դեպքում առանձնացվում են անձանց՝ ՀՀ պետական սահման մուտքի երկու ռեժիմ՝ արտոնագրային և ոչ արտոնագրային: Ի դեպ, պետք է նշել, որ ՀՀ կառավարության 24.03.1998 թ. թիվ 200 որոշմամբ հաստատված կարգով կանոնակարգվում է նաև օտարերկրյա քաղաքացիների մուտքը արտոնագրի բացակայության դեպքում: Նման դեպքերում օտարերկրյա քաղաքացիները դիմում են անմիջապես ՀՀ պետական սահմանի անցման կետում գտնվող ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանության անձնագրային ու վիզաների վարչության ստորաբաժանմանը՝ մուտքի արտոնագիր ստանալու համար, և այն ստանալուց հետո անցնում են մաքսային հսկողության գոտի:

Սահմանային անցակետի կառավարման ժամանակ առաջանում են որոշակի հարաբերություններ նաև օտարերկրացիների հետ՝ կապված նրանց սահմանը հատելիս սահմանային գոտում գտնվելու, նրանց պահելու և այլ հարցերի հետ: Այսպես օրինակ՝ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ օտարերկրացուն ծագման պետություն կամ այն պետություն, որտեղից նա ժամանել է, վերադարձնելու անհնարինության դեպքում, առանց անձնագրի, անվավեր անձնագրով ՀՀ պետական սահմանի անցման կետ ժամանած կամ ՀՀ պետական սահմանի անցման կետում մուտքի վիզայի մերժում ստացած կամ սահմանային հսկողություն իրականացնող մարմնի կողմից մուտքի թույլտվություն չստացած օտարերկրացիները կարող են պահվել տարանցիկ գոտում կամ այլ տեղ՝ այդ նպատակով ստեղծված հատուկ կացարանում: ՀՀ կառավարության 2008 թվականի փետրվարի 7-ի N 127-Ն որոշումը սահմանում է ՀՀ սահմանային անցման կետերում և տարանցիկ գոտիներում հատուկ կացարանների գործունեության ու օտարերկրացիներին այնտեղ պահելու կարգը:

Սահմանային անցակետերում անձնագրային հսկողության շրջանակներում վեր հանվեց նաև այն խնդիրը, որ քաղաքացու անձնագրի՝ օտարերկրյա պետություններում վավերականության կնիքի հարցի հետ կապված կարող է լինել դեպքեր, երբ վավերականության ժամկետը լրացել է⁵⁴, սակայն դա նկատվել է միայն

⁵³ Տե՛ս նշված կարգի 7-րդ, 8-րդ, 9-րդ և 10-րդ կետերը:

⁵⁴ Այստեղ անհրաժեշտ է ներկայացնել մեկ դիտողություն այն մասին, որ խոսվում է միայն օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության մասին, իսկ ինչո՞ւ է այդ

սահմանային անցակետում: Նման դեպքում քաղաքացին ստիպված է վավերականության հարցը լուծելու նպատակով վերադառնալ իր բնակավայր: Նման դեպքերում, կարծում ենք, հնարավոր պետք է համարել անձնագրի՝ հիշյալ ձևով վավերականության հարցը լուծել պարզեցված կարգով սահմանային անցակետերում, ինչը կարող է լրացուցիչ երաշխիք հանդիսանալ անձանց ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման համար⁵⁵:

Ուշագրավ է նաև ՀՀ քաղաքացիների կողմից հարևան պետություն հաճախակի մեկնելու պարագայում անձնագիրը ավելի արագ փոխելու խնդրի առկայությունը: Անձնագրային հսկողության ժամանակ սահմանը հատելիս քաղաքացու անձնագրում կատարվում է դրոշմային նշում ելքի ու մուտքի վերաբերյալ, այդ պարագայում անձնագրի էջերը շուտ լրանում են⁵⁶, ուստի անհրաժեշտ է տրամադրել անձնագրեր, որտեղ էջերը լինեն ոչ քե 33, այլ ավելի շատ: Այդ դեպքում անձը կաշկանդված չի լինի սահմանը հատել օրական մի քանի անգամ և դրա հետ կապված՝ մատահոգված չի լինի անձնագրի էջերի ավարտվելու համար: Մինչդեռ ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման հարցում անձնագրային քաջքշուքները խոչընդոտ կարող են հանդիսանալ սահմանադրությամբ ամրագրված իրավունքի իրականացման համար:

Ինչպես նշել ենք, անձնագրային հսկողության հետ կապված լիազորությունները սահմանային կետում իրականացնում են սահմանապահ զորքերը⁵⁷, իսկ ՀՀ ոստիկանության և վիզաների վարչության աշխատակիցները անգակետում ի-

պարագայում ՀՀ-ում իրականացվում այդ հանգամանքի հսկողություն, չէ՞ որ այդ անձնագիրը ՀՀ-ում վավերական է, այսպես կոչված՝ «ելքի վիզա» չունենալը չի նշանակում, որ անձը իրավունք չունի դուրս գալու երկրից, դա զուտ նշանակում է, որ իր անձնագիրը օտարերկրյա պետությունում չի ճանաչվելու:

Մեկ այլ ուշագրավ հանգամանք է այն, որ հաճախ անձը, ունենալով ՀՀ վերադառնալու իրավունք, վերադառնալիս օտարերկրյա պետություններում անձնագրի վավերականության ժամկետը լրացած լինելու պարագայում նրա համար անցակետերում ստեղծում են խոչընդոտներ, որով խախտվում է նրա ազատ տեղաշարժվելու և հայրենիք վերադառնալու իրավունքը:

⁵⁵ Նկատենք, որ ՀՀ-ում աշխատանքներ են տարվում, ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի 2001 թ. թիվ 1373 բանաձևի համաձայն ահաբեկչության դեմ պայքարի միջոցառումների արդյունավետության բարձրացման, անձը հաստատող փաստաթղթերի նկատմամբ ներպետական հսկողությունը ուժեղացնելու համար և Եվրախորհրդարանի 2004 թ. դեկտեմբերի 2-ի որոշմամբ պետություններին առաջարկված՝ անձնագրերում անձի լուսանկարը որպես կենսաչափական իդենտիֆիկատոր ներառելու նպատակով, կենսաչափական տվյալներով անձը հաստատող փաստաթղթերի ներդրման համար: Կարծում ենք, նման անձնագրերի ներդրմամբ էլ ավելի կերաշխավորվի անձանց ազատ տեղաշարժի իրավունքը:

⁵⁶ Այդ մասին իրենց դժգոհությունը հայտնեցին նաև սահմանամերձ որոշ բնակավայրերի բնակիչներ, ովքեր հաճախակի են հատում սահմանային անցակետ: Կուզենայինք հիշել այն մասին, որ առաջարկել ենք ստեղծել սահմանամերձ բնակավայրերի համար պարզեցված անցակետ, որտեղ անձնագրային հսկողությունը կարող է իրականացվել առանց ելքի ու մուտքի անձնագրում նշագրման:

⁵⁷ Սահմանապահ զորքերի անձնագրային հսկողություն իրականացնելու լիազորությունների շրջանակում դիտարկվեց մի խնդիր, որը բացառապես չպետք է վերաբերի նրանց գործունեությանը, եղան շատ դեպքեր, երբ անձը եվրոպական որևէ երկիր մեկնելիս նրան հարցնում են. «Դու այդ երկիր գնալու վիզա՞ թույլտվություն ունե՞ս, քե՞ ոչ»: Նախ նշենք, որ անձն ազատ է երկրից դուրս գալու հարցում, երկրորդ՝ այդ արտասահմանյան երկրի մուտքի թույլտվության հարցը տվյալ երկրին է, ինչո՞ւ են նրանց փոխարեն մեր սահմանապահները մտահոգվում, և վերջապես՝ սահմանապահ ծառայության աշխատակիցները եթե իրենց իրավունք են վերապահում այլ երկրների մուտքի վիզաների առկայության հսկողություն իրականացնել, ապա պետք է իրազեկված լինեն կոնկրետ երկրների մուտքի արտոնագրային կարգի մասին, օրինակ՝ Մոնտենեգրո պետությունը, չլինելով Շենգեն համաձայնության անդամ, սահմանել է, որ եթե օտարերկրացին ունի Շենգեն գոտու մուտքի վիզա, ապա կարող է Մոնտենեգրո այցելել մեկ շաբաթով առանց վիզայի, սակայն մեր սահմանապահները, երբեմն անտեղյակ դրան և նմանատիպ այլ իրողություններին, երկրից դուրս գնացողներին հարցնում են երկիրը լքելու պատճառները, նպատակը, վերջնական ժամանման վայրը, թե ինչ ձևով են ստացել վիզաները՝ խոչընդոտելով անձանց ազատ տեղաշարժը:

ռականացնում են միայն ՀՀ մուտքի վիզաների տրամադրում: Այստեղ կարծում ենք, որ անցակետում երկու ծառայությունների առկայությունը հիմնավորված չէ, և մեկ ծառայության լիազորությունը կարող է անցակետում պատվիրակվել մուկ ծառայությանը՝ անցակետով տեղաշարժող անձանց շփումը տարբեր պաշտոնյաների հետ բացառելու և արագ ազատ տեղաշարժ կազմակերպելու համար:

Այսպիսով, խոսելով անձանց ազատ տեղաշարժի մասին՝ նկատեցինք, որ ՀՀ սահմանը հատելու համար առաջին հերթին անհրաժեշտ է անձը հաստատող փաստաթղթի առկայություն՝ ՀՀ քաղաքացու պարագայում՝ քաղաքացու անձնագիր, որից հետո անձն իրավունք է ստանում հատել սահմանը: Նկատենք, որ ՀՀ - քաղաքացու անձնագիր ստանալու և օտարերկրյա պետություններում դրա վավերականության հաստատման կարգն ու պայմանները վերջին տարում բավարար չափով հստակեցվել են, իսկ ընթացակարգը՝ դարձվել պարզ և մատչելի, ուստի կարծում ենք՝ այն որոշ բացառություններով չի կարող խոչընդոտ դառնալ անձանց ազատ տեղաշարժի հարցում:

2.3. Սահմանային անցակետերով ապրանքների տեղաշարժի և դրա հետ կապված ընթացակարգերի դիտարկումներ

ՀՀ օրենսդրությամբ սահմանային անցակետով ապրանքների տեղափոխման համար սահմանված կանոնների դիտարկման արդյունքում ի հայտ են գալիս նաև դրանց ազատ տեղաշարժի հետ կապված հիմնախնդիրներ, մասնավորապես՝ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ մասը, սահմանելով պետական սահմանի ռեժիմի շրջանակը, նշում է, որ այն ընդգրկում է անձանց, տրանսպորտային միջոցների, կենդանիների, բեռների և այլ գույքի՝ պետական սահմանով բացթողման կանոնները, որոնց հետ կապված՝ անցակետի լիազորությունները, ՀՀ մաքսային օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն, ընդգրկում է ՀՀ - մաքսային գործի կազմակերպման շրջանակը, այսինքն՝ ՀՀ մաքսային սահմանով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման կարգը և պայմանները, մաքսային վճարների գանձումը, մաքսային ձևակերպումները, մաքսային հսկողությունը, որոնք ՀՀ-ում կարգավորվում և իրականացվում են ՀՀ մաքսային օրենսգրքով ու այլ իրավական ակտերով սահմանված կարգով⁵⁸:


Պետական սահմանի անցման կետերում ստեղծվում են սահմանապահ գորքերի հսկիչ-անցագրային կետեր, որտեղ ՀՀ կառավարությունը սահմանում է մաքսային գոտի: Այդտեղ հսկողություն են իրականացնում բացառապես մաքսային մարմինները:

«Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պետական սահմանը հատող անձինք, տրանսպորտային միջոցները, կենդանիները, բեռներն ու այլ գույքը ենթակա են սահմանային, սանիտարական-կարանտինային, անասնաբուժական, ֆիտոսանիտարական վերահսկողության և մաքսային հսկողության: Այսպիսով՝ կարող ենք նշել, որ սահմանի և սահմանային անցակետի կառավարման գործում լիազորություններ ունեն մի քանի տարբեր պետական մարմիններ: «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի համաձայն՝ պետական սահմանի անցման կետերում առանձնացվում է տարածք, շինություն, որտեղ ուղղակիորեն իրականացվում է մաքսային հսկողություն: Այդ ժամանակ առաջ են գալիս բազմաթիվ հարաբերություններ տարբեր պետական մարմինների

⁵⁸ Տե՛ս ՀՀ մաքսային օրենսգիրք, հոդված 1:

մասնակցությամբ⁵⁹, ինչը ենթադրում է բավականին ինտենսիվ ձևով անձանց մասնակցություն, շահերի բախումներ, անձանց իրավունքների խախտման ռիսկեր և շատ ուրիշ խնդիրներ, սակայն այժմ մենք կներկայացնենք մի քանի դիտարկումներ՝ կապված մաքսային մարմնին սահմանային անցակետերում վերապահված լիազորությունների հետ, որոնք ուղղակիորեն առնչվում են ապրանքների՝ սահմանային անցակետերով տեղափոխման հետ:

Գծապատկեր 10.



Գծապատկեր 10-ում առաջադրված հարցին, թե ապրանքներ ներմուծելու կամ արտահանելու ժամանակ այն մաքսագերծելիս անձը ստիպված է ում հետ գործ ունենալ, մասնակիցների 48 %-ը պատասխանել է՝ մաքսային մարմինների և մի քանի պետական մարմինների և մաքսային բրոքերների հետ, 34 %-ը՝ մաքսային բրոքերների հետ, 18 %-ը՝ մաքսային մարմինների հետ, այլ կարծիքներ և հարցին չպատասխանողներ չեն եղել: Հաշվի առնելով մեծամասնության կարծիքը և սահմանային անցակետերի դիտարկումները՝ բոլորի համար պարզ կդառնա մեկ հանգամանք՝ ապրանքների տեղաշարժի դեպքում անձինք ստիպված են գործ ունենալ մի քանի տարբեր պետական մարմինների ու պաշտոնատար անձանց հետ: Այդ հանգամանքը ստեղծում է խնդիրներ ապրանքների ազատ տեղաշարժի հարցում, որի լուծման եղանակների մասին կխոսենք քիչ ավելի ուշ:

⁵⁹ Տե՛ս սույն աշխատության գծապատկեր 10, որտեղ նշված տվյալներից կարելի է ենթադրել, որ ապրանքների սահմանով տեղաշարժի ժամանակ ներմուծողն ու արտահանողը գործ ունեն տարբեր պետական մարմինների հետ, լինում են դեպքեր երբ նույնիսկ հստակ չգիտեն, թե որ պետական մարմնի հետ պետք է գործ ունենան: Կարծում ենք, որ այս խնդիրը երկակի բնույթ ունի. մի կողմից՝ ներմուծողի և արտահանողի՝ օրենքի ոչ բավարար իմացությունը, մյուս կողմից՝ օրենսդրությունը նախատեսում է տարբեր պետական մարմինների լիազորությունների իրականացում սահմանային անցակետում: Գտնում ենք, որ պետք է անցակետում անձինք շփվեն ավելի քիչ պաշտոնատար անձանց հետ:

Սահմանների կառավարման հետ կապված լայն իրավասություններով է օժտված ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն: Այդ կառույցում ներառված է ՀՀ մաքսային մարմինը: Նկատելով, որ պետական սահմանի անցման կետերում մաքսային **հսկողությունն իրականացվում է հենց մաքսատներում կամ մաքսային կետերում**, ՀՀ կառավարության 2008 թվականի սեպտեմբերի 4-ի N 1005-Ն որոշման Հավելված 2-ով ամրագրվել են նաև ՀՀ-ում գործող մաքսատներն ու մաքսային կետերը, որոնք տեղակայված են Հայաստան-Վրաստան սահմանային անցումային կետերում՝ Բազրատաշենի, Այրում-Ձիլիզայի, Գոգավան-Պրիվոլնոյեի, Բավրայի մաքսային կետերը և «Զվարթնոց» մաքսատունը:

Այսպիսի իրավական ամրագրումը բխում է «Սահմանների վրա բեռների հսկողության իրականացման պայմանների համաձայնեցման մասին» միջազգային կոնվենցիայից, որը ՀՀ-ի համար ուժի մեջ է մտել 1994 թվականի մարտի 8-ից:

Կոնվենցիայի 1-ին հոդվածի ա/ ենթակետի համաձայն՝ **մաքսատուն** նշանակում է պետական ծառայություն, որը պատասխանատվություն է կրում մաքսային օրենսդրության կատարման ապահովման և ներմուծման ու արտահանման տուրքերի և հարկերի հավաքման, ինչպես նաև բեռների ներմուծմանը, տարանցմանը և արտահանմանը վերաբերող այլ օրենքների ու կանոնների կիրառման համար, իսկ նույն հոդվածի բ/ ենթակետը **մաքսային հսկողությունը** սահմանում է որպես օրենքների և կանոնների կատարման ապահովման նպատակով կիրառվող միջոց, որոնց պահպանման համար պատասխանատվություն են կրում մաքսատները: ՀՀ-ում, փաստորեն, մաքսատների կազմում ստեղծվում են մաքսային կետեր, որոնք իրականացնում են տվյալ մաքսատան կազմում ընդգրկվող առանձին տարածքների մաքսային հսկողություն, որը ներառում է ՀՀ մաքսային գործը (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4.

Մաքսային գործի նպատակներն են՝
1. տնտեսական նպատակ , որը պետք է դրսևորվի ապրանքները մաքսային սահմանով տեղափոխելու ժամանակ մաքսային վճարների գանձման ձևով, <u>ապահովելով ապրանքների հավասար պայմաններում ազատ տեղաշարժը</u> .
2. կարգավորող՝ ռեգուլյատիվ նպատակն իրականացվում է ապրանքների ներմուծման և արտահանման՝ մաքսային սահմանով տեղափոխման, մաքսատուրքերի սահմանման և արգելքների ու քվոտաների ամրագրմամբ,
3. իրավապահպան նպատակն իրականացվում է պետական անվտանգության ապահովման, հասարակական կարգի, մարդկանց կյանքի ու առողջության, սպառողների շահերի պաշտպանության, մաքսանենգ ապրանքների տեղափոխման արգելման և այլ միջոցներով:

Ընդանրական կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում մաքսային գործի հիմնական նպատակը ՀՀ մաքսային սահմանի և մաքսային տարածքի անվտանգության ապահովումն է: Այն իր հերթին ենթադրում է մաքսային մարմնի կողմից սահմանի կառավարման-անվտանգության ապահովման բավականին մեծ լիազորություններ, և երբ խոսում ենք ապրանքների ազատ տեղաշարժի ապահովման մասին, առանցնահերթ պետք է նկատի ունենանք մաքսային գործի նպատակներից պետական անվտանգության ապահովման, հասարակական կարգի, մարդկանց կյանքի

ու առողջության, սպառողների շահերի պաշտպանության նպատակները, որոնց համատեքստում՝ անձանց կողմից իրենց տիրապետության և տնօրինման տակ գտվող ապրանքների ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման նպատակը:

Երբ խոսում ենք սահմանային անցակետերով ապրանքների տեղաշարժի մասին, որևէ խնդրի չենք հանդիպում, քանի դեռ չեն իրականացվում հսկողություն և վերահսկողություն այդ ընթացակարգի նկատմամբ, մինչև ապրանքների տեղաշարժի նկատմամբ մաքսային հսկողությունը⁶⁰, կամ պետական մարմինների կողմից չեն իրականացվում ապրանքների ազատ տեղաշարժի սահմանափակումներ կամ արգելքներ:

ՀՀ մաքսային օրենսգիրքն ամրագրում է, որ անձինք հավասար հիմունքներով իրավունք ունեն ՀՀ ներմուծել և ՀՀ-ից արտահանել ապրանքներ և տրանսպորտային միջոցներ: Նույն օրենսգրքով սահմանված կարգով՝ սահմանով ապրանքներ տեղափոխող անձանց իրավունքները կարող են սահմանափակվել միայն օրենքով սահմանված կարգով: Ապրանքների տեղաշարժը կարող է արգելվել միայն այն դեպքերում, երբ այդ ապրանքները և տրանսպորտային միջոցները վտանգ են ներկայացնում պետական և ազգային անվտանգության, հասարակական կարգի, մարդու կյանքի և առողջության, կենդանական և բուսական աշխարհի, շրջակա միջավայրի, բնակչության բարոյական արժեքների, պատմական մշակութային և հնագիտական արժեքների, անձանց սեփականության իրավունքների և օրինական շահերի համար⁶¹:

ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և այլ առարկաների մաքսային ձևակերպումներն իրականացվում են ՀՀ մաքսային օրենսգրքով, ինչպես նաև օրենսգրքի կիրառությունն ապահովելու համար ընդունված ենթաօրենսդրական ակտերով սահմանված կարգով: Մասնավորապես նշենք, որ ՀՀ մաքսային վարչության 11.06.1998 թվականի թիվ 70-ՄՎր հրամանով սահմանվել է մաքսային ձևակերպումների ընթացակարգը, ըստ որի՝

1/ Ապրանքների, առարկաների, իրերի, գույքի (նաև ժառանգական) անձնական օգտագործման իրերի (այսուհետև՝ ապրանքներ և այլ առարկաներ) արտահանման /ժամանակավոր արտահանման/ դեպքում՝

ա/ եթե ապրանքները, առարկաները, իրերը, գույքը արտահանվում են ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների կողմից, ապա տվյալ դեպքում մաքսային ձևակերպումներն իրականացվում են այն տարածաշրջանային մաքսատանը, որի գործունեության գոտում է գրանցված կազմակերպությունը,

բ/ եթե արտահանումն իրականացվում է ՀՀ քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից, արտահանվող ապրանքների և այլ առարկաների մաքսային ձևակերպումն իրականացվում է այն տարածաշրջանային մաքսատանը, որի գործունեության գոտին ընդգրկում է քաղաքացու բնակավայրը, կամ այն մաքսային կետում, որով ապրանքները և այլ առարկաներ արտահանվում են:

2/ Ապրանքների և այլ առարկաների ներմուծման դեպքում՝

⁶⁰ ՀՀ մաքսային օրենսգրքի 2-րդ հոդվածի ժգ) ենթակետի համաձայն՝ մաքսային հսկողություն է համարվում ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, ինչպես նաև միջազգային պայմանագրերով ամրագրված դրույթների պահպանման նպատակով մաքսային մարմինների կողմից իրականացվող միջոցառումների համակարգը, ինչը նույնպես մաքսային գործի մի մասնիկն է համարվում, և այն իրականացվում է նաև սահմանային անցակետերով ապրանքների տեղափոխման ժամանակ, և նկատենք, որ հիմնականում մաքսային հսկողության արդյունավետ և օրենսդրության պահանջներին համապատասխան իրականացումն է, որ կարող է ապահովել հայկաթացական սահմանային անցակետերով ապրանքների ազատ տեղաշարժի պայմանները:

⁶¹ Տե՛ս ՀՀ մաքսային օրենսգիրք, հոդվածներ 18 և 19:

ա/ կազմակերպությունների կողմից ներմուծվող ապրանքների և այլ առարկաների մաքսային ձևակերպումն իրականացվում է այն տարածաշրջանային մաքսատանը, որի գործունեության գոտում է գրանցված կազմակերպությունը,

բ/ քաղաքացիների կողմից ներմուծվող ապրանքների և այլ առարկաների մաքսային ձևակերպումն իրականացվում է այն մաքսային կետում, որով դրանք ներմուծվում են:

Կազմակերպությունների կողմից ներմուծվող կամ արտահանվող ապրանքների և այլ առարկաների ձևակերպումն իրականացվում է երկու ուղով:

Մինչ համապատասխան ուղի ընտրելը կազմակերպության կողմից մաքսային մարմիններին ներկայացվում են մաքսային ձևակերպումների համար անհրաժեշտ փաստաթղթերը: Նշված փաստաթղթերի տվյալները մուտքագրվում են համակարգիչ, և տպվում է լրացված բեռնամաքսային հայտարարագիրը, որը ստուգվում և ստորագրվում է կազմակերպության կողմից: Բեռնամաքսային հայտարարագրի տպման գործընթացից հետո իրականացվում է գնահատման գործընթացը, որի հետ սերտորեն կապված է վերոգրյալ նշված մաքսային ձևակերպման ուղիներից մեկի ընտրությունը:

ա/ առաջին ուղով հայտարարագրման ավտոմատ համակարգը թույլատրում է բեռնամաքսային գնահատում, և անհրաժեշտ փաստաթղթերի և վճարումների կատարումից հետո իրականացվում է մաքսային զննում,

բ/ երկրորդ ուղով բեռնամաքսային հայտարարագիրը ավտոմատ համակարգի կողմից չի գնահատվում, քանի որ կազմակերպությունը թույլ է տվել մաքսային ձևակերպումների կամ մաքսային վճարումների ժամկետային խախտումներ:

Ի դեպ, պետք է նշել, որ գործնականում մաքսային ձևակերպումների ժամանակ գոյություն ունեն երեք մաքսային զննության տեսակներ՝

1/ սովորական զննություն, որի ժամանակ մաքսային մարմինները իրականացնում են ակնադիտական մակերեսային զննություն,

2/ մասնակի զննություն և ստուգում, որի ժամանակ ստուգումը և զննությունն իրականացվում են ընտրողական կարգով,

3/ ամբողջական ստուգում, զննություն, որի ժամանակ ստուգվում և զննվում են ողջ ապրանքը և այլ առարկաները:

Ի տարբերություն կազմակերպությունների կողմից ներմուծվող կամ արտահանվող ապրանքների և այլ առարկաների մաքսային ձևակերպումների՝ քաղաքացիների կողմից տեղափոխվող ապրանքների և այլ առարկաների տեղափոխման ժամանակ մաքսային հայտարարագրերը լրացվում են միայն այն դեպքում, երբ դրանք գերազանցում են բնաիրային կամ գումարային քանակությունը:

Նման դեպքերում մաքսային տեսչի կողմից ստուգվում է լրացված հայտարարագրի ճշտությունը, որից հետո իրականացվում է քաղաքացու ապրանքների և այլ առարկաների զննում⁶²:


Այստեղ ուշագրավ է այն հարցը, որ առևտրային նպատակներով ապրանքների ներմուծման և արտահանման դեպքում սահմանային անցակետերում իրականացվում է բեռնափոխադրման ամփոփագրի ձևակերպում, և սահմանային անցակետում հիմնականում չի իրականացվում մաքսազերծում, բեռի նկատմամբ իրականացվում է արտաքին՝ փոխադրամիջոցի և կամ բեռնարկղի պահպանիչ՝ մաք-

⁶² Այդ մասին ավելի մանրամասն կներկայացնենք սույն աշխատության «Քաղաքացիների կողմից ապրանքների և իրերի տեղափոխումը սահմանային անցակետերով» ենթակետում:

սային ապահովման միջոցների զննություն, և առավել սեղմ ժամկետում բաց է թողնվում համապատասխան մաքսատուն կամ արտահանման դեպքում դեպի այլ երկիր: Այդ հանգամանքի պարզման համար սահմանային անցակետերով ապրանքների ներմուծմամբ զբաղվող գործարարներին արվել են հարցումներ (տե՛ս գծապատկեր 11):

Գծապատկեր 11.

Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների կողմից ապրանքներ ներմուծելու դեպքում մաքսային անցակետերում տրանսպորտային-մաքսային բեռնագրերը ձևակերպվում են



1. Կարճ ժամանակահատվածում՝ առանց որևէ խնդրի
2. Այն երկար ընթացակարգ է
3. Երբեմն այն կատարվում է ձգձգումներով
4. Այլ
5. Չեն պատասխանել

Գործարարներին առաջադրված այն հարցին, թե ապրանք ներմուծելու դեպքում մաքսային անցակետերում տրանսպորտային-մաքսային բեռնագրերը ինչպես են ձևակերպվում, հարցման մասնակիցների 34 %-ը պատասխանել է, որ այն երկար ընթացակարգ է, 17 %-ը՝ երբեմն այն կատարվում է ձգձգումներով, իսկ 59 %-ը չի պատասխանել: Ելնելով վերը նշված տվյալներից՝ կարելի է ենթադրել, որ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնողների համար մաքսային անցակետերում տրանսպորտային-մաքսային բեռնագրերի ձևակերպումը նույնպես որոշ չափով կարելի է համարել խնդիր, սակայն կարծում ենք, որ այն առավել խոչընդոտող ազդեցություն ունի սահմանային անցակետերում մինչև բեռնափոխադրման ամփոփագրերի կազմումը մի շարք այլ պետական մարմինների կողմից հսկողության իրականացումը⁶³:


Այս առումով կարծում ենք, որ ապրանքների ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման համար էական նշանակություն ունեն մասնաշաղկապային մաքսային անցակետերում և մաքսատներում մաքսազերծման գործընթացի պարզությունն ու մաքսային ձևակերպումների կարճ տևողության անհրաժեշտությունը: Նկատենք, որ այդ ընթացակարգերը բավարար չափով հուսադրող են (տե՛ս գծա-

⁶³ Այդ մասին խոսել ենք քիչ առաջ, տե՛ս Գծապատկեր 10 և դրա հետ կապված մտահանգումները:

պատկեր 12)՝ նկատի ունենալով, որ բեռնափոխադրող և ապրանքների նեմուծում և արտահանում իրականացնող կազմակերպությունների ներկայացուցիչներին իրականացված հարցման ժամանակ առաջադրված այն հարցին, թե «Ինչպիսի՞ ընթացակարգ է մաքսագերծումը սահմանային-մաքսային անցակետերում», մասնակիցների 35 %-ը պատասխանել է, որ այն երկար ու բարդ ընթացակարգ է, 47%-ը՝ այն իրականացվում է շատ կարճ ժամանակահատվածում, 18%-ը պատասխանել է՝ անհասկանալի է, քանի որ մաքսային մարմինների կողմից դրսևորվում է անտարբերություն: Վերը նշված տվյալները որոշ չափով հուսադրող են, սակայն չի կարելի ասել, որ մաքսագերծման ընթացակարգը գտնվում է կատարյալ վիճակում, քանի որ այն երբեմն իրականացվում է շատ ձգձգումներով, երբեմն էլ նույնիսկ մատնվում անտարբերության մաքսային մարմինների կողմից⁶⁴:

Գծապատկեր 12.


Ինչպիսի՞ ընթացակարգ է մաքսագերծումը սահմանային-մաքսային անցակետերում



- 1
- 2
- 3
- 4
- 5

1. Այն երկար ու բարդ ընթացակարգ է
2. Այն իրականացվում է շատ կարճ ժամանակահատվածում
3. Անհասկանալի, քանի որ մաքսային մարմինների կողմից դրսևորվում է անտարբերություն
4. Այլ
5. Չեն պատասխանել

⁶⁴ Անտարբերության հանգամանքը դիտարկելու անհարաժեշտությունն առաջ եկավ մաքսային անցակետերի աշխատանքի մոնիթորինգի արդյունքում, երբ հանդիպեցինք դեպքի, որ բեռնված տրանսպորտային միջոցը հասել էր անցակետ, սակայն մի քանի օր էր, ինչ նրան չէին առաջարկում արտահանել և ազատել անցակետի տարածքը, կամ ֆիզիկական անձը ուղեբեռը ձեռքին հատում էր սահմանային անցակետը, և որևէ մաքսային ծառայող ուշադրություն իսկ չդարձրեց այդ քաղաքացու տեղաշարժին, ու անտարբերության մատնված ուղեբեռը առանց զննության հատեց սահմանը: Նկատենք, որ այն բաղկացած էր բավականին մեծ երկու պայուսակից:



Նշենք, որ սահմանային անցակետերով ապրանքների տեղաշարժի դեպքում առկա են մեծ թվով բարդություններ: «Սահմանով ապրանքներ ներմուծելիս կամ արտահանելիս առկա՞ են բարդություններ» հարցին հարցման մասնակիցներից 17%-ը պատասխանել է՝ այո, առկա են, 83%-ը պատասխանել է՝ երբեմն ապրանքներ ներմուծելիս կամ արտահանելիս բարդություններ չկան: Հիմնվելով հարցման մասնակիցների մեծամասնության կարծիքի վրա՝ ակնհայտ է դառնում, որ ապրանքներ ներմուծելիս կամ արտահանելիս առկա բարդություններն ունեն շարունակական բնույթ, սակայն այն չի դրսևորվում բոլոր դեպքերում: Նկատենք, որ այդ հանդիպող բարդությունները կապված են մի շարք գործոնների հետ, որոնք են՝ ներմուծողների ոչ բավարար օրենքների իմացությունը, քիչ բարդ ստանդարտացված մաքսազերծման ընթացակարգերը, չափից շատ թղթաբանությունը, մեծ այն հանգամանքը, որ ներմուծողը կամ արտահանողը ստիպված է գործ ունենալ ոչ միայն մաքսային բրոքերների հետ, այլև այլ պետական մարմինների հետ, ինչը լրացուցիչ խոչընդոտներ է ստեղծում: Կարծում ենք, որ անհրաժեշտ է աշխատանքներ տանել հասարակության այն հատվածի՝ սահմանով ապրանքների տեղաշարժի կանոնների վերաբերյալ իրավական գիտելիքների մակարդակը բարձրացնելու ուղղությամբ, ովքեր հաճախակի են իրականացնում ապրանքների տեղաշարժով պայմանավորված արտաքին տնտեսական գործունեություն: Անհրաժեշտ է հաճախակի կազմակերպել տարբեր իրազեկող դասընթացներ, սեմինարներ, ինչպես մեծ ավելի պարզ ու մատչելի դարձնել մաքսային կանոնները, որը կհստակեցնի ներմուծող-արտահանող և պետական մարմին շփումը:

Քաղաքացիների կողմից ապրանքների և իրերի տեղափոխումը սահմանային անցակետերով

Մաքսային անցակետերում ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքների՝ նրանց ուղեբեռի նկատմամբ իրականացվում է հսկողություն՝ սահմանված ընդհանուր մաքսային կանոններով: ՀՀ սահմանային անցակետերով ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքների ազատ տեղաշարժի իրավունքը ուղղակիորեն կապված է հենց ֆիզիկական անձանց ազատ տեղաշարժի իրավունքի հետ՝ նպատակ հետապնդելով տեղափոխվող ապրանքների առկայության պարագայում չսահմանափակել դրանց ազատ տեղաշարժը, որոնք, հանդիսանալով անձնական օգտագործման ապրանքներ, խիստ մաքսային հսկողության պարագայում կարող են տեղաշարժի խոչընդոտ հանդիսանալ հենց իրենց՝ այդ ապրանքները տեղափոխողների համար: Նշենք, որ ֆիզիկական անձանց՝ քաղաքացիների կողմից սահմանային անցակետերով տեղաշարժվող ապրանքներ են հանդիսանում անձնական, ընտանեկան և այլ նպատակներով օգտագործման համար նախատեսված ապրանքները, որոնք կապված չեն ձեռնարկատիրական գործունեության հետ և չեն հանդիսանում այդ գործունեության առարկաներ:

Որպեսզի ընտրվի սահմանային անցակետով ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքների նպատակային և համաչափ հսկողության տեսակ, առաջին հերթին անհարժեշտ է պարզել մի քանի կարևոր ելակետ՝ ֆիզիկական անձի կողմից տեղափոխվող ապրանքների բնույթը, քանակն ու այդ անձի կողմից սահմանային անցակետով այդպիսի ապրանքների տեղափոխության հաճախականությունը, ինչից հստակորեն պարզ կդառնա ապրանքի տեղափոխման նպատակը:

Քաղաքացիների կողմից սեփական կարիքների բավարարման համար սահմանային անցակետերով տեղափոխվող ապրանքների նկատմամբ ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված են հսկողության ավելի պարզ մեխանիզմներ, ինչպես նաև այլ օրենսդրությամբ սահմանված են արտոնություններ՝ որոշակի ապրանքների և չափաքանակների տեսքով, որոնց տեղաշարժի դեպքում մաքսային հսկողությունն իրականացվում է պարզեցված կարգով, և չի իրականացվում մաքսային ձևակերպում, չեն գանձվում մաքսային վճարներ: Այսպես օրինակ՝ ՀՀ օրենսդիրը սահմանել է նաև Ֆիզիկական անձանց կողմից ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների որոշ արտոնություններ: Համաձայն ՀՀ մաքսային օրենսգրքի 105-րդ հոդվածի՝ ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրք վճարելու որպես ուղեկցող բեռ ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել ապրանքներ, որոնց ներմուծման համար մաքսատուրքի դրույքաչափը այդ օրենսգրքով սահմանված չէ 0 տոկոս, և որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 50 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 150 հազ. դրամը, միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքներ, որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 20 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը՝ 50 հազար դրամը: Ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրքի վճարման ՀՀ մաքսային սահմանով տեղափոխել իրենց վրա կրվող կամ ուղեբեռում գտնվող անձնական օգտագործման իրերը: Որպես այդպիսիք դիտվում են այն ապրանքները, որոնք չունեն գործարանային փաթեթավորում, պիտակավորում և գտնվում են ուղեկցվող բեռում, և կամ ֆիզիկական անձինք կրում են իրենց վրա ՀՀ մաքսային սահմանը հատելու պահին: ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրքի վճարման ներմուծել

իրենց անձնական օգտագործման գույքը: Վերոհիշյալ արտոնությունից նույն անձը կարող է օգտվել հինգ տարվա ընթացքում մեկ անգամ: ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձինք են համարվում ՀՀ տարածքից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ պետություն մշտական բնակության մեկնած՝ ՀՀ մշտական բնակության վայրի հաշվառումից դուրս եկած ՀՀ քաղաքացիները, ինչպես նաև նախկինում ՀՀ-ում մշտական բնակության վայր չունեցած ՀՀ քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, որոնք ՀՀ ժամանելուց հետո «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ ՀՀ-ում հաշվառվում են որպես մշտական բնակիչ և մաքսային մարմիններին են ներկայացնում ՀՀ մշտապես բնակվելու փաստը հաստատող փաստաթուղթը՝ ֆիզիկական անձի մշտական բնակության վայրի նշումով անձնագիրը (կամ դրան փոխարինող այլ փաստաթուղթ): Ընդ որում, ՀՀ տարածքից ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով այլ պետություն մշտական բնակության մեկնած ՀՀ քաղաքացիները մշտական բնակության նպատակով ՀՀ ժամանելիս մաքսային մարմիններին պետք է ներկայացնեն նաև «Բնակչության պետական ռեգիստրի մասին» և «Հյուպատոսական ծառայության մասին» ՀՀ օրենքներին համապատասխան՝ օտարերկրյա պետություններում մշտապես բնակվելու փաստը հաստատող փաստաթուղթը՝ քաղաքացու անձնագիրը՝ օտարերկրյա պետությունում ՀՀ հյուպատոսական ծառայության «Վերցված է հյուպատոսական հաշվառման մշտական բնակության համար» դրոշմով, և (կամ) օտարերկրյա պետության պետական լիազոր մարմնի կողմից տրված մշտական բնակության փաստը հավաստող տեղեկանք, որի իսկության վերաբերյալ ՀՀ արտաքին գործերի նախարարության կողմից տրվել է դրական եզրակացություն: ՀՀ մշտական բնակության ժամանող ֆիզիկական անձանց անձնական օգտագործման գույքը պետք է ՀՀ - ներմուծվի մշտական բնակության նպատակով ՀՀ-ում հաշվառվելու օրվանից 180 օրվա ընթացքում: Օտարերկրյա պետություններում գործող ՀՀ դիվանագիտական ծառայության մարմիններում ծառայող դիվանագետներն ու դիվանագիտական ծառայությանը կից գործող ռազմական, առևտրական և այլ կցորդները, Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու՝ այլ երկրների թեմերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից հոգևոր ծառայության նշանակված քաղաքացիները ծառայության ավարտից հետո առանց մաքսատուրքի վճարման կարող են ներմուծել իրենց անձնական օգտագործման գույքը: ՀՀ ֆիզիկական անձինք կարող են առանց մաքսատուրքի վճարման մաքսային սահմանով տեղափոխել իրենց ժառանգական գույքը՝ մաքսային մարմիններին ժառանգության մասին համապատասխան փաստաթղթեր ներկայացնելու դեպքում: Օրենքով կարող են սահմանվել մաքսատուրքի այլ արտոնություններ⁶⁵: Նկատենք, որ ապրանքները սահմանային անցակետով տեղաշարժելու համար սահմանված արտոնություններն ու սահմանափակումները հավասարապես կիրառվում են թե՛ օտարերկրյա քաղաքացիների և թե՛ քաղաքացիություն չունեցող անձանց համար:

ՀՀ մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից առանձին ապրանքների և միջազգային փոստային առաքումների միջոցով տեղափոխվող ապրանք-

⁶⁵ Անհրաժեշտ ենք համարում նշել, որ սահմանային անցակետերով՝ մաքսային սահմանով, անհատ ձեռնարկատերերի և այդպիսիք չհամարվող ֆիզիկական անձանց կողմից առևտրային քանակության ապրանքների տեղաշարժի (ներմուծում-արտահանում) դեպքում մաքսային իսկողությունն ու ձևակերպումներն իրականացվում են առանց ֆիզիկական անձանց համար անձնական օգտագործման համար սահմանված ապրանքների չափաքանակի պարագայում կիրառվող արտոնությունների:

ների տեղափոխման համար ՀՀ կառավարությունը սահմանում է պարզեցված կարգ:

ՀՀ մաքսային օրենսգրքի համաձայն՝ ֆիզիկական անձինք կարող են, ՀՀ - կառավարության կողմից սահմանված կարգով, մաքսային սահմանով առանց մաքսատուրք վճարելու տեղափոխել միջազգային փոստային առաքումներով փողադրվող ապրանքներ, որոնց ընդհանուր քաշը չի գերազանցում 20 կիլոգրամը, իսկ ընդհանուր մաքսային արժեքը 50 հազար դրամ է:

Նշենք, որ ՀՀ կառավարության կողմից սահմանվել են նաև կանխիկ դրամական միջոցների այն չափաքանակները, որքան կարող են ֆիզիկական անձինք իրենց հետ տեղափոխել սահմանային անցակետը հատելիս:

Ֆիզիկական անձանց կողմից հայ-վրացական սահմանային անցակետերով ապրանքների տեղաշարժի հետ կապված խնդիրներ են ծագում, երբ անձինք տեղափոխում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված բնափրային չափերը գերազանցող քանակի և արժողության ապրանքներ:


Որոշակի խնդիրներ կարող են ի հայտ գալ նաև ֆիզիկական անձանց կողմից սահմանային անցակետերով ապրանքներ ներմուծելիս ու արտահանելիս: Նման խնդիրներ ազատ տեղաշարժի ապահովման տեսանկյունից հիմնականում առաջանում են ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքների՝ բեռների, զննության ժամանակ⁶⁶, ինչպես նաև երբ ապրանքների տեղափոխումը սահմանափակվում է օրենքի կամ դատարանի որոշման հիման վրա:

Մասնավորապես նշենք, որ ֆիզիկական անձանց կողմից բեռների տեղափոխման, սահմանային անցակետի զննության վերաբերյալ կատարված հարցման ժամանակ (տե՛ս գծապատկեր 14) այն հարցին, թե ֆիզիկական անձանց բեռը ներմուծելիս կամ արտահանելիս բեռի զննությունը ինչպես է իրականացվում, մասնակիցների 17%-ը պատասխանել է, որ այն իրականացվում է արագ՝ հատուկ տեխնիկայի կիրառմամբ, առանց խոչընդոտների, 66 %-ը՝ առանց տեխնիկական միջոցների կիրառման և երկար անցանկալի ընթացակարգ է, իսկ 17 %-ը հրաժարվել է պատասխանելուց, այլ կարծիքներ չեն եղել: Ելնելով այն հանգամանքից, որ մեծամասնությունը դժգոհ է ֆիզիկական անձանց բեռների զննության ընթացակարգից, կարելի է ենթադրել, որ բեռը ներմուծելիս կամ արտահանելիս զննության հստակ մշակված ու պարզ մեխանիզմներ չկան, ինչն էլ բազմաթիվ ազատ տեղաշարժի խոչընդոտների պատճառ է դառնում: Տվյալ պարագայում, կարծում ենք, անհրաժեշտ է նախ և առաջ հստակեցնել, թե ինչ է ֆիզիկական անձանց բեռի զննման ընթացակարգը, ներմուծողը և արտահանողը ինչ փաստաթղթեր պետք է ներկայացնեն, հստակ մշակի, թե կոնկրետ ո՞ր պետական մարմինը պետք է զբաղվի դրանով, ինչպես նաև սահմանային-մաքսային անցակետերն ապահովվեն հատուկ տեխնիկական միջոցներով ֆիզիկական անձանց ուղեբեռի զննման համար:

⁶⁶ ՀՀ կառավարության կողմից սահմանվել է ՀՀ միջազգային օդանավակայանով և ավտոմոբիլային տրանսպորտով մաքսային սահմանով մեկնող կամ ժամանող ֆիզիկական անձանց կողմից ուղեկցվող բեռների մաքսային հսկողության իրականացման երկուդային համակարգի կիրառման կարգ, որով և սահմանվել են նաև ֆիզիկական անձանց կողմից տեղափոխվող ապրանքների և դրամական միջոցների բնափրային չափերը: 21.11.2003 թ. թիվ 1927-Ն և 03.07.2008 թ.թիվ 707-Ն որոշումներ:

Գծապատկեր 14.


Ֆիզիկական անձանց կողմից ներմուծվող կամ արտահանվող բեռի զննությունը



1. Երբեմն դրսևորվում է անտարբերություն և բեռը ընդհանրապես չի զննվում
2. Իրականացվում է արագ՝ հատուկ տեխնիկայի կիրառմամբ՝ առանց խոչընդոտների
3. Չեն պատասխանել
4. Այլ
5. Իրականացվում է առանց տեխնիկական միջոցների կիրառման, և երկար անցանկալի ընթացակարգ է

Գծապատկեր 15.

Տրանսպորտային միջոցներ ներմուծելիս տրանսպորտային միջոցի զննությունը և ձևակերպումը



1. Ծախսատար է և երկար ընթացակարգ է
2. Ձևնունն և ձևակերպումը կատարվում է կարճ ժամանակահատվածում
3. Որևէ ձևակերպում չի կատարվում
4. Չեն պատասխանել
5. Այն երբեմն իրականացվում է ձգձգումներով

Այն հարցին, թե տրանսպորտային միջոցներ ներմուծելիս տրանսպորտային միջոցի զննությունը և ձևակերպումը ինչպիսին է, մասնակիցների 32 %-ը պատասխանել է, որ այն ծախսատար և երկար ընթացակարգ է, 51%-ը նշել է, որ այն երբեմն իրականացվում է ձգձգումներով, իսկ 17 %-ը չի պատասխանել: Վերը նշված տվյալներից ելնելով՝ կարելի է հետևություն անել, որ այստեղ ևս առկա են խնդիրներ: Կարծում ենք, այն կապված է տրանսպորտային միջոցի զննման և ձևակերպման ընթացքում սահմանային անցակետերում իրականացվող ֆիսկալ նպատակներ հետապնդելու հետ: Նկատենք, որ հայ-վրացական սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժն ուղղակիորեն պայմանավորված է նաև տրանսպորտային միջոցների տեղաշարժի ազատությամբ, եթե ավելի պարզ են տրանսպորտային միջոցների տեղաշարժի համար սահմանված կանոնները, և այն հատում է սահմանը կարճ ժամանակամիջոցում, ապա անձանց մոտ չի կարող լինել մտավախություն սահմանին ձգձգումների վերաբերյալ, և սահմանը հատելիս առավել ապահով և ազատ կլինեն⁶⁷:

Նաև նկատենք, որ հայ-վրացական սահմանային անցակետերով տրանսպորտային միջոցների տեղաշարժի դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով անհրաժեշտ է իրականացնել տրանսպորտային միջոցների պարտադիր հայտարարագրում, սակայն երբ ֆիզիկական անձն իր անձնական օգտագործման ավտոմեքենայով է տեղաշարժվում, ապա այդ դեպքում պարզապես սահմանային անցակետերում իրականացվում է դրանց հաշվառում ինչ-որ մատյանում, որն իրականացվում է թե՛ մաքսային մարմնի և թե՛ սահմանապահ զորքերի կողմից: Գտնում ենք, որ նման պրակտիկան միգրացիային պայմաններ է ստեղծում անձանց որոշակի կատեգորիայի համար՝ ապահովելով ազատ տեղաշարժը, սակայն պետք է նշել, որ այն անհրաժեշտ է ամրագրել օրենքով, որից հետո բացառել նաև մի քանի տարբեր մարմինների կողմից ավտոմեքենայի զննության և հսկողության պրակտիկան:

Մշակութային արժեքների տեղաշարժը սահմանային անցակետերով

Հայ-վրացական սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի մասին խոսելիս ուշագրավ են նաև մշակութային արժեքների՝ հայ-վրացական սահմանային անցակետով տեղաշարժի հարցերը:

Մշակութային արժեքներն այն առարկաներն ու ստեղծագործություններն են, որոնք, անկախ ստեղծման ժամանակից, ունեն հնագիտական, ազգագրական,

⁶⁷ Այստեղ ուշագրավ է այն հանգամանքը, որ հայ-վրացական սահմանային անցակետերը անձանց հատելու դեպքերի դիտարկումների արդյունքում պարզ դարձավ, որ դեպի երկրից մեկնելիս հայկական անցակետը և համապատասխան հսկողությունները ֆիզիկական անձինք հաղթահարում են 15-20 րոպե տևողությամբ ժամանակահատվածում, դեպի հակառակ՝ Հայաստանի տարածք մուտք գործելիս ուղեբեռի բացակայության դեպքում՝ 10-15 րոպե, իսկ բնակիրային և արժեքային չափերը գերազանցող ուղեբեռի առկայության դեպքում անձը սահմանը հատում է 15-30 րոպե ժամանակահատվածում: Տրանսպորտային միջոցների տեղաշարժը անցակետում տևում է վարորդի կամ ուղեկցողի՝ տրանսպորտային փաստաթղթերի ձևակերպումների և զննության հետ միասին 20-30 րոպե, եթե ձևակերպվում է ժամանակավոր ներմուծում կամ արտահանում, իսկ տրանսպորտային միջոցների ազատ շրջանառության համար ՀՀ ներմուծում մաքսային ռեժիմ ընտրելու դեպքում սահմանային անցակետում ձևակերպումը կարող է տևել 30 րոպեից սկսած, և երբեմն տևում է մի քանի ժամ, մինչև համապատասխան տրանսպորտային բեռնային ձևակերպումներ կկատարվեն սահմանային անցակետում: Երկաթուղային տրանսպորտով սահմանը հատելիս զննությունը տևում է 15-20 րոպե, հսկողությունն իրականացվում է արագ, զննաքի բոլոր թաքստոցները կապարակնված են, մաքսանենգ ապրանքներ թաքցնելու տեղ չկա, և զննաքն արագ հատում է սահմանը:

պատմական, կրոնական, գեղարվեստական, գիտական կարևոր նշանակություն: ՀՀ-ում մշակութային արժեքները կարող են ներմուծվել կամ արտահանվել «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքով ու համապատասխան այլ իրավական ակտերով սահմանված կարգով: Մասնավորապես՝ «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքով կարգավորվում են մշակութային արժեքների արտահանման և ներմուծման ընթացքում առաջացող հարաբերությունները, այդ թվում՝ մշակութային արժեքների ապօրինի արտահանման և ներմուծման կանխման հետ կապված հարաբերությունները:

Արգելվում է ՀՀ տարածքից արտահանել մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքները՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից կամ պատկանելությունից: Ինչպես նաև արգելվում է ՀՀ տարածքից արտահանել ՀՀ պետական պահոցներում՝ թանգարաններում, արխիվներում, գրադարաններում, մշտապես պահպանվող մշակութային արժեքները, բացառությամբ ժամանակավոր արտահանման դեպքերի:

ՀՀ «Մաքսային օրենսգրքի» 41-րդ հոդվածով «ժամանակավոր արտահանում» մաքսային ռեժիմը կարգավորում է հետագա ներմուծման պայմանով ապրանքների արտահանումը ՀՀ մաքսային տարածքից: Այսպիսի մաքսային ռեժիմով արտահանման դեպքում է, որ հնարավոր է հիշյալ մշակութային արժեքների՝ ՀՀ տարածքից ժամանակավոր արտահանումը:

Մշակութային արժեքների ժամանակավոր արտահանումն իրականացվում է ցուցահանդեսներ կազմակերպելու, վերականգման աշխատանքներ և գիտական հետազոտություններ կատարելու, թատերական, համերգային և այլ գեղարվեստական գործունեության նպատակներով:

Մշակութային արժեքներ արտահանելու կամ ժամանակավոր արտահանելու համար անհրաժեշտ է ստանալ ՀՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից տրվող վկայագիր: Վկայագիր ստանալու համար պետք է ներկայացվի հայտ, որը պարունակում է հայտարարատուի լրիվ անվանումը, գտնվելու վայրը, պետական գրանցման վկայականի պատճենը, մշակութային արժեքի անվանումը, քանակը, արտահանման նպատակը, արտահանման երկիրը, հայտարարություն սեփականության մասին: Վկայագիրը տրվում է հայտը ներկայացնելուց հետո՝ 2 օրվա ընթացքում, բացառություն են կազմում հետախուզման մեջ գտնվող մշակութային արժեքները, որոնց արտահանման համար ներկայացնելու դեպքում լիազորված պետական մարմինը պարտավոր է այդ մասին անհապաղ հայտնել իրավապահ մարմիններին:

Պետական սեփականություն համարվող մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման հայտը ներժվում է, եթե՝

1. ժամանակավոր արտահանման ներկայացված մշակութային արժեքները համարվում են մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքներ՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից և պատկանելությունից,
2. փորձաքննության եզրակացության հիման վրա ժամանակավոր արտահանման ներկայացված մշակութային արժեքների պահպանվածության աստիճանը թույլ չի տալիս փոփոխել նրանց պահպանման պայմանները,
3. մշակութային արժեքները գտնվում են արգելանքի տակ,
4. այն պետությունում, ուր նախատեսվում է ժամանակավոր արտահանել մշակութային արժեքները, տեղի է ունեցել բնական աղետ, առկա են զինված ընդհա-

րումներ կամ մշակութային արժեքների պահպանության ապահովմանը խոչընդոտող իրավիճակներ⁶⁸:

Արտահանվող կամ ժամանակավոր արտահանվող մշակութային արժեքները ենթակա են պարտադիր փորձաքննության, սակայն բացառություն են կազմում մինչև 50 տարվա վաղեմություն ունեցող՝ կերպարվեստի և դեկորատիվ-կիրառական արվեստի ստեղծագործությունները: Փորձաքննությունն իրականացվում է մշակութային արժեքների պահպանության համապատասխան փորձագիտական հանձնաժողովի միջոցով: Փորձագիտական եզրակացության հիման վրա լիազորված մարմինն օրենքին համապատասխան արտահանման համար ներկայացված առարկաների վերաբերյալ կայացնում է արտահանման թույլատվության կամ դրա մերժման որոշումներ:

Մշակութային արժեքների պահպանման ցուցակում գրանցված կամ գրանցման ենթակա պետական սեփականություն չհամարվող մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման հայտը լիազորված պետական մարմին է ներկայացնում տվյալ մշակութային արժեքի սեփականատերը կամ նրա կողմից լիազորված անձը: Մշակութային արժեքների ժամանակավոր արտահանումը արտահանման իրավունքի վկայագրի հիման վրա թույլատրվում է ՀՀ մաքսային օրենսգրքով մշակութային արժեքի ժամանակավոր արտահանման համար նախատեսված առավելագույն ժամկետով:

Մշակութային արժեքների ներմուծումը կամ ժամանակավոր ներմուծումը նույնպես իրականացվում է ՀՀ մաքսային օրենսդրությամբ սահմանված կարգով: Մաքսային օրենսգրքի 37-րդ հոդվածի «ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով կարգավորվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը:

Ընդհանրացնելով կուզենանք մշել, որ սահմանային անցակետերով մշակութային արժեքներ համարվող ապրանքների ազատ տեղաշարժի համար ՀՀ-ում գործող օրենքները բավարար չափով կարգավորում են թե՛ այդպիսի արժեքների տեղաշարժի սահմանափակումների⁶⁹ անհրաժեշտ պայմանները և թե՛ հստակորեն ապահովում են անձանց համար իրենց սեփականությունը հանդիսացող մշակութային արժեքներին իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու իրավունքի իրացումը՝ որոշակի պայմաններով թույլատրելով դրանց արտահանումն ու ներմուծումը:

⁶⁸ Տե՛ս՝ «Մշակութային արժեքների արտահանման և ներմուծման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված:

⁶⁹ Միաժամանակ մշենք, որ ի թիվս ՀՀ ներպետական իրավական ակտերի՝ մշակութային արժեքների տեղաշարժի հետ կապված՝ Հայաստանը կնքել է բազմաթիվ միջպետական համաձայնագրեր, մասնավորապես՝ ՀՀ մաքսային վարչությունը համաձայնագրեր է կնքել Թուրքմենստանի պետական մաքսատան, Տաջիկստանի Հանրապետության կառավարությանն առընթեր մաքսային կոմիտեի, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության պետական մաքսային տեսչության հետ, ՀՀ ՊԵ-ի նախարարության և Ղազախստանի Հանրապետության պետական եկամուտների նախարարության միջև կնքվել են համաձայնագրեր՝ կապված սահմաններով մշակութային արժեքների ապօրինի տեղափոխման դեպքերի կանխարգելման և վերադարձման հարցերով համագործակցության և փոխօգնության մասին:

Սանիտարական-կարանտինային հատուկ հսկողությունը սահմանային անցակետերում

Պետական սահմանի կառավարման, մասնավորապես՝ սահմանային անցակետերի աշխատանքների կազմակերպման և անցակետով ապրանքների տեղաշարժի համար դիտարկումների իրականացման հարցի առնչությամբ անհրաժեշտ է նշել նաև պետական կառավարման այլ մարմինների կողմից անցակետերում իրականացվող հսկողության անձանց և ապրանքների սահմանային անցակետերով տեղաշարժի մասին: Մասնավորապես՝ «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն՝ պետական սահմանում հսկողություն են իրականացնում նաև սանիտարական-կարանտինային, անասնաբուժության և ֆիտոսանիտարիայի մարմինները: Նշենք, որ այդպիսի հսկողությունն ուղղակիորեն կապված է նաև անձանց և ապրանքների՝ սահմանային անցակետերով ազատ տեղաշարժի իրավունքի իրացման հետ:

Նշված մարմիններն իրենց վերահսկողական գործառույթները իրականացնում են այն դեպքում, երբ ՀՀ պետական սահմանով կատարվում է կարանտինային հսկողության ենթակա անձանց, կենդանիների, բույսերի և այլ վտանգավոր օրգանիզմներ պարունակող ապրանքների, իրերի և այլ առարկաների տեղափոխություն՝ տեղաշարժ: Պետական սահմանի անցման կետերում առանձնացվում է տարածք, շինություն, որտեղ ուղղակիորեն իրականացվում է սահմանային, սանիտարական-կարանտինային, անասնաբուժական, ֆիտոսանիտարական վերահսկողություն⁷⁰: Այսպիսով՝ ներկայացնենք սահմանային անցակետում այդպիսի վերահսկողության իրականացման ձևերը:

1. Ապրանքների՝ սահմանային անցակետերով տեղափոխելիս ֆիտոսանիտարական հսկողությունը

Ինչպես նշվեց, սահմանային անցակետերում իրականացվում է սանիտարական հսկողություն, որոնց շարքում առանձնացվում է ֆիտոսանիտարական՝ բուսասանիտարական հսկողությունը, որը կարգավորվում է «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքով: Նշված օրենքով կարգավորվում են ՀՀ պետական կառավարման լիազորված մարմնի՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության բույսերի կարանտինի պետական տեսչության⁷¹ և ՀՀ-ում գործող ֆիզիկական ու իրավաբանական անձանց հարաբերությունները բուսասանիտարիայի բնագավառում⁷²: Այդ տեսչության կարևորագույն խնդիրներից են կանխարգելել բույսերի, վնասակար օրգանիզմների, հիվանդությունների և մոլախոտերի ներթափանցումը ՀՀ - տարածք և ապահովել բուսասանիտարական կանոնների պահպանումը բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող այլ առարկաների ներմուծման ու արտահանման գործառնությունների ժամանակ: Հիշյալ խնդիրներն իրականացնելու համար տեսչությունը սահմանային անցակետերում ունի իր առանձնացված տա-

⁷⁰ Տե՛ս «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդված:

⁷¹ ՀՀ կառավարության 21.11.2002 թ. թիվ 1888-Ն որոշմամբ ստեղծվել է ՀՀ գյուղատնտեսության նախարարության բույսերի կարանտինի պետական տեսչությունը:

⁷² «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենք, 1-ին հոդված:

րածքային մարմինները, որտեղ անմիջականորեն իրականացվում է բուսասանիտարական հսկողություն:

Հայ-վրացական սահմանային անցակետերով ներմուծվող ապրանքների զգալի մասը ենթակա է բուսասանիտարական և կարանտինային հսկողության: «Մաքսային օրենսգրքի» 118-րդ հոդվածի համաձայն՝ «օրենքով սահմանված դեպքերում ՀՀ մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումն ավարտվում է այլ պետական մարմինների կողմից՝ անասնաբուժական, ֆիտոսանիտարական, բնապահպանական և այլ հսկողության ավարտից հետո»: Այդ պահանջն ամրագրված է նաև ՀՀ մաքսային վարչության 11.06.1998 թ. թիվ 70-ՄՎր հրամանի 3.5.1. կետի 8-րդ պարբերությամբ, որտեղ նշված է. «Անհրաժեշտության դեպքում հայտարարագրված ապրանքների և այլ առարկաների նկատմամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պետական մարմինների կողմից իրականացվում է անասնաբուժական բուսական-սանիտարական և այլ տեսակի հսկողություն»:

«Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի համաձայն՝ սահմանային անցակետերում իրականացվում են բուսասանիտարական զննում, բուսասանիտարական վերահսկողություն և բուսասանիտարական ստուգում: Բուսասանիտարական զննումը բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորող առարկաների ակնադիտական հետազոտությունն է, որն իրականացվում է վնասակար օրգանիզմների առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով: «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն՝ ներմուծվող բույսերի, բուսական արտադրանքի, կարգավորող առարկաների և փոխադրամիջոցների զննումը սահմանային հսկիչ կետերում տեսչի պարտականությունն է: Սակայն պետք է փաստել, որ սովորական զննմամբ հնարավոր չէ բացահայտել վնասակար օրգանիզմները, քանի որ ակնադիտական հատազոտությամբ հնարավոր է միայն բացահայտել անզեն աչքին մատչելի վնասակար օրգանիզմները:

Ի տարբերություն զննման՝ բուսասանիտարական վերահսկողությունը և ստուգումը իրենցից ներկայացնում են ստուգում, զննում և բուսասանիտարական փորձաքննություն, որոնք նպատակաուղղված են բույսերի վնասակար օրգանիզմներից սպասվող տնտեսական վնասի սահմանափակմանը, առողջ բույսերի և բուսական արտադրանքի տեղաշարժի, պետական գրանցում չստացած օգտագործման համար ոչ պիտանի, ժամկետանց և արգելված բույսերի պաշտպանության միջոցների իրացման և օգտագործման բացառմանը: Վերահսկողությունը բաղկացած է մի շարք միջոցառումներից, սակայն պետք է փաստել, որ ստուգումը և վերահսկողությունը ներառված են տեսչի իրավունքների, այլ ոչ թե պարտականությունների մեջ, ինչով զգալիորեն վտանգի տակ է դրվում բույսերի կարանտինը և վտանգի տակ է դնում վնասական օրգանիզմների ներթափանցումը ՀՀ տարածք:

ՀՀ գյուղատնտեսության նախարարի 23.08.2007 թ. թիվ 191-Ն հրամանով հաստատված են բուսասանիտարական հսկողության ենթակա այն բոլոր ապրանքները, որոնք բաց են թողնվում սահմանային գոտիով: Եվ տվյալ դեպքում պետք է նշել, որ թեև փոխադրամիջոցները սահմանային գոտին հատելիս, «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, ենթակա են զննման, այնուամենայնիվ ներառված չեն ՀՀ գյուղատնտեսության նախարարի՝ վերը նշված հրամանով հաստատված բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների ցանկում:

Ինչպես արդեն նշվեց, բուսասանիտարական վերահսկողությունը կարանտինային միջոցառումների համալիր է, որը պետք է իրականացվի բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորող առարկաների՝ սահմանային անցակետերով տեղաշարժի ժամանակ: «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքը սահմանում է, որ ներմուծվող ապրանքի մաքսային ձևակերպումը պետք է իրականացվի միայն բուսասանիտարական հսկողությունից հետո: Դա ենթադրում է, որ սահմանային անցակետը հատելիս բուսասանիտարական հսկողության ապրանքները պետք է նախ և առաջ զննվեն և ստուգվեն բուսասանիտարական տեսչության տեսչի կողմից, որից հետո նոր անցնեն մաքսային հսկողության և ձևակերպման: Սակայն իրականում բույսերի սահմանային կարանտին հսկիչ կետերը տեղակայված են մաքսային հսկողության անցակետերից հետո, ինչի հետևանքով հաճախակի են այն դեպքերը, երբ բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքը վերահսկողությունից դուրս է մնում և հատում է սահմանային անցակետը առանց համապատասխան զննության կամ ստուգման իրականացման:

ՀՀ կառավարության 30.08.2007 թ. թիվ 1093-Ն «Բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորող առարկաների ներմուծման թույլտվության և ներմուծման, արտահանման, վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգը և ձևերը սահմանելու մասին» որոշմամբ սահմանվել է բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորող առարկաների ներմուծման թույլտվության և արտահանման ու վերաարտահանման բուսասանիտարական հավաստագրերի տրամադրման կարգը: Նշված կարգով սահմանվում է, որ բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորող առարկաների ներմուծման թույլտվությունը տրվում է մինչև բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորող առարկաների՝ ՀՀ ներմուծումը: Ներմուծման թույլտվություն ստանալու նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձինք դրա մասին հայտ են ներկայացնում բույսերի կարանտինի պետական տեսչություն: Հայտին կից փաստաթղթերում ներառված չէ արտահանող երկրի արտահանման հավաստագրի առկայության պարտադիր պահանջը, իսկ թույլտվությունը մերժվում է, միայն եթե կարանտին վնասակար օրգանիզմների դեմ պայքարելու այլընտրանքային միջոցները բացակայում են: Տվյալ դեպքում գտնում ենք, որ եթե ներմուծման թույլտվություն ստանալու հայտին կից ներկայացվի նաև արտահանող երկրի արտահանման հավաստագիրը, այսինքն՝ մինչև ապրանքը ՀՀ տարածք ներմուծելը անձը ներմուծման թույլտվություն ստանալու համար ներկայացնի նաև արտադրանքն արտադրող երկրի արտահանման հավաստագիրը, ապա դա կպարզեցնի ներմուծման թույլտվության տրամադրումը և կբացառի վնասակար օրգանիզմների՝ ՀՀ սահմանային անցակետով հատումը, ինչպես նաև կապահովի ապրանքների սահմանային անցակետերով ազատ տեղաշարժի ապահովումը:

ՀՀ տարածք ներմուծվող և բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքների հետ պարտադիր պետք է առկա լինի բուսասանիտարական հավաստագիրը, որը տրվում է ապրանքն արտահանող պետության լիազորված մարմնի կողմից: Նշված հավաստագրի հիման վրա ապրանքը ՀՀ տարածք ներմուծելիս տրվում է ներմուծման հավաստագիր: Ի դեպ, «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է բացառություններ, մասնավորապես՝ մինչև 50 կգ, իսկ սահմանամերձ տարածքներից տվյալ տարածքին բնորոշ բույսերի և բուսական արտադրանքի համար՝ մինչև 500 կգ: Բացի սերմանյութերից և տնկանյութերից՝ գյուղատնտեսական, անտառային ու գեղազարդային բույսեր ներմուծելիս արտահա-

նող երկրի բուսասանիտարական հավաստագրի և տեսչության տրված ներմուծման բուսասանիտարական հավաստագրի առկայությունը պարտադիր չէ:

Առանձնահատուկ ուշադրությանն է արժանի այն հանգամանքը, որ ըստ օրենքի՝ ֆիզիկական անձինք ուղղակի պարտավոր են իրենց ձեռքի ուղեբեռներում առկա բույսերը, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաները ներկայացնել բուսասանիտարական զննման, սակայն պրակտիկական ցույց է տալիս, որ օրենքի նշված նորմը փաստացի չի կիրառվում հայ-վրացական սահմանափակ անցակետերում: Դա կարող է ունենալ տարբեր պատճառներ, որոնցից են՝
ա/ բուսասանիտարական տեսչության հսկիչ կետը գտնվում է անձնագրային և մաքսային հսկողության կետից դուրս,

բ/ ֆիզիկական անձանց կողմից օրենքի պարտադիր պահանջը հաճախակի ուղղակի անտեսվում է՝ հիմնականում օրենքի չիմացության պատճառով,

գ/ բուսասանիտարական տեսչության հսկիչ կետում տեսչության պաշտոնատար անձին՝ տեղից բազակայության և այլ պատճառներով:

Ամեն դեպքում, բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանք ներմուծելիս տեսուչն անհրաժեշտ փաստաթղթերը ստանալուց հետո կատարում է բեռի ու փոխադրամիջոցի զննում, ստուգում է բեռի բուսասանիտարական վիճակը, համապատասխանությունը արտահանող երկրի բուսասանիտարական հավաստագրին: Անհամապատասխանության դեպքում փորձաքննություն իրականացնելու նպատակով վերցվում է փորձանմուշ՝ տեսչության լաբորատորիա կամ հավատարմագրված այլ լաբորատորիա ներկայացնելու համար⁷³: Փորձանմուշների չափաքանակը սահմանվում է՝ կախված արպրանքի տեսակից, փաթեթավորումից, տարայից և քանակից, մասնավորապես՝ առանձնացված են սերմնանյութերից, տնկանյութերից, պարենային և տեխնիկական նշանակության արտադրանքից վերցվող փորձանմուշները՝ ըստ նշված ապրանքների ներմուծման քանակության և փաթեթավորման:

Բեռնաբաժնից վերցված կետային նմուշների համասեռությունը որոշելու նպատակով դրանք մանրակրկիտ զննվում են, առանձնացվում են հայտնաբերված վնասական օրգանիզմները: Եթե հայտնաբերվում են նմուշների ակնհայտ տարբերություններ, ապա վերցվում են կրկնակի նմուշներ: Վերցված նմուշներից միջին նմուշն առանձնացնելուց հետո տեսուչը բեռի տիրոջ կամ նրա ներկայացուցչի և մաքսային ծառայողի ներկայությամբ կազմում է նմուշառման ակտ:

Նմուշների փորձաքննությունը պետք է կատարվի 24 ժամվա ընթացքում⁷⁴, սակայն կիրառվող պրակտիկական ցույց է տալիս, որ դա իրականում անհնար է, քանի որ սահմանային անցակետերում բացակայում է համապատասխան փորձաքննություն իրականացնելու համար նախատեսված լաբորատորիան. այն կենտրոնացված է և գտնվում է Երևանում, ինչը դժվարացնում է փորձանմուշը սահմանված ժամանակահատվածում ներկայացնել փորձաքննության և ստանալ փորձագետի համապատասխան եզրակացությունը, ինչը և խոչընդոտ է հանդիսանում ապրանքների ազատ տեղաշարժի ապահովման առումով:

Այն ապրանքները, արտադրանքը և կարգավորվող առարկաները, որոնց նկատմամբ հնարավոր չէ ձեռնարկել վարակազերծման և մաքրման արդյունավետ միջոցներ, դրանց տիրոջ ընտրությամբ ենթակա են վերադարձման կամ ոչնչացման⁷⁵, որի մասին տեսուչը կազմում է ակտ⁷⁶: Տվյալ դեպքում, գտնում ենք, որ վա-

⁷³ Տե՛ս ՀՀ կառավարության 08.04.2004 թ. թիվ 514-Ն որոշմամբ հաստատված կարգը:

⁷⁴ Տե՛ս «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդված:

⁷⁵ Տե՛ս նույն օրենքի 20-րդ հոդվածի 9-րդ կետը:

րակված բույսերի, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաների հետագա ճակատագիրը բեռան տիրոջ վրա թողնելու օրենսդրի ընծեռած հնարավորությունը կարող է ունենալ վտանգավոր հետևանքներ, մասնավորապես՝ ժամանակին չոչնչացված բեռը կարող է իր վարակիչ ազդեցությունը տարածել այլ առողջ բույսերի, բուսատեսակների և բուսական այլ արտադրանքի վրա: Հետևաբար գտնում ենք, որ օրենքի նշված նորմում անհրաժեշտ է կատարել փոփոխություն՝ բացառելով բեռի հանձնումը տիրոջը՝ այն իր հայեցողությամբ տնօրինելու համար:

Այլ ընթացակարգ ունի բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների արտահանման գործընթացը, մասնավորապես՝ արտահանման բուսասանիտարական հավաստագիր ստանալու համար բեռնատերը դրա մասին հայտ է ներկայացնում տեսչություն, որը հայտը սատնալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կատարում է բեռի ստուգում և տալիս արտահանման բուսասանիտարական հավաստագիր⁷⁶: Տվյալ դեպքում «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 30.08.2007 թ. թիվ 1093-Ն որոշման 4-րդ գլխի 13-րդ կետի միջև առկա է հակասություն, քանի որ կառավարության որոշումը նախատեսում է նախ՝ միայն զննություն, և երկրորդը՝ որոշմամբ սահմանված է ընդամենը մեկ աշխատանքային օրվա ժամկետ, իսկ օրենքով սահմանված է եռօրյա ժամկետ և նախատեսված է արտահանվող բեռի պարտադիր ստուգում:

Այսպիսով՝ կարծում ենք, որ բույսերը ՀՀ սահմանային անցակետերով տեղափոխելիս բույսերի կարանտինի պետական տեսչությունը չպետք է բավարարվի միայն ակնադիտական զննությամբ, դրանք պետք է պարտադիր ստուգվեն և ներկայացվեն փորձաքննության, որպեսզի բացառվի վնասակար օրգանիզմների հնարավոր ներթափանցումը: Պարտադիր զննության պետք է ենթակա լինեն նաև ավտոտրանսպորտային միջոցները: Բույսերի սահմանային կարանտինի հսկիչ կետերը պետք է տեղակայվեն մինչ ներմուծվող ապրանքի՝ մաքսային հսկողության ներքո անցնելը, և բուսասանիտարական հսկողությունը օպտիմալացնելու և այդպիսի հսկողության ենթակա ապրանքների ազատ տեղաշարժը անհիմն չսահմանափակելու նպատակով անհրաժեշտ է ապահովել համապատասխան լաբորատորիաների առկայությունը անմիջականորեն սահմանային անցակետերում, ինչպես նաև բույսերի ներմուծման թույլտվության հայտ ներկայացնելիս հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը անհրաժեշտ է համալրել արտահանող երկրի արտահանման հավաստագրով, ինչը կպարզեցնի և դյուրին կդարձնի հսկողության իրականացումը, ուղղակիորեն կապահովի նման ապրանքների ազատ տեղաշարժ սահմանային անցակետերով:

2. Ապրանքների՝ սահմանային անցակետերով տեղափոխելիս անասնաբուժական և սննդի անվտանգության հսկողությունը

ՀՀ սահմանային անցակետերում իրականացվում է նաև գյուղատնտեսական կենդանիների, կենդանական ծագման հումքի և մթերքի, անասնաբուժական դեղամիջոցների, կերերի և լրացակերների արտահանման և ներկրման հսկողու-

⁷⁶ Վտանգավոր բույսերի, բուսական արտադրանքը և կարգավորվող առարկաների ոչնչացումը պետք է իրականացվի ՀՀ կառավարության «Վտանգավոր սննդամթերքի, սննդամթերքի հետ շփվող վտանգավոր նյութերի և վտանգավոր սննդային հավելումների ախտահանման և ոչնչացման կարգը սահմանելու մասին» 12.07.2007 թ. թիվ 824-Ն որոշմամբ սահմանված կարգով:

⁷⁷ Տե՛ս «Բուսասանիտարիայի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ կետ:

յուն, որի կարգը և պայմանները սահմանվում են «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքով, միջազգային պայմանագրերով և այլ իրավական ակտերով:

Անասնաբուժության բնագավառի օրենսդրության պահանջների կատարման և կարանտինի իրականացման նկատմամբ վերահսկողություն իրականացնող լիազորված մարմին է հանդիսանում ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժական պետական տեսչությունը⁷⁸:

ՀՀ սահմանային անցակետերով վարակիչ կենդանիների տեղաշարժը կանխելու և կարանտինային հսկողության համար իրականացվում է անասնաբուժական պետական վերահսկողություն ՀՀ պետական սահմանի անցման կետերում՝ երկրի տարածք ներմուծվող և երկրից արտահանվող կենդանիների, կենդանական ծագման մթերքի և հումքի, կերերի, լրացակերերի, մանրէական տարատեսակների, անասնաբուժական միջոցների և անասնաբուժական դեղամիջոցների, ինչպես նաև կենդանիների վարակիչ հիվանդությունների հարուցիչներ կրող նյութերի ու առարկաների նկատմամբ⁷⁹:

ՀՀ-ում ստեղծվել է գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության և անասնաբուժության պետական տեսչությունը⁸⁰: Տեսչության կարևորագույն խնդիրներից են օտարերկրյա պետություններից կենդանիների վարակիչ հիվանդությունների ներթափանցումը կանխելու նպատակով հանրապետության տարածքի պահպանությունը, կենդանիների տեղափոխման նկատմամբ հսկողության իրականացումը:

Տեսչությունը սահմանային անցակետերում ունի իր կառուցվածքային ստորաբաժանումները՝ սահմանային հսկիչ կետերը, որոնք անմիջապես սահմանային անցակետերում պարտավոր են իրականացնել հսկողական միջոցառումներ վերը հիշատակված ապրանքների տեղափոխության ժամանակ: Տեսչության կազմում առկա են՝ հայ-վրացական սահմանում՝ Բագրատաշենի, Բավրայի, Գոգավանի և Այրումի սահմանային հսկիչ կետերը:

Ինչպես արդեն նախորդ կետում նշել ենք, մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների և տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումը ներառում է նաև անասնաբուժական հսկողությունը, այսինքն՝ մաքսային հսկողությունը կարող է համարվել ավարտված միայն պարտադիր անասնաբուժական հսկողության ենթակա ապրանքների նկատմամբ հսկողական գործողությունների ավարտից հետո⁸¹:

«Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ անասնաբուժական պետական տեսուչը պարտավոր է ՀՀ - մաքսային սահմանի անցումային հսկիչ անասնաբուժական կետում զննել ՀՀ ներմուծվող և ՀՀ-ից արտահանվող կենդանիներին, ստուգել ներմուծվող և արտահանվող կենդանիների կենդանական ծագման մթերքի ու հումքի, կերերի, լրացակերերի, անասնաբուժական դեղամիջոցների համապատասխանությունը ներկայացվող փաստաթղթերին, անասնաբուժասանիտարական փորձաքննության համար սահմանված կարգով վերցնել փորձանմուշներ:

«Անասնապահական բեռների միջազգային և միջպետական փոխադրումների ժամանակ անասնաբուժական պետական հսկողության կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 19.08.2004 թ. թիվ 1228-Ն որոշմամբ սահմանվել

⁷⁸ Տե՛ս «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդված:

⁷⁹ Տե՛ս «Անասնաբուժության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդված:

⁸⁰ Տե՛ս ՀՀ կառավարության 21.11.2002 թ. թիվ 1915 որոշումը, որի համաձայն՝ ստեղծվել է սննդի անվտանգության տեսչությունը:

⁸¹ Տե՛ս ՀՀ մաքսային օրենսգրքի 118-րդ հոդվածը:

են անասնաբուժական պետական հսկման ենթակա բեռների միջազգային և միջ-պետական փոխադրումների ժամանակ անասնաբուժասանիտարական տեսակետից անվտանգության նկատմամբ վերահսկողության իրականացման պայմանները, ըստ որի՝ սահմանային անցակետերով բեռները ենթակա են փոխադրման միայն անասնաբուժական փաստաթղթերի առկայության դեպքում: Տվյալ դեպքում բացառություն է կազմում միայն որպես սնունդ ուղևորության ընթացքում սնվելու համար փոխադրվող ձեռքի բեռը: Անասնաբուժական փաստաթղթերը պետք է ուղեկցվեն փոխադրման ամբողջ ընթացքում: Ուղեկցվող փաստաթղթերը դասակարգվում են ըստ տեսակների, մասնավորապես՝ արտահանման և ներմուծման դեպքում անհրաժեշտ են անասնաբուժական վկայական և անասնաբուժական սերտիֆիկատ:

Նշված փաստաթղթերը ներկայացվում են միայն բնօրինակով: Դրանցում բնութագրվում են ենթահսկման բեռի և դրա բարձման վայրի անասնաբուժասանիտարական վիճակը: «Անասնաբուժական պետական հսկման ենթակա բեռների անասնաբուժական ուղեկցող փաստաթղթեր տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 04.08.2005 թ. թիվ 1241-Ն որոշմամբ սահմանվել է անասնաբուժական պետական հսկման ենթակա բեռների ներհանրապետական միջազգային փոխադրման համար պահանջվող անասնաբուժական ուղեկցող փաստաթղթերի տրամադրման ընթացակարգը: Ըստ նշված կարգի՝ անասնաբուժական վկայականները և անասնաբուժական տեղեկանքը տրվում են անասնաբույժի կողմից, որոնք ստորագրվում և վավերացվում են համապատասխան կնիքով, իսկ անասնաբուժական սերտիֆիկատը տրվում է սահմանային անասնաբուժական հսկիչ կետի անասնաբուժական տեսչի կողմից: ՀՀ-ից արտահանվող (բացառությամբ ԱՊՀ երկրների) ենթահսկման բեռների անասնաբուժական վկայականն անասնաբուժական պետական տեսչության սահմանային անասնաբուժական հսկիչ կետերի կողմից փոխարինվում է անասնաբուժական սերտիֆիկատով, իսկ ներկրվող բեռների՝ արտահանող երկրների անասնաբուժական սերտիֆիկատն անասնաբուժական պետական տեսչության սահմանային անասնաբուժական հսկիչ կետում փոխարինվում է համապատասխան ձևերի անասնաբուժական վկայականներով: Կենդանիների փոխադրման դեպքում անասնաբուժական վկայականին, անասնաբուժական տեղեկանքին, անասնաբուժական սերտիֆիկատին կցվում է կենդանիների ցանկը, որում նշվում են ապրանքային կենդանիների համարները և մականունները, իսկ տոհմային կենդանիների դեպքում՝ սեռը, ցեղը, հասակը:

Սահմանային հսկիչ անասնաբուժական կետի հերթապահ անասնաբույժը կատարում է տարանցիկ բեռի զննում, ստուգում փաթեթավորման ամբողջականությունը, տեսակավորման համապատասխանությունը տրանսպորտային փաստաթղթերին, արտահանող երկրի անասնաբուժական սերտիֆիկատի բնօրինակի առկայությունը, անասնաբուժական հսկողություն իրականացնելու նպատակով՝ ՀՀ ներմուծվող ենթահսկման բեռներից նմուշներ և փորձանմուշներ վերցնելը վերապահվում է անասնաբուժական և անասնապահական պետական տեսչության տեսուչների իրավասությանը, ինչպես նաև իրականացնում է պարտադիր անասնաբուժական հսկողության ենթակա ապրանքների ներմուծման և արտահանման ժամանակ իրականացվող ձևակերպումները⁸²: Այսինքն՝ տվյալ դեպքում փորձաքննության համար փորձանմուշներ վերցնելը հանդիսանում է ոչ թե պարտականություն, այլ իրավունք, ինչն ընդունելի չէ, քանի որ երբեմն պարտադիր անասնաբուժական հսկողության ենթակա մթերքը կարող է պարունակել անզեն աչքին ան-

⁸² Տե՛ս ՀՀ կառավարության 19.08.2004 թ. թիվ 1228-Ն որոշմամբ սահմանված կարգը:

մատչելի վիրուսակիր օրգանիզմներ, որոնք ի հայտ կարող են գալ միայն համապատասխան փորձաքննություն իրականացնելիս:

Նշենք, որ ենթահսկման բեռների ներմուծումն իրականացվում է համապատասխան թույլտվության հիման վրա, բեռի տերը մինչև դրա ներմուծման թույլտվության ձևակերպումը ոչ պակաս, քան 15 օր առաջ, իսկ կենդանիներ ներմուծելիս՝ 30 օր առաջ, գրավոր դիմում է անասնաբուժական և անասնապահական պետական տեսչություն՝ նշելով բեռի բնութագրերը, ներմուծման նպատակը, ծագման երկիրը, ներկրման կետերը, պահպանման, կարանտինի վայրերը և այլ տեղեկություններ՝ դրանք ներկայացնելով բնօրինակով: Պետական տեսուչը 8-օրյա ժամկետում քննության է առնում ներմուծող ենթահսկվող բեռների փաստաթղթերը և քննարկման արդյունքների հիման վրա ընդունում է որոշում ներմուծման թույլտվություն տալու կամ մերժելու մասին:

Մերժում կարող է տրվել, միայն եթե արտահանող երկրներում առկա է կենդանիների համաճարակային վիճակ, և այն վատթարացել է, ներմուծվող բեռներում առկա են ՀՀ-ում արգելված քիմիական և կենսաբանական նյութեր, բացակայում են ներմուծման համար անհրաժեշտ փաստաթղթերը, կամ դրանք ներկայացվել են ոչ հավաստի տվյալներով:

Մերժման վերջին կետի վերաբերյալ առկա է անհասկանալի իրավիճակ, մասնավորապես՝ անհասկանալի է, թե կառավարությունը նշված կարգը սահմանելիս ինչ է նկատի ունեցել «ոչ հավաստի տվյալներ» արտահայտության ներքո: *Տվյալ պարա այում որպեսզի լիազոր մարմինը համոզվի տվյալների հավաստիության մեջ, պետք է իրականացվեն համապատասխան հսկողություն և ստուում, իսկ դա հնարավոր չէ, քանի դեռ բեռը չի անցել մաքսային հսկողության ոտի:*

ՀՀ-ից պարտադիր անասնաբուժության ենթահսկման բեռների արտահանումն իրականացվում է պետական տեսչի գրավոր թույլտվության հիման վրա, բացառություն է կազմում քաղաքացիներին պատկանող ընտանի ոչ մթերատու մանր կենդանիների երկու գլխից ոչ ավելի արտահանումը: Արտահանումից առաջ անհրաժեշտ է ներմուծող երկրի անասնաբուժական պետական ծառայությունից ստանալ անասնաբուժական պահանջներին համապատասխանող փաստաթղթեր, որոնք արտահանումից առաջ ներկայացվում է անասնաբուժական և անասնապահական պետական տեսչություն:

Ելնելով ներկրող երկրի անասնաբուժական պահանջների կատարման, բեռի բնութագրերի, համապատասխան վարչատարածքի համաճարակային վիճակից և լաբորատոր հետազոտությունների կատարման հնարավորությունից՝ 7 օրվա ընթացքում քննարկվում է արտահանման ենթակա բեռի վերաբերյալ ներկայացված դիմումը, և տրվում է արտահանման թույլտվություն կամ արգելք:

ՀՀ տարածքից անասնապահական բեռներն արտերկիր արտահանվում են միայն անասնաբուժական սերտիֆիկատով, որը ձևակերպում է սահմանային հսկիչ անասնաբուժական կետի հերթապահ անասնաբույժը: Տվյալ դեպքում նույնպես առկա է բացառություն, որը գործում է ԱՊՀ անդամ երկրների համար, որտեղ ենթահսկման բեռներն ուղեկցվում են համապատասխան անասնաբուժական վկայականներով, սակայն գտնում ենք, որ անհրաժեշտ է բոլոր երկրների համար, առանց բացառության, սահմանել մեկ փաստաթուղթ և ձևակերպման մեկ կարգ:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի մաքսանենգ ծանապարհով և անասնաբուժասանիտարական պահանջներին չհամապատասխանող բեռների ներմուծման ժամանակ իրականացվող միջոցառումները: Մասնավորապես՝ մաք-

սանենգ ճանապարհով ներմուծված բեռի հայտնաբերման դեպքում բեռը կանգնեցրած մարմինը պարտավոր է անհապաղ տեղեկացնել տարածքը վերահսկող անասնաբուժական պետական հսկողության մարմնին, և մինչև վերջինիս կողմից անասնաբուժական հսկողության անցկացումը կանգնեցված բեռի նկատմամբ որևէ գործողություն չի թույլատրվում: Անասնաբուժասանիտարական պահանջներին չհամապատասխանող բեռի հայտնաբերման և կանգնեցման դեպքերում այն ենթակա է վերադարձման կամ անասնաբուժասանիտարական փորձաքննության՝ նրա հետագա օգտագործման հնարավորությունը որոշելու նպատակով:

Տվյալ դեպքում գտնում ենք, որ եթե պարտադիր ենթահսկման ենթակա ապրանքը ՀՀ տարածք է ներմուծվել մաքսանենգ ճանապարհով կամ առանց համապատասխան փաստաթղթերի, ապա անկախ փորձաքննության արդյունքներից նշված բեռը ենթակա է վերադարձման արտահանող երկրի տարածք կամ ոչնչացման՝ անորակության բացահայտ նշանների առկայության դեպքում:

Վերոգրյալի հիման վրա կարելի է բացահայտել ՀՀ սահմանային անցակետերով՝ պարտադիր անասնաբուժական վերահսկողության ենթակա ապրանքների՝ մթերքի, կենդանիների, տեղաշարժի ժամանակ առկա հնարավոր խնդիրները՝ բեռը սահմանային անցակետով բաց թողնելիս տեսուչները պարտադիր պետք է իրականացնեն ոչ միայն զննություն, այլ նաև փորձաքննություն, այդ նպատակով բոլոր սահմանային անցակետերում անհրաժեշտ է տեղադրել համապատասխան լաբորատորիաներ, սահմանային անցակետերում տեղակայված անասնաբուժական պետական տեսչության հսկիչ կետերը պետք է տեղակայվեն մինչև ներմուծվող ապրանքի՝ մաքսային հսկողության ներքո անցնելը, բոլոր երկրների համար սահմանել փաստաթղթերի միատեսակ ձև և ձևակերպման միատեսակ կարգ, հստակեցնել պարտադիր անասնաբուժական վերահսկողության ենթակա ապրանքի ներմուծման ժամանակ մերժման դեպքերը, պայմանները, որոնք ուղղակիորեն կազդեն ապրանքների ազատ տեղաշարժի իրականացմանը:

3. Վայրի կենդանիների և դրանց հավաքածուների տեղափոխումը սահմանային անցակետով (տեղաշարժի բնապահպանական խնդիրներ)

Նշենք, որ խոսելով սահմանային անցակետով ապրանքների տեղաշարժի դեպքում ֆիտոսանիտարական և անասնաբուժական հսկողության մասին առանձին խնդիր է բարձրացվում՝ կապված վայրի կենդանիների, դրանց հավաքածուների և անհետացող բույսերի տեղափոխման հետ, նկատելով, որ դրանք ուղղակիորեն կապված են ՀՀ շրջակա միջավայրի պահպանության խնդիրների հետ:

ՀՀ կենդանական աշխարհը ազգային հարստություն է, այն բնության ամբողջականությունն ապահովող կարևոր տարրերից է, դրա էկոլոգիական հավասարակշռության և ներդաշնակ զարգացման երաշխիքը: Կենդանական աշխարհի պահպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում հասարակական հարաբերությունները կարգավորվում են ՀՀ Սահմանադրությամբ, «Կենդանական աշխարհի» մասին ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով:

Այսպես, ՀՀ-ից վայրի կենդանիների արտահանումը, ներմուծումն ու դրանց պահումը անազատ պայմաններում, ինչպես նաև կենդանաբանական հավաքածուների կամ առանձին նմուշների արտահանումը և ներմուծումը իրականացվում է

պետական լիազորված մարմնի թույլտվությամբ⁸³ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ ՀՀ տարածքից արտահանելու և ՀՀ տարածք ներմուծելու կարգի» մասին ՀՀ կառավարության թիվ 1174-Ն որոշմամբ սահմանվել է ՀՀ տարածքից վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ (այսուհետ՝ վայրի կենդանիներ) արտահանելու և ներմուծելու կարգը: Այդ կարգով սահմանված դրույթները չեն տարածվում անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիայով կարգավորման ենթակա վայրի կենդանիների, դրանց մասերի և ածանցյալների սահմանով տեղաշարժի հարաբերությունների վրա⁸⁴: ՀՀ տարածքից վայրի կենդանիների արտահանումն ու ներմուծումն իրականացվում է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից տրված թույլտվության հիման վրա: ՀՀ տարածքից վայրի կենդանիների արտահանման և ներմուծման թույլտվություն ստանալու համար ֆիզիկական և իրավաբանական անձինք ՀՀ բնապահպանության նախարարություն են ներկայացնում հայտ, որին կից նաև՝ արտահանվող կամ ներմուծվող կենդանու ծեռքերումը (հավաք, որս, մթերում, գնում և այլն) հաստատող փաստաթղթերի պատճենը, անասնաբուժական կարանտին իրականացնող համապատասխան ՀՀ և արտերկրյա լիազորված մարմնի կողմից տրված թույլտվության վկայականի կամ սերտիֆիկատի պատճենը, ինչպես նաև ներմուծման երկրի համաձայնությունը կամ թույլտվությունը (պատճենը), եթե այդ երկրի օրենսդրությամբ սահմանված է համապատասխան կարգ, իսկ ներմուծման դեպքում՝ արտահանող երկրի համաձայնությունը արտահանման համար կամ դրանց փոխարինող փաստաթղթերը՝ մաքսային հայտարարագիր կամ այլ: Հայտն ստանալուց 10-օրյա ժամկետում, իսկ վերարտադրված կամ բուծված ձկների արտահանման դեպքում՝ 2-օրյա ժամկետում ՀՀ բնապահպանության նախարարությունը անձանց (հայտ ներկայացնողին) տալիս է համապատասխան թույլտվություն, իսկ մերժման դեպքում՝ գրավոր տեղեկացնում է մերժման պատճառների մասին: Հայտը կարող է մերժվել, եթե բացակայում են վերը նշված փաստաթղթերը, եթե հայտում նշված են արտահանող կամ ներմուծող երկրների ու միջազգային կարմիր գրքում գրանցված հազվագյուտ և անհետացման վտանգված վայրի կենդանիները⁸⁵:

Առանձին դեպքերում տվյալ վայրի կենդանու արտահանման կամ ներմուծման բնապահպանական նպատակահարմարությունը որոշելու համար ՀՀ բնապահպանության նախարարության կողմից հարցում է արվում համապատասխան կազմակերպություններին, կամ կազմակերպվում են մասնագիտական քննարկումներ՝ դրանց մասնակից դարձնելով գիտական և շահագրգիռ կազմակերպությունների մասնագետներին: Մասնագիտական քննարկման ենթակա են նաև արտահանող կամ ներմուծող երկրների և միջազգային «կարմիր գրքերում» գրանցված հազվագյուտ ու անհետացման վտանգված վայրի կենդանիների՝ գիտահետազո-

⁸³ Տե՛ս «Կենդանական աշխարհի» մասին 03.04.2000 թ. ՀՀ օրենքի 21-րդ հոդվածը:

⁸⁴ ՀՀ կառավարության որոշումը անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական և բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին կոնվենցիայով կարգավորման ենթակա վայրի կենդանիները և բույսերը, դրանց մասերն ու ածանցյալները ՀՀ տարածքից արտահանելու և ՀՀ տարածք ներմուծելու թույլտվությունների (հավաստագրերի) տրամադրման կարգը և թույլտվության (հավաստագրի) ու հայտի ձևերը հաստատելու մասին, # 1281, 22.10.2009 թ.:

⁸⁵ ՀՀ կառավարության որոշումը վայրի կենդանիներ և կենդանաբանական հավաքածուներ ու առանձին նմուշներ ՀՀ տարածքից արտահանելու և ՀՀ տարածք ներմուծելու կարգի մասին # 1174, 18.07.2002 թ.:

տական, արհեստական և բնական պայմաններում դրանց վերարտադրության նպատակներով արտահանման կամ ներմուծման համար ներկայացված հայտերը:

Վայրի կենդանիների արտահանման և ներմուծման թույլտվություններին համապատասխան արտահանման և ներմուծման գործընթացի նկատմամբ վերահսկողությունը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և իր իրավասությունների սահմաններում իրականացնում է ՀՀ բնապահպանության նախարարությունը:

Նկատենք, որ հայ-վրացական սահմանային անցակետերով այս կատեգորիայի ապրանքների՝ կենդանիների տեղաշարժի նկատմամբ պատշաճ հսկողությունը կապահովի ՀՀ բնապահպանական անվտանգությունը, սակայն պետք է ուշադրություն դարձնել նաև օրինական ճանապարհով դրանց ազատորեն տեղափոխման հնարավորության հարցին:

4. Անձանց և ապրանքների՝ սահմանային անցակետերով տեղափոխելիս սանիտարական-հակահամաճարակային անվտանգության հսկողությունը

ՀՀ սահմանային անցակետերով անձանց և ապրանքների տեղաշարժի դեպքում սահմանային անցակետերում իրականացվում է նաև սանիտարահամաճարակային⁸⁶ հսկողություն բնակչության սանիտարահամաճարակային անվտանգությունն ապահովելու նպատակով, որն իրականացվում է «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման և շրջակա միջավայրի առողջացման պետական, տեղական նպատակային ծրագրերի իրագործմամբ, բնակչության առողջական վիճակի, հիգիենիկ և համաճարակային իրադրության, իրականացվող սանիտարականիսարգելիչ միջոցառումների մասին հավաստի լիարժեք տեղեկատվությամբ, պետական կառավարման մարմինների, ձեռնարկությունների, հիմնարկների, կազմակերպությունների, պաշտոնատար անձանց և քաղաքացիների կողմից ՀՀ օրենսդրությամբ սահմանված սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմատիվների պարտադիր պահպանմամբ, ինչպես նաև սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների իրականացմամբ: ՀՀ սանիտարական օրենսդրությունը տարածվում է ՀՀ-ում գտնվող օտարերկրյա քաղաքացիների և քաղաքացիություն չունեցող անձանց, ինչպես նաև ՀՀ տարածքում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող այլ պետությունների ձեռնարկությունների, կազմակերպություններին և քաղաքացիներին պատկանող ձեռնարկությունների վրա: Սանիտարական կանոնները և հիգիենիկ նորմատիվները սահմանում են բնակչության համար շրջակա միջավայրի անվտանգության և ոչ վնասակարության չափանիշներն ու մարդու կենսագործունեության համար բարենպաստ պայմանների ապահովման պահանջները: Սանիտարական կանոնների կատարումը պարտադիր է պետական մարմինների, անձանց և քաղաքացիների համար, այդ թվում՝ սահմանային անցակետը հատող քաղաքացիների համար:

Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման բնագավառում ՀՀ կառավարությունն իրականացնում է բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման միասնական պետական քա-

⁸⁶ Համաճարակը մարդկանց և կենդանիների վարակիչ հիվանդությունների՝ համեմատաբար կարճ ժամկետում արագորեն տարածվելու և զգալի տարածքներ գրավելու իրադրություն է, որը բնորոշվում է ընթացքի անընդատությամբ:

ղաքականություն⁸⁷: Այդ բնագավառում ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությունն իրականացնում է լիազորություններ՝ այդ թվում նաև ՀՀ - սահմանային անցակետերում՝ մասնավորապես իրականացնում է սանիտարական կանոնների մշակումն ու հաստատումը, պետական հիգիենիկ և հակահամաճարակային հսկողությունը ՀՀ տարածքում, բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման կազմակերպական մեթոդական ղեկավարում, վարակիչ և ոչ վարակիչ զանգվածային հիվանդությունների և թունավորումների կանխարգելման նպատակով սանիտարահիգիենիկ և հակահամաճարակային միջոցառումների կազմակերպում:

ՀՀ տարածքում գործող ձեռնարկությունները, հիմնարկները և կազմակերպությունները պարտավոր են տեղեկացնել ՀՀ պետական հիգիենիկ և հակահամաճարակային ծառայությանն այն գործընթացների մասին, որոնք կարող են հանգեցնել կամ հանգեցրել են սանիտարական կանոնների խախտման, պարտավոր են կատարել սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման վերաբերյալ պետական իրավասու մարմինների և պաշտոնատար անձանց որոշումները և կարգադրությունները, այդ թվում նաև ՀՀ սանիտարական օրենսդրությունը խախտող ձեռնարկությունների, հիմնարկների և կազմակերպությունների կամ դրանց առանձին կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության կասեցման վերաբերյալ որոշումները, ինչպես նաև պարտավոր են կազմակերպել իրենց աշխատողների սանիտարական կուլտուրայի բարձրացմանը նպաստող հիգիենիկ ուսուցում և դաստիարակություն⁸⁸:

Սահմանային շերտում պետական սահմանի պահպանության հետ չկապված այլ գործունեությունն արգելվում է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Համաճարակի կամ համաճարակի բռնկման դեպքում վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով սահմանային շերտում կարող է ժամանակավորապես սահմանափակվել կամ արգելվել անասնապահությունը:

Պետական սահմանը հատող անձինք, տրանսպորտային միջոցները, կենդանիները, բեռներն ու այլ գույքը ենթակա են սահմանային, սանիտարական-կարանտինային, անասնաբուժական, ֆիտոսանիտարական վերահսկողության: Վերահսկողության կազմակերպման ու իրականացման կարգը սահմանվում է Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով:

ՀՀ և օտարերկրյա պետությունների ֆիզիկական և իրավաբանական անձանց տնտեսական և այլ գործունեությունը, որն իրականացվում է պետական սահմանի հատմամբ կամ անմիջապես պետական սահմանում, չպետք է վնաս պատճառի կամ խոչընդոտի պետական սահմանի պահպանությանը կամ պահպանմանն ուղղված մյուս գործողություններին, այսինքն՝ համաճարակի և նման վտանգի դեպքում նրանց գործունեությունը չպետք է հանդիսանա տնտեսական գործունեության պատճառ:

ՀՀ կամ օտարերկրյա պետության տարածքում վարակիչ հիվանդությունների առաջացման, տարածման սպառնալիքի դեպքում ՀՀ կառավարությունը կարող է ժամանակավորապես սահմանափակել կամ դադարեցնել հաղորդակցությունը, պետական սահմանը հատող անձանց, կենդանիների, բեռների, սերմնանյութերի,

⁸⁷ «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք, 5-րդ հոդված:

⁸⁸ «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենք, 9-րդ հոդված:

բուսական և կենդանական ծագում ունեցող մթերքների բացթողումը և սահմանել կարանտին⁸⁹:

Նշենք, որ սահմանային անցակետերում սանիտարահամաճարակային հսկողությունն ուղղակիորեն կապված է ֆիտոսանիտարական և անասնաբուժական հսկողության հետ: Այդ ոլորտի հսկողությունների մասին արդեն խոսվել է սույն աշխատության նախորդ կետերում, որից զատ սահմանային անցակետերում իրականացվում է համաճարակների դեպքում, անձանց հակահամաճարակային հսկողություն՝ ՀՀ առողջապահության նախարարության աշխատակիցների կողմից:

⁸⁹ Տե՛ս «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենք, 16-րդ հոդված:

Բաժին 3.

Սահմանային անցակետերով անձանց, ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման ժամանակ վեր հանված խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկներն ու ճանապարհները

3.1. Նկատառումներ սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդիրների վերաբերյալ, Սահմանային անցակետերի աշխատանքի կազմակերպումը անձանց և պետական մարմինների շփումների «Մեկ պատուհանի» սկզբունքի կիրառմամբ

Հայաստանի և Վրաստանի սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդիրների վերահսկման նպատակով իրականացված դիտարկումների և վերլուծությունների արդյունքում ի հայտ եկան խնդիրներ, որոնք կարելի է դասակարգել երեք խմբի՝ իրավական՝ օրենսդրական, կազմակերպչական՝ վարչարարական, անհատական՝ սուբյեկտներին վերաբերվող:

Այսպիսով կարելի է արձանագրել, որ սահմանային անցակետերի կառավարման արդյունավետության ու անվտանգության նկատառումներով սահմանային անցակետերով անձանց և ապրանքների տեղաշարժի իրավական խնդիրները պայմանավորված են անցակետի հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորող օրենսդրության ոչ կատարյալ վիճակի, երբեմն տարակարծիք մեկնաբանությունների տեղիք տվող նորմերի, ինչպես նաև իրավական կարգավորման բացերի առկայությամբ: Մասնավորապես՝ կարելի է նշել, որ առկա են իրավական կարգավորման դեպքեր, որոնք հնարավորություն են տալիս տարակարծիք մեկնաբանությունների ենթարկել սահմանային անցակետով տեղաշարժվելու որոշ կանոններ, բացի այդ՝ սահմանային անցակետով տեղաշարժի հարաբերությունները կարգավորող գոծող օրենսդրությունն ունի բզկտված տեսք, առկա են նույն հարաբերությունները կարգավորող բազմաթիվ օրենքներ ու ենթօրենսդրական ակտեր: Կարծում ենք, որ դա կարող է տանել ոչ իրավաչափ պրակտիկայի ձևավորման: Այս պարագայում անհրաժեշտ ենք համարում այդ ոլորտի իրավական ակտերը համակարգել:

Վարչարարական խնդիրները պայմանավորված են այն հանգամանքով, որ սահմանի կառավարման ժամանակ՝ այն հատելիս, առաջ են գալիս բազմաթիվ հարաբերություններ տարբեր պետական մարմինների մասնակցությամբ, ինչը ենթադրում է բավականին ինտենսիվ ձևով անձանց մասնակցություն, շահերի բախումներ, անձանց իրավունքների խախտման ռիսկեր ու շատ ուրիշ խնդիրներ:

Դիտարկումները ցույց են տվել, որ սահմանային անցակետերի աշխատանքների կազմակերպման թիրախները բավականին շատ են, ուստի կփորձենք առանձնացնել դրանցից մի քանիսը՝ կապված մարդու և քաղաքացու իրավունքների խախտման համար հնարավոր ռիսկերի հետ, մասնավորապես՝ անցակետերում հսկողություն իրականացնելիս տարբեր պետական մարմինների առկայությամբ:

յունը, որը և ստիպում է անձանց սահմանը հատելիս գործ ունենալ բոլորի հետ և բարձրացնել շահերի բախման հնարավորությունը:

Նշենք, որ սահմանային անցակետով անձանց և ապրանքների տեղաշարժի դեպքում սահմանային հսկողություն և վերահսկողություն իրականացնող մարմինները պետք է առաջնահերթ պահպանեն թե՛ իրենց վրա դրված ծառայողական պարտականությունները և թե՛ սահմանը հատող անձանց իրավունքները՝ երաշխավորելով նրանց ֆիզիկական, բարոյական անվտանգությունը և այլ իրավունքների պահպանություն:

Վարչարարական խնդիրները բազմաթիվ են և տարաբնույթ: Պետք է նշել, որ օրինակ՝ սահմանային անցակետերում ֆիզիկական անձանց անձնական զննության դեպքերում ոչ բոլոր մաքսային անցակետերում կան կին մաքսային ծառայողներ, ովքեր անհրաժեշտության դեպքում կիրականացնեն սահմանը հատող կանանց զննություն:

Կամ ՀՀ մաքսային օրենսգրքի 23-րդ հոդվածով սահմանված է, որ անկախ ապրանքների և տրանսպորտային միջոցների բնույթից և քանակից՝ անձն իրավունք ունի ընտրելու կամ փոխելու մաքսային ռեժիմը, սակայն անձինք բազմաթիվ խնդիրներ են ունենում, վերարտահանում մաքսային ռեժիմի ընտրության, տրանսպորտային միջոցների ժամանակավոր ներմուծման դեպքերում: Մաքսային օրենսգիրքը սահմանում է, որ տրանսպորտային միջոցները ժամանակավորապես կարող են ներմուծվել ՀՀ մեկ տարի ժամկետով, սակայն մաքսավորները չեն ձևակերպում հայատարարագրերը կամ ձևակերպում են ստիպողաբար մեկ ամսով, երբ ուղղակի անտեսվում են օրենքների պահանջները:

Կամ օրինակ՝ սահմանային անցակետը հատելիս Վրաստանի Ջավախքի բնակիչների և նրանց տրանսպորտը սահմանային անցակետը հատելու համար սահմանվել է շատ պարզ ընթացակարգ. նրանց Վրաստանի պետհամարանիշերով մեքենաները միայն անցակետում գրանցվում են ինչ-որ մատյանում, իսկ այլ բնակավայրերի բնակիչները ստիպված են հայտարարագիր ձևակերպել: Նման արտոնությունները, իհարկե, ցանկալի և անհրաժեշտ են, իսկ ինչո՞ւ այն չի ամրագրված ՀՀ օրենքներով, որը իրավակիրառ ոչ բացասական հետևանքներ կարող է առաջ բերել:

Առկա են նաև անձանց իրավունքների խախտման այլ դեպքեր, որոնք պայմանավորված են սահմանային անցակետերի մարմինների՝ ծառայողների մասնավոր և հանրային շահերի բախման հանգամանքները հաշվի չառնելու, պարտականությունների ոչ պատշաճ կատարման, անգործության դրսևորման և շատ ուրիշ փաստերով:

Այս պարագայում գտնում ենք, որ պետական մարմինները սահմանային անցակետերում հանրային իրազեկման բավարար աշխատանքներ չեն տանում՝ կապված գործող օրենսդրության ու անցակետի կանոնների մասին հասարակությանն իրազեկելու հետ: Առավել ուշագրավն այն է, որ երբեմն անտեսվում են մարդու և քաղաքացու իրավունքների պաշտպանության հարցերը:

Օրինակ՝ ՀՀ մաքսային մարմինը մաքսային հսկողության անցակետերում՝ հայտարարությունների համար նախատեսված տեղերում, փակցրել է կառույցի «թեժ գծի» հեռախոսահամարը, սակայն նշում է, որ արդեն իսկ մեկ տարուց ավելի է, ինչ այդ «թեժ գծով» իրավունքների խախտման որևէ ահազանգ չեն ստացել, իսկ դա արդյունք է այն բանի, որ կա՛մ հասարակությունը բավարար իրազեկված չէ, կա՛մ չկա վստահություն մաքսային մարմնի հանդեպ: Եթե հաշվի առնենք, որ անձանց իրավունքների խախտման մասին խնդիրը բազմիցս շոշափվում է հասա-

րակության մեջ, և հարցումներով պարզվել է, որ ոչ բոլորն են տեղյակ այդ հնարավորության մասին, իսկ տեղեկացվածները դա համարում են ոչ արդյունավետ իրավունքների պաշտպանության միջոց, ապացուցում է վերը նշված մաքսային անցակետերում առկա խնդիրների փաստը:

Սահմանային անցակետերի աշխատանքների կազմակերպման խնդիրները բազմաթիվ են, որոնք իրենց հերթին առեւելի վտանգ են ներկայացնում թե՛ պետական և թե՛ հասարակական շահերի համա⁹⁰:

Անցակետի գործունեության խնդիրների շարքում կարելի է նաև նշել, որ չկա անցակետի պետական մարմինների և նրանց աշխատակիցների գործողությունների և անգործության անհապաղ բողոքարկման հստակ մեխանիզմ:

Ցանկանում ենք նշել, որ սահմանային և մաքսային անցակետերի անվտանգությունը երաշխավորված լինելու համար պետք է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ կոռուպցիան, լինելով սոցիալական շեղումների գազաթնակետում, կարծես թե զուգահեռաբար գոյատևում է սահմանային անցակետերի գործունեության հետ, և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումները կարծես թե չեն նկատում սահմանային անցակետերի խնդիրները⁹¹:

Այս և վերլուծության ենթարկված բազմաթիվ այլ խնդիրների պատճառ հիմնականում տեսնում ենք սահմանային անցակետի աշխատանքների կազմակերպման գործում մի քանի պետական մարմինների մասնակցությունը, որն ուղղակիորեն խոչընդոտում է նաև անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի իրավունքի իրականացումը: Գտնում ենք, որ առաջիկայում նման խնդիրների բացառման հիմնական ուղղությունը պետք է լինի սահմանային անցակետը հատելիս անձանց շփումը տարբեր պետական մարմինների աշխատակիցների հետ բացառելով, ինչի լավագույն տարբերակն է պետական մարմինների հետ շփումների՝ համագործակցության, «Մեկ պատուհանի» սկզբունքի կիրառումը սահմանային անցակետերում:

Նշենք, որ «Մեկ պատուհանի» սկզբունքը համարվում է առևտրի խթանման միջոցներից մեկը: Այս սկզբունքի կիրառումը սահմանային անցակետերի աշխատանքներում նախ թույլ է տալիս ապահովել անձանց ազատ տեղաշարժը՝ բացառելով բազմաթիվ ոչ բարենպաստ ռիսկեր, երկրորդ հերթին՝ հանդիսանում արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներին արտա-

⁹⁰ Վտանգը դրսևորվելու է կոռուպցիոն ռիսկերի, պաշտոնեական թողություն, երկրի վարկանիշի անկման և այլ ձևերով:

⁹¹ Թերևս կարելի է հիշատակել մեկ պարզ և հստակ միջազգային իրավանորմ՝ ՄԱԿ-ի՝ կոռուպցիայի դեմ պայքարի կոնվենցիայի 20-րդ հոդվածը, որը վերնագրված է «Ապօրինի հարստանալը», և ամրագրում է նորմ, ըստ որի՝ պետությունները պետք է քննարկեն այնպիսի օրենսդրական և այլ միջոցներ ձեռնարկելու հնարավորությունը, որոնք կարող են անհրաժեշտ լինել, որ քրեական իրավախախտում ճանաչվի անօրինական հարստացման արարքը, երբ դա կատարվում է դիտավորությամբ, այսինքն՝ պաշտոնատար անձի ակտիվների նշանակալից ավելացումը, որը գերազանցում է նրա օրինական եկամուտները, և որը նա չի կարող խելամտորեն հիմնավորել: Այստեղ հարց է ծագում՝ եթե սահմանային անցակետի աշխատանքներում ներառված պետական ծառայողները այնտեղ աշխատում են արդեն իսկ մեկ տասնամյակից ավել կամ մոտ քսան տարի և վարձատրվում են համեմատաբար քիչ, ցածր, ապա ինչպիսի՞ օրինական եկամուտներով են նրանք ձեռք բերում թանկարժեք ավտոմեքենաներ և կամ բնակարան ու այլ գույք: Այս հարցին պետք է մոտենալ, բավականին խիստ ձևով:

Կոռուպցիայի դեմ պայքարելու համար տարբեր երկրներում, այդ թվում նաև մեր հարևան Վրաստանում ներկայումս իրականացվում են բազմաթիվ միջոցառումներ, մասնավորապես՝ սահմանային անցակետի աշխատակիցների համար սահմանված է, որ աշխատանքի ավարտից հետո չպետք իրենց մոտ ունենան, ասենք, 20 եվրոն գերազանցող գումար, այդ պահանջի խախտումը կդիտվի կոռուպցիոն երևույթ: Կարծում ենք՝ նման պրակտիկայի կիրառումը մեր երկրի համար նույնպես արդյունավետ կլինի:

համման և ներմուծման հետ կապված բոլոր տեսակի փաստաթղթերը ներկայացնելու և ստանալու դրանք մեկ վայր կամ մեկ պետական մարմին, ապահովելով այս առումով ապրանքների ազատ տեղաշարժ:

Այս սկզբունքի կիրառումը թույլ է տալիս էականորեն բարձրացնել երկրի պետական մարմինների աշխատանքի և նրանց գործառույթների տնտեսական արդյունավետությունը՝ փաստաթղթերի ձևակերպման վրա ծախսվող ժամանակի և ծախսերի նվազեցման միջոցով:

Նշենք, որ սահմանային անցակետերում «Մեկ պատուհանը» պետք է համդիսանա տեղեկատվական կենտրոն, որը համապատասխան մարմիններին տեղեկատվություն է փոխանցում անհրաժեշտ հսկողական և վերահսկողական գործողությունների իրականացման, սահմանը հատող անձանց և արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողների հաշվառման, սահմանային անցակետը հատելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ձևակերպման ու անհրաժեշտ այլ աղբյուրների վերաբերյալ:

Սահմանային անցակետերի ներկայիս դասական ձևով կազմակերպման դեպքում անձինք ստիպված են գործ ունենալ մի քանի պետական մարմինների հետ, ձևակերպումներ և հսկողություն անցնելու նպատակով լինել տարբեր վայրերում, համապատասխան թույլտվություններ ու այլ փաստաթղթեր ստանալու կամ ընթացակարգերով անցնելու համար⁹²: Մի խոսքով, այն հնարավորություն է ընձեռում անձանց սահմանը հատել ավելի պարզեցված հսկողություն անցնելու և պարզեցված կերպով ձևակերպումներ ու փաստաթղթեր ստանալու եղանակով:

Կարծում ենք, որ սահմանային անցակետերում «Մեկ պատուհանի» սկզբունքի կիրառման դեպքում կմիասնականացվի ՀՀ մաքսային, սննդի անվտանգության՝ անասնաբուժական, ֆիտոսանիտարական, կարանտինային, սահմանապահ և անձնագրային ծառայությունների աշխատանքների կազմա-

⁹² Սահմանային անցակետում «Մեկ պատուհանը» կարելի է բնութագրել այնպես, որ այն միասնական օբյեկտ է, որը թույլ է տալիս սահմանը հատողներին և արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներին օգտվել ստանդարտացված տեղեկատվությունից և ներկայացնել փաստաթղթերը մեկ միասնական պետական մարմին, որի նպատակն է սահմանը հատելիս և կամ արտահանման, ներմուծման և տարանցիկ գործառնությունների դեպքում դրանց հետ կապված բոլոր գործողություններն ու ձևակերպումներն իրականացնել մեկ վայրում: Նշենք, որ եթե տեղեկատվությունը էլեկտրոնային բնույթի է, ապա տվյալների առանձին տարրերը կարող են ներկայացվել ընդամենը մեկ անգամ, ասենք օրինակ՝ դեպի Վրաստան ուղևորներ պարբերաբար տեղափոխող միկրոավտոբուսը, որը լիցենզավորված տաքսի ծառայություն է մատուցում, ներկայացնում է տրանսպորտային միջոցի և իր գործունեությանը վերաբերող փաստաթղթերը մեկ անգամ, և այն յուրաքանչյուր դեպքում սահմանը հատելիս այլևս չի ներկայացվում:

Բացի այդ, տեղեկատվական համակարգը հնարավորություն կտա միասնականացնել տարբեր պետական մարմինների ունեցած տեղեկատվությունը՝ ստեղծելով միասնական էլեկտրոնային, օնլայն տեղեկատվական բազա, հնարավորություն տալով տարբեր վարչական մարմիններին՝ օպերատիվ ձևով ստանալու տեղեկատվական փոխօգնությունը այլ պետական մարմնից և այն օգտագործել անցակետի աշխատանքների կազմակերպման և, ինչու չէ, անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման համար: Ասենք, օրինակ, ՀՀ մաքսային մարմնի տեղեկատվական բազայից օգտվելու հնարավորություն կստանա ՀՀ սահմանապահ ծառայությունը կամ նույնիսկ ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը:

Նշենք նաև, որ սահմանային անցակետերում մեկ պատուհանի սկզբունքի կիրառման պրակտիկա առկա է շատ պետությունների սահմաններին, օրինակ՝ Նորվեգիա-Շվեդիա սահմանային և այլ վայրերում, որտեղ տարիներ շարունակ այն արդյունավետորեն գործում է:

կերպումը անցակետում: Իսկ այն իրագործելի է շատ պարզ եղանակով. տարբեր պետական մարմինների լիազորությունները կաատվիրակվեն մեկ մարմնի, որն էլ սահմանային անցակետում կիրականացնի այդ բոլոր մարմինների լիազորությունները համապատասխան ղեկավար-հսկողության իրականացմամբ⁹³:

Մեկ պատուհանի կիրառումը սահմանային անցակետերում հնարավորություն կտա զարգացնելու անցակետի աշխատանքի կազմակերպումը՝ պարզեցնելով վարչարարական մեխանիզմները, ինչպես նաև հնարավորություն կընձեռվի այդ նպատակով ավելի լայնորեն կիրառել նորագույն ինտերնետային տեխնոլոգիաները⁹⁴:

«Մեկ պատուհանի» սկզբունքով գործող սահմանային անցակետերում հնարավորություն է ստեղծվում նաև սահմանել բոլոր ծառայությունների համար վճարների գանձման պարզ մեխանիզմներ և մատչելի կետեր⁹⁵:

Այնուամենայնիվ, պետք է նշել, որ երկու երկրների՝ Հայաստանի և Վրաստանի կողմից սահմանային անցակետերի մեկ պատուհանի սկզբունքով աշխատանքի պարագայում կշահի անձանց ազատ տեղաշարժի իրավունքի ապահովումը, ինչպես նաև «Մեկ պատուհանի» սկզբունքը թույլ կտա երկու հարևան երկրներին համագործակցել նաև արդարադատության, միջազգային հանցավորության դեմ պայքարի ոլորտներում:

Կուզենայինք նկատել, որ սովորաբար առկա են «Մեկ պատուհանի» սկզբունքի կիրառման երեք հիմնական մեխանիզմներ: Առաջինը մեկ միասնական մարմնի ստեղծումն է, երկրորդը՝ տեղեկատվության հավաքագրման և տարածման համար մեկ միասնական մարմնի ստեղծումը, և երրորդը ավտոմատացված տեղեկատվական-գործառնական համակարգի ստեղծումն է⁹⁶:

⁹³ Նշենք, որ «Մեկ պատուհանի» սկզբունքի իրականացման համար կարող են լինել երկու մոդելներ, որոնք կապահովեն սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժը՝ բացառելով տարբեր մարմինների հետ շփումները: Առաջին դեպքում այն կիրառվում է միայն հայաստանյան անցակետում և այնտեղ գործող պետական մարմինների շրջանակում, երկրորդ դեպքում այն կարող է կիրառվել Վրաստանի հետ համատեղ և ունենալ երկու պետությունների անցակետերի համար միասնական մեկ պատուհան, որն էլ կապահովի ոչ միայն մեկ պատուհան հայկական անցակետում, այլև միասնական մեկ պատուհան երկու պետությունների անցակետերում, որն էլ առավելագույն ձևով կապահովի ազատ տեղաշարժի իրավունքի իրացումը: Այս եկրորդ պարագայում անհրաժեշտություն կստեղծվի Հայաստանի և Վրաստանի միջև կնքել համաձայնագիր սահմանային անցակետերի մեկ պատուհան ստեղծելու համար, որի պարագայում մեկ պետություն իրականացնում է հսկողություն և ձևակերպում, որից հետո մյուս կողմում այդպիսի անհրաժեշտություն չի լինում, կամ կարելի է նաև ստեղծել մեկ պատուհանով մեկ միասնական անցակետ երկու պետությունների համար:

⁹⁴ Նման կատարելագործումը հնարավորություն կտա ապրանքներ ներկրելիս կամ արտահանելիս օգտվել ապրանքների էլեկտրոնային (ինտերնետի միջոցով) հայտարարագրման հնարավորությունից և դրա ներդրման նախապայման կարող է հանդիսանալ:

⁹⁵ Հայ-վրացական սահմանային անցակետերում կատարվող մաքսային և այլ պարտադիր վճարները գանձելու համար առկա է ՀՀ առևտրային որևէ բանկի փոքրիկ մասնաճյուղ, սակայն հարկ է նշել, որ սահմանային անցակետերում պետք է ստեղծել ՀՀ պետական գանձապետական գրասենյակ, ուր անձինք կկատարեն իրենց վճարումները, կամ օրենքով ամրագրեն այն հանգամանքը, որ անցակետերում պետք է լինի որևէ բանկի մասնաճյուղ:

⁹⁶ Օրինակ՝ Շվեդիայի և Նորվեգիայի համագործակցության պարագայում կիրառում են այս երեք սկզբունքներից վերջին երկուսը: Այսինքն՝ արտաքին առևտրային գործակալները կարող են ապրանքների վերաբերյալ տեղեկատվությունը (հայտարարագիր և այլն) մեկ անգամ ներկայացնել մեկ միասնական մաքսային մարմին, որն էլ իր հերթին այդ տեղեկատվությունը բաշխում է այլ շահագրգիռ մարմինների միջև ինչպես Շվեդիայում, այնպես էլ Նորվեգիայում: Երկրորդ տարբերակի դեպքում արտաքին առևտրային գործակալները առևտրային գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացնում են էլեկտրոնային տարբերակով՝ ինտերնետի միջոցով: Այս դեպքում ավտոմատացված համակարգին հասանելիության իրավունք ունեն բոլոր շահագրգիռ կողմերը, ինչի արդյունքում տեղեկատվությունը «Մեկ պատուհանի» միջոցով հասնում է բոլոր շահագրգիռ կողմերին: Որպես մեկ միասնական տեղեկատվական մարմին՝ հանդես են գալիս երկու երկրների մաքսային ծառայությունները:

Կարծում ենք, որ Հայաստանի սահմանային անցակետերում «Մեկ պատուհանի» սկզբունքը պետք է ներդնել հիշյալ մեխանիզմներից առաջինի և երրորդի նախնական ներդրմամբ: Գտնում ենք, որ անհրաժեշտ է, օրինակ, սահմանային անցակետերում ստեղծել մեկ պատուհանի ապահովման միասնական մարմին, իսկ առկա մարմինների լիազորությունները պատվիրակել այդ մարմնին: Հնարավոր ենք համարում ՀՀ ոստիկանության լիազորությունները պատվիրակել ՀՀ սահմանապահ զորքերին՝ ստեղծելով անձնագրային և սահմանապահ հսկողության մեկ մարմին, իսկ սահմանապահության տնօրինային, ֆիտոսանիտարական ու այլ հսկողություններ իրականացնող մարմինների լիազորությունները պատվիրակել ՀՀ - մաքսային մարմնին՝ նույնպես ստեղծելով մեկ պատուհան, որի պարագայում անձը ցանկացած դեպքում գործ կունենա կա՛մ սահմանապահ ծառայության ներկայացուցչի, կա՛մ մաքսային ծառայողի հետ, որին հանձնելով իր փաստաթղթերը՝ այլևս որևէ տեղ վարչարարական խնդիրների չի անդրադառնա: Իսկ մեկ պատուհանի սպասարկող պաշտոնյան, վերցնելով փաստաթղթերը, անհրաժեշտության դեպքում դրանք կհանձնի այլ ծառայություններին կամ կհամեմատի տեղեկատվության հետ, և վերջում նույն ինքը՝ ընդունողը, կհանձնի պատասխանը:

Կցանկանանք նշել, որ անցակետում որևէ պետական ծառայության առավել կարևորություն տալու կամ դա բացառելու համար պետք է հաշվի առնել այդ ծառայության լիազորությունների ծավալը և արդյունքում ընդունել այն, որին մնացածի լիազորությունները պատվիրակելիս կստանանք դրական արդյունք:

Սահմանային անցակետերի աշխատանքների կազմակերպան և դրանց շրջանակում անձանց ազատ տեղաշարժի անհատական սուբյեկտներին վերաբերող խնդիրները կարելի է բաժանել պետական պաշտոններ զբաղեցնող սուբյեկտների ու սահմանը հատող կամ սահմանով ապրանքների տեղաշարժ իականացնող անձանց վերաբերող խնդիրների:

Առաջին խումբ անձանց վերաբերող խնդիրների շարքում անհրաժեշտ է նշել սահմանային անցակետերում ծառայողների համար շատ վատ աշխատանքային պայմանների առկայությունը, կապի, տրանսպորտային հաղորդակցության վատ վիճակը, ծառայողների ոչ բավարար սոցիալական ապահովությունն ու երաշխիքների բացակայությունը⁹⁷:

Իսկ երկրորդ խմբին վերաբերող խնդիրների շարքում կարելի է նշել, որ անձինք իրազեկված չեն սահմանային անցակետը հատելու, ապրանքների տեղաշարժի կանոնների մասին, անձինք, անտեղյակ լինելով սահմանային անցակետի սահմանափակումների մասին, թույլ են տալիս տարբեր իրավախախտումներ⁹⁸ և այլ խնդիրներ, որոնց լուծման պարագայում ապահովված կլինի Հայաստանի և Վրաստանի սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժը: Թերևս նշենք, որ սահմանը հատող սուբյեկտների կողմից դրսևորված

⁹⁷ Թերևս կարելի է նկատել այն հանգամանքը, որ սահմանային անցակետերում տարբեր պետական մարմինների աշխատակիցների միջին ամսական աշխատավարձը չի գերազանցում հարյուր հազար ՀՀ դրամը, որը սահմանամերձ բնակավայրում ծառայելու համար չնչին գումար է: Հիշարժան է այն պարզ օրինակը, երբ արտասահմանյան երկրներում սահմանամերձ բնակավայրերում աշխատանքի անցնելու համար առաջարկում են շատ ավելի բարձր աշխատավարձ, քան մայրաքաղաքում կամ մարզային կենտրոններում, որով խթանում են պրոֆեսիոնալ մասնագետների հոսքը դեպի սահմանային շրջաններ:

⁹⁸ Կարելի է նկատել, որ Հայաստանի և Վրաստանի սահմանային անցակետերով անձանց և ապրանքների տեղաշարժի դեպքում միայն մաքսային կանոնների ընդհանուր թվով 322 խախտումներ հայտնաբերվել են 2008 թվականին և 350-ը՝ 2009 թվականին (տվյալները՝ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ 07.06.2010 թ. թիվ17320/11-5 գրության): Կարծում ենք, որ դա մեծամասամբ սահմանային անցակետի կանոնների մասին իրազեկված չլինելու պատճառ է:

վարքագծով են պայմանավորված թե՛ սահմանը անձի կողմից հատելիս և թե՛ սահմանով ապրանքներ ներմուծելիս կամ արտահանելիս առկա բարդությունները, ինչպես նաև սահմանը հատողների անիրազեկվածության պատճառ են սահմանային անցակետերում կոռուպցիոն երևույթներով պայմանավորված խնդիրներն ու սահմանային անցակետերը հատելիս ի հայտ եկող դժվարությունները:

3.2. Եզրահանգումներ և առաջարկություններ

Հայաստանի և Վրաստանի սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հիմնախնդիրների վերլուծության շրջանակներում ի հայտ են եկել բազմաթիվ խնդիրներ՝ կապված սահմանային անցակետով տեղաշարժվելու տարբեր հարաբերությունների հետ: Ներկայումս ՀՀ պետական մարմինների կողմից իրականացվում են բազմաթիվ աշխատանքներ ոլորտի խնդիրները կարգավորելու և սահմանային անցակետերի աշխատանքների կազմակերպումը կատարելագործելու ուղղությամբ:

Այդ խնդիրների լուծման համար ներկայացնում ենք մի շարք առաջարկություններ, որոնց իրագործումը կհանդիսանա լավագույն եղանակը այդ խնդիրների բացառման, անձանց և ապրանքների հայ-վրացական սահմանային անցակետերով ազատ տեղաշարժի իրավունքի ապահովման, ինչպես նաև սահմանային անցակետերի հետ կապված պետական գործառույթների արդյունավետության բարձրացման համար:

Առաջարկում ենք՝

- նախ համակարգել սահմանային անցակետերով անձանց և ապրանքների տեղաշարժի հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը, որը կապահովի օրենսդրության հստակեցում և կայունություն, ինչպես նաև միատեսակ պրակտիկ կիրառություն,
- անհրաժեշտ է «Պետական սահմանի մասին» ՀՀ օրենքում ամրագրել հսկիչ անցակետի հստակ սահմանումը, նույն օրենքի 10-րդ հոդվածում կատարել լրացում և սահմանել հսկիչ անցագրային կետերի տեսակներ՝ պարզեցված և միջազգային,
- սահմանային անցակետը հատելիս անձանց շփումը տարբեր պետական մարմինների աշխատակիցների հետ բացառելու նպատակով անհապաղ կազմակերպել սահմանային անցակետերում պետական մարմինների հետ շփումների՝ համագործակցության **մեկ պատուհանի** սկզբունքի կիրառումը,
- հայ-վրացական սահմանին մոտ անցակետեր բացելու հարցը ժամանակավորեպ է, կարծում ենք, որ հարկավոր է անցակետեր բացել Ջիլիզա, Պրիվոլնոյե և այլ գյուղերի, ինչպես նաև սահմանի այլ հատվածներում,
- սահմանամերձ բնակավայրերում բնակվող քաղաքացիների համար անհրաժեշտ է սահմանել սահմանը հատելու առանձնահատուկ ռեժիմ՝ տարբերվող այլ քաղաքացիների համար գործող կարգից, որի պարագայում նրանք հնարավորություն կունենան հատելու սահմանը առանց որևէ խոչընդոտի, պարզեցված հսկողությամբ,
- անհրաժեշտ է ավարտին հասցնել հայ-վրացական պետական սահմանի սահմանազատման և սահմանագծման աշխատանքները,

- անձանց՝ սահմանային անցակետերով ազատ տեղաշարժի ապահովման համար ՀՀ-ում ներդնել կենսաչափական տվյալների ներառմամբ անձնագրերի կիրառումն ու անձանց տրամադրումը,
- մինչ կենսաչափական տվյալներով անձնագրերի ներդնումը ապահովել ՀՀ-ում անձնագրերի տրամադրման ավելի պարզ ընթացակարգ, հնարավորություն տրամադրել անձանց ստանալու ավելի շատ էջաքանակով անձնագրեր, քան ներկայումս են տրամադրվում,
- հայ-վրացական սահմանային անցակետերում, անմիջապես տեղում հնարավորություն ստեղծել անձանց համար օտարերկրյա պետություններում ՀՀ անձնագրերի վավերականության փաստը հավաստող ձևակերպումները իրականացնելու՝ կնիքելու, նշում կատարելու համար,
- Վրաստանի Հանրապետության հետ կնքել միջպետական դաշնագիր ազատ տնտեսական համագործակցություն ստեղծելու, միասնական համակարգված անցակետեր սահմանելու, միմյանց մաքսային արտոնություններ տրամադրելու, ազատ տեղաշարժի հետ կապված առկա համաձայնագրերը համակարգելու, միմյանց հետ սահմանային անցակետերով տեղաշարժի հետ կապված փոխօգնության կարգ սահմանելու և այլ հարաբերությունների վերաբերյալ, որոնք ուղղված կլինեն հայ-վրացական սահմանային անցակետերով ազատ տեղաշարժի ապահովմանը,
- սահմանային անցակետերով ապրանքների ազատ տեղաշարժը ապահովելու համար անհրաժեշտ է կատարել մաքսային կանոնների հստակեցում և պարզեցում՝ ապահովելով հնարավորություն ավելի կարճ ժամանակամիջոցում, առանց որևէ խոչընդոտների կատարելու սահմանային անցակետերում ձևակերպումները, որպեսզի մաքսային կանոնները, ընթացակարգերը լինեն հեշտությամբ ընկալելի, ունենան միատեսակ կիրառություն և չհակասեն միմյանց, մի խոսքով՝ անհրաժեշտ է կատարելագործել մաքսային օրենսդրությունը՝ արտաքին առևտրի բնագավառում ապահովելով նաև այն հանգամանքը, որ մաքսային սահմանի վրա հարկային օրենսդրության կիրառումը չհետապնդի ֆիսկալ նպատակ,
- մաքսային օրենսգրքում հստակ սահմանել, թե ինչ են մաքսազերծման, տրանսպորտային-մաքսային բեռնագրերի ձևակերպման և տրանսպորտային միջոցներ ներմուծելիս տրանսպորտային միջոցի զննության և ձևակերպման ընթացակարգերը, ինչ գործողություններ են դրանք ներառում, ինչպիսի փաստաթղթեր պետք է ներկայացնել, ինչպես նաև պետք է օրենքով հստակ սահմանվի մաքսատան աշխատակիցների գործառնությունները՝ կապված վերը նշված ընթացակարգերի հետ,
- ֆիզիկական անձանց ուղեբեռի զննման համար սահմանային-մաքսային անցակետերը պետք է ապահովել հատուկ տեխնիկական միջոցներով, որպեսզի ուղեբեռը զննվի միայն սարքերի միջոցով, ապահովվի առավել արագ ու ազատ տեղաշարժ,
- մաքսային օրենսդրությամբ հստակ ամրագրել ապրանքների տեղաշարժի կազմակերպման դեպքում ներմուծող-արտահանող և պետական մարմին շփման եզրերը՝ հստակ սահմանելով երկու կողմերի իրավունքներն ու պարտականությունները,
- մաքսային մի շարք գործընթացներ ավտոմատացնելով՝ նվազեցնել պետական մարմնի և ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող անձի շփումը, ստեղծել այնպիսի պայմաններ, որոնք կբացառեն պաշտոնական

շրջանցումով ստացվող որևէ առավելության ձեռքբերման հնարավորությունը, ներդնել էլեկտրոնային հայտարարագրման ինստիտուտը, կիրառելով նորագույն ինտերնետային հաղորդակցության տեխնոլոգիաները, ապահովել մաքսային ձևակերպումների և զննումների ժամանակի կրճատում, ռիսկերի գնահատման մեխանիզմների ներդրմամբ իրականացնելով նաև պատշաճ մաքսային հսկողության իրականացումը,

- ապահովել անցակետերում սանիտարական կարանտինային հսկողության աշխատանքների միասնականացումը՝ ստեղծելով այդ հսկողության ընթացքում ստուգումների, զննության ապահով եղանակներ,
- սանիտարական կարանտինային հսկողությունը օպտիմալացնելու և այդպիսի հսկողության ենթակա ապրանքների ազատ տեղաշարժը անհիմն չսահմանափակելու նպատակով պարտադիր պետք է լինի համապատասխան լաբորատորիաների առկայությունը անմիջապես սահմանային անցակետերում, ինչը կպարզեցնի և դյուրին կդարձնի հսկողության իրականացումն ու ապրանքների ազատ տեղաշարժը,
- սահմանային անցակետերում տեղակայված սանիտարակարանտինային հսկողության սահմանային կարանտին հսկիչ կետերը պետք է տեղակայվեն անցակետի մեկ տեղամասում՝ մաքսային հսկողության գոտում,
- սանիտարական կարանտինային պարտադիր հսկողության ենթարկել նաև սահմանով տեղաշարժվող ավտոտրանսպորտային միջոցները,
- սանիտարական կարանտինային հսկողություն իրականացնելու համար ներմուծման թույլտվության հայտ ներկայացնելիս հստակեցնել հայտին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, այն համալրել արտահանող երկրի արտահանման հավաստագրով, բոլոր երկրներից ներմուծման համար սահմանել փաստաթղթերի միատեսակ ձև և ձևակերպման միատեսակ կարգ, ինչը հնարավորություն կտա ավելի արագ կազմակերպել հսկողությունը՝ ապահովելով ազատ տեղաշարժ սահմանային անցակետերով,
- հստակեցնել պարտադիր սանիտարական կարանտինային վերահսկողության ենթակա ապրանքների ցանկը, ինչպես նաև դրանց ներմուծման կամ արտահանման սահմանափակման դեպքերն ու պայմանները, որոնք ուղղակիորեն կարող են ազդել ապրանքների ազատ տեղաշարժի իրականացմանը,
- ապահովել հայ-վրացական սահմանային անցակետերով անձանց և ապրանքների տեղաշարժի հետ կապված կանոնների վերաբերյալ պարբերաբար հանրային իրազեկման աշխատանքների իրականացումը,
- աշխատանքներ տանել հասարակության իրավագիտակցության մակարդակի բարձրացման ուղղությամբ. կոնկրետ այս դեպքում հայ-վրացական սահմանային անցակետերը հատող անձանց համար տպագրել գովազդային, իրազեկող տեղեկատվական նյութեր և դրանք տարածել բոլոր անցակետերում, որոնք սահմանը հատողների և ապրանքներ տեղափոխողների համար կդառնան գործնական կիրառական ուղեցույց,
- կարծում ենք, որ անհրաժեշտ է հաճախակի կազմակերպել տարբեր իրազեկող դասընթացներ, սեմինարներ թե՛ անցակետի ծառայողների և թե՛ սահմանը հատող անձանց համար, մասնավորապես՝ սահմանային անցակետերում ծառայող անձանց անհրաժեշտ է իրազեկել այլ երկրների այցելելու համար գործող ներպետական ու արտասահմանում գործող կանոնների, վի-

- զաների տրամադրման, սահմանը հատելու բոլոր միջոցառումների մասին, որը երաշխիք կլինի ազատ տեղաշարժի իրավունքի իրացման համար,
- պետք է աշխատանքներ կատարել հետևյալ ուղղություններով՝ ստեղծել կայքեր, որտեղ կպարզաբանվեն մաքսային և անցակետին վերաբերող այլ օրենսդրության առավել դժվար ընկալվող կանոնները, սահմանային անցակետերում տեղակայել շուրջօրյա գործող «թեժ գծի» հեռախոսահամարներ, անցակետերում ստեղծել տեղեկատվական կետ, որտեղ անձանց կտրամադրվի անհրաժեշտ խորհրդատվություն և այլ տեղեկատվություն, հեռուստատեսությամբ և ռադիոյով լուսաբանել օրենքներն ու տեղաշարժի կանոնները (նշենք, որ նման միջոցառումները որոշ չափով կբացառեն նաև կոռուպցիայի դեպքերը),
 - անցակետերով տեղաշարժի ժամանակ կոռուպցիոն ռիսկերը նվազեցնելու նպատակով սահմանել հասարակական վերահսկողություն՝ մոնիթորինգների անցկացման միջոցով, ընդ որում՝ մոնիթորինգ իրականացնող խմբի մեջ ներգրավել նաև պետական մարմինների ներկայացուցիչների,
 - իրականացնել կոռուպցիայի դեմ պայքարի հստակ միջոցառումներ՝ սկսած անցակետերում պետական ծառայողների ընտրության, նրանց ռոտացիայի, վարձատրության և այլ հարաբերություններից, վեջացրած պետական ծառայողներին պարբերաբար իրազեկող ծանուցումների տրամադրմամբ, որով նրանք կզգուշացվեն այն մասին, որ կոռուպցիան հանրության համար վտանգավոր բացասական հետևանք է, և կհուշեն կոռուպցիոն դրսևորումների համար իրավական պատասխանատվություն կրելու մասին, նման ծանուցում պետք է տրվի նաև նրանց աշխատանքի ընդունելիս, անհրաժեշտ է կազմակերպել դասընթացներ ծառայողների էթիկայի կանոնների ուսուցման, դրանց պահանջների պահպանման և կոռուպցիոն ռիսկերի բացառման այլ հարցերի շուրջ, սահմանը հատող անձանց հետ բարեհամբույր լիներու և նրանց նկատմամբ բայրացական վերաբերմունք ցուցաբերելու համար,
 - կատարել ճանապարհաշինական աշխատանքներ դեպի հայ-վրացական սահմանային անցակետեր տանող ավտոճանապարհների բարեկարգման համար,
 - կառուցել միջազգային չափանիշներին համապատասխան սահմանային անցումային կետեր, որը հնարավորություն կտա ավելի մեծ քանակով տեղաշարժ իրականացնել, և որ դրանց թողունակությունը կլինի բարձր,
 - ապահովել անցակետերի հարմարավետությունը, սահմանային անցակետերը հագեցնել անհրաժեշտ տեխնիկական միջոցներով, որոնք ուղղակիորեն կազդեն հսկողական աշխատանքների որակի և տևողության վրա,
 - ամենակարևորը՝ անցակետերն ապահովել պրոֆեսիոնալ, բարեկիրթ ծառայողների և տեխնիկական աշխատակիցների առկայությամբ,
 - անհրաժեշտ է անցակետի ծառայողների և սպասարկման կազմում առավել թվով ներգրավել սահմանամերձ գյուղերի բնակիչների, դրանով իսկ լուծել այդ բնակավայրերում ապրող որոշ մասնագետների զբաղվածության հարցերը,
 - անցակետերում ապահովել հասարակական առաջին անհրաժեշտության վայրերի՝ բուժկետի, հանրային սննդի, հանգստի, մոր և մանկան սենյակների, սպասասրահների, զուգարանի ու այլ անհրաժեշտ ծառայությունների

առկայությունն ու անցակետի՝ տերմինալի, սանիտարահիգիենիկ պայմաններ:

Ընդհանրացնելով ցանկանում ենք նշել, որ ժողովրդավարական հասարակությունում անձանց և ապրանքների տեղաշարժի իրավունքի ապահովման խոչընդոտներ չպետք է լինեն, քանզի այդ իրավունքի ապահովմամբ է պայմանավորված մեր ժամանակների թե՛ անձնական կյանքի զարգացումը և թե՛ մեր երկրի տնտեսության զարգացումն ու ինտեգրումը համաշխարհային տնտեսության մեջ: Գտնում ենք, որ հայ-վրացական սահմանային անցակետերով անձանց և ապրանքների ազատ տեղաշարժի հետ կապված խնդիրները պետք է լինեն ՀՀ պետական և հասարակական մարմինների ամենօրյա ուշադրության կենտրոնում՝ հաշվի առնելով այդ հատվածով տեղաշարժի բազմաթիվ առանձնահատկություններն ու նախապայմանները, անշուշտ, չանտեսելով նաև այլ սահմանային անցակետերում առկա հիշատակված նմանօրինակ խնդիրները: